




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենակ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16317

891.99

7 - 89

Ա.Զ.Ա.ՅԵՒ ՎԵՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՀ և ՎԱՐԴԻԹԵՐ

ՅՈՒՆԵԱՑ

ՊԵՐԱ ՍԱՓԱՆՉՈՍԵԱՆ ՊՈՇՏԵԱՆՑ

Աշտարակեցի

ՀԱՅՈՎԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԵՈՒՄ ԱԽՏՈՒԱՆԵԱՑԻԾ

ԵՒ Ա.Զ.Ա.ՅԵՐ ԿԱՐՈՒԴԻՄՈՒՄ ԱՄԵՐԱԲՅ. ՀԱՅՈՑ



Թ. Ի Ֆ. Լ. Ի Զ.

Ի ՀԱՅ ՑՊԱՐՈՒՔ

ԴԱՐՐԵԼԻ ՄԵԼԻ ԹԱՐՄԱԿԵՑ ԵՎ ՀԱՄԱՐԵՑԻՄԱ

ԱՆՁԻԱՑԵԱԾ:



3614

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ Тифлисъ 5. Ноября, 1860 года.

Цензоръ И. Кайтмазовъ.

ԱՇՏԱՐԱԿ ԳԻՒՂԻ

ՄԵԾԻՆ և ՓՈՔՐԻՆ

Ի ՆԵՐՆ

L.S

ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ ՈՒՆԵՑԱԾ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՈՒՐԱԽ ԵՒ ԶՈՒՄՐԹ ՄՐՏՈՒ.

Ն Ո Ւ Դ Ր Ո Ւ Մ Ե

ՊԵՐՃ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՊՈ-ՕՇԵԱՆՑ

2003

ԸՆՏԻՐ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՔ
ԻՄ ՔԱՂՅՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՔ

Չեր հողաւմը ծնել, ձեր ջրովը մնել,
Չեր օդը ծծել, ձեզից կեանք առել,
Իմ մանուկ օրերս ձեր մէջ անցրել,
Չեղեմ կրկնում այս երկու խօսքս էլ:

Չեր ինձ ցոյց տուած սէրն ու քաղցրութիւնն
Չեր այս թանկագին բարեկամութիւնն
Եռանդ ու աշխոյժ նշեց իմ հոգուն,
Անմահացնել ձեր վառքն ու անուն :

Չեր վարքն ու ընտիր ձեր սովորութիւն
Շատ ախորժ էկաւ ամէն Հայ մարդուն,
Չեր մէջ ունեցած Հայ-քրիստոնէութիւնն
Հնչումէ ոյժմ ամէն աշխարհքում:

Չեղնից լինիլս ինձ մեծ պարծանք է ,
Չեր մէջ մեռնիլս ինձ կրկին կեանք է .
Չեր գովքն երգին ինձ մեծ յարգանք է ,
Ահա իմ պտուղն , որ ձեղ խկ վառք է :

Չեղեմ նուիրում ուրեմն այս գիրքը ,
Չահէլ հաստկիա ջահէլ արդիւնքը .
Դէ ընդունեցէք սիրով հաճութեամք
Պերճի Պոօշեանց փարքիկ նու էրքը :

Մեր աղդն իր բարոյական զարդացման պատմութեան սկզբիցն արդէն ունեցել է իր օրէնքներն ու կանոնադրութիւնները, իր թէ արտաքին և թէ առանին ծէսերն ու նըրանց օրինաւոր դործադրութիւնը և ամեն ժամանակ իր հայրենի աւանդութիւնքն յարգել է : Սակայն չենք կարող ուրանալ որ այս մեր մի և նոյն ազգը ըստ այլ և այլ հանգաւմանց մեծ յեղափոխութիւնների տակ է ընկել նորա ներքին և արտաքին օրէնքներն ու ծէսերը, աւանդութիւնները, ազգային երգերը ժամանակ առ ժամանակ մի այլ տեսակ կերպարանք են ստացել, մինը մեւսի մէջ անյայտացել է և մինչեւ այս յետինիս հաստատութեան կենդրոնը համարվութիւնը շուտով վը բայ է համել մի ուրիշ փոփոխութիւն և ուրիշներին իրան ստուերի տակը ծածկել այսպիսի անհաստատ և անդադար յեղափոխութիւնների ծայրը մինչեւ մեզ հասել է .

Տեսնումենք Տիգրան սկսումէ Հայաստանին օրէնադրութիւններ տալ, զինուորաց դասն է բարեկարդում, Հաւրստութեանց միջոցները զիւրացնում, զեղեցիկ հանդերձների ձեւեր մէջ բերում : Իր երկիրը կարճ միջոցում մի օրինաւոր բարեվայելուչ փոփոխութեան տակ քցում, շատ չի անցնում, յանկարծ Մակեդոնացւոց խոռվութիւնքն են մէջ մտնում, Հայկազանց տերութիւնը բարձուումէ և Հայերը մոռանալով իրանցը, ընկնումէն օտարների ազդեցութեան տակ :

Այս անիշխանութիւնից յետոյ զօրանումէն Արշակունիք Պարթեաց ձեռքով, Վաղարշակ սկսումէ նոր բարեկարդութիւնների թեւածել, Հայաստանի ներքին և արտաքին ծէսերին մի նոր հողի է տալի, նըրանց բարոյական և քաղաքական կենաց զօրութիւնը մի նոր շրջանի մէջ է բերում, Հաւ-

յերին վառումէ աղգաշնութեան մէջ, և մինչ իրանից յետոյ սկսումնն կամաց կամաց ամրապնդիլ, արդէն Արտաշեսի օրումը Պարսից քաղաքակրթութիւնն է մէջ մանում, Հռովմայեցոց պատերազմներն են խառնուում և մոռացնել տալի Հայերին իրենց նախնական սովորութիւնքը Ակսումին մի նոր ճանապարհ բռնել, վրայ է գալի քրիստոնէութեան լոյսը և Արդարի օրումը նրանց հոգւոյ և մարմնոյ գծաղիրը մի այլ տեսակ լուսաւորութեան մէջ բերում: Կրկին անգամ Արդարից յետոյ շրջուումէ և ուրիշ ընթացք է յառաջ դալի:

Ի վերջոյ՝ Սուրբ Առևտուորչի ձեռքով քրիստոնէութեան վերահաստատուիլը, Արշակունեաց անկմանից յառաջ Մեծին Ներսիսի կանոնագրութիւնները, ազդի երկու պատականուիլը, անիշխանութիւնը, արևապաշտ Պարսից բռնակալութիւնը, Յունաց կրօնամոլութիւնը, հաւատոյ պատերազմները, Բագրատունեաց վերանորոշութիւնը և անկումը, Ռուբենեանց ազգութիւնը և շիջումը, Խաչակրաց արշաւաւանքը, Լանկմամուրների, Հագարացիների, Պարսիկների և նոյն խակ Հայոց Մեհրուժանների, Վասակների, Սուրբմակուերի ձեռքով եղած հալածանքները մեր ազգի քաղաքականութեանը, Նրա յառաջնորութեանը մի նոր տեսակ շրջան են տրամբել, ի հարկ է երբեմն չար և երբեմն բարի ըստ ժամանակին ներգործութեանց:

Այսքան և հազար այսքան անդադար արդելառիթների մէջ ևս, եթէ լաւ նայենք, մեր ազգակեցոյց, երանաշնորհ և վեհամիտ Խորենացի հօր անմահ յիշատակարանից սկսած՝ մինչեւ մեր այս յետին դարուս պատմաբանական դրուժոց մէջ ևս ակներեւ տեմնումէնք, որ մեր ազգը ունեցել է մինչեւ ցայսօր իւր ընտիր ընտիր սովորութիւններն իւր առանձին հաղուստի ձեն ըստ այլ և այլ ժամանակին հանդամանաց, ծէսերն, հանդիսականարութիւններն և այլ այսպիսի աղղային աւանդութիւններն բայց եթէ մեր արժանայիշատակ պատմաբանից գրուժոց մէջ այս ժողովրդեան կենաց պատմիերը պարզօրէն չէ երեսում, սորա պատճառն է նախնի և արդեան դրականութեան տարբերութիւնը, նախնի դը-

բականութեանց մէջ մենք տեսնում ենք երկու գլխաւոր ձիւղ՝
որոնց մէջ պարունակուում են և մասնաւորները • այս ձիւ-
ղերն են հոգեռորական և աշխարհական իշխանութեան զա-
ւազանը, ինչպէս կռապաշտութեան ժամանակում, նոյնպէս
քրիստոնէութեան: Հոգեռորականն ես իր մէջ պարունակում էր
երկու ձիւղ • Աստուածդիտական և բանաստեղծական, որոնց
առաջինը նրանց հոգեղին կերակուրն էր պատրաստում, նրանց
մօտեցնում էր Աստուածոյ, նրանց կրօնական կապերն էր ամրա-
ցնում, իսկ երկրորդը նրանց ազգութիւնն էր ամուր պահ-
պանում, նրանց հոգին պարարում մի բարձր և վսեմ ազ-
գային երգոց քաղցրութեամբ, Ահա այս երկու հոգեռորական
և աշխարհական ձիւղերի մէջը պահուած էին միւս բոլոր աւ-
րարողութիւնքն :

Մեր շատահանձնար Խորենացին ինքն իսկ շարժուած է,
եղել այս երկու գլխաւոր ձիւղերու ազգեցութեամբը, Պատ-
մելով Վահագնի զիւցազնական քաջազործութիւնքը, ա-
խորժանոք նուազ է հնչեցնում հասարակ ժողովրդեան հետ
նրա բամբիռը, հիանալով երգումէ իւր զիւցազնի վրայ
յօրինած երգը.

Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն 'ի ծովուն ունէր զկարմրիկ Եղեգնիկն.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ 'ի բոցոյն պատամեկիկ վաղէր,
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ բոց ունէր մուրռու,
Եւ աշկունքն էին արեգակունք...

Վարդգէս մանկան յիշատակին անմահացնումէ միայն
նրա վրայ երգած էս մի երկու տող երգովը.

Հատուած զնացեալ Ամրգգէս մանուին,
'ի Տուհաց դաւառէն, դՔասաղ դեստի,
Եկեալ նստեալ զնրէղ բլուրլ.

զԱբտեմիդ քաղաքաւ, զՔասաղ դետով.
Կռել կոփել զգուռն Երուանդայ արքայի... .

Արտաշեսի և Ապեճինկան վրայ հիւսուած երգերը և այլ
այսպիսի շատ ժողովրդեան մէջ մի հայրենի դիւցազին վր
րայ հնչուածը այն հեռատես ծերունին չե մոռանում ա-
ւանդել իւր սիրելի ազգին և նրանց ավելի խա նախնեաց հոդ-
ւոյ պատկերը պարզ հայելոյ մէջ ցոյց տալի : Քաղցրահնա-
չեւն Եղիշէն Արդանանց նահատակութեան պատմութիւնը
երգելով՝ սրանչանումէ Հայոց փափկասուն կանանց կրօնասիր-
ութեան վրայ, ի մէջ բերելով միանդամայն և նրանց մնային սո-
վորութիւնները, նրանց անուշահամար խորափեները, նրանց խա-
խամնքները (Խոհարար) հացարաները, նրանց ձեռաց անուշ-
ահամ օձառները, նրանց սկուտզները, բաժակակալները, նը-
րանց հրաւերքները, ապարանքները, ծաղկանցները, զարդա-
րանքները, շքեղ հաղուստները, նրանց զուարակների ուղեղ-
ներով պարարութիւր և այլ այսպիսի տնական սովորութիւններ :

Այսպէս մեր բոլոր պատմութիւնները խոր քննելով,
տեսնութենք, որ ամենի մէջ ևս փայլումէ ժողովրդեան վար-
քըն ու բարքը, բայց ՚ի հարկէ ինչպէս ասայինք, կցած հո-
գեորական և աշխարհական ծիւզերու հետ :

Ասացինք վերեւ, թէ հին գրականութիւնը նորիցը տար-
բերէ . և այս տարբերութիւնն այն է, որ հինը բովանդակ-
ուած էր երկու գլխաւոր ծիւզերու մէջ, իսկ արդի գրակա-
նութիւնը ընդ հակառակն զանազան ծիւզեր է բաժանուած .
Ասուածաբանական, Փիլիսոփայական, բանաստեղծական, բը-
նագիտական, հնախուզական և այլն և այլն, որոնց ամեն մէ-
կըն ևս ունին առանձին առանձին բաժանմունքներ ու մէկ
մարդ աշխատելով՝ հաղիւ կարողանումէ կատարելազործուել
այս աղհեստից մէկի մէջը :

Թէպէտ մեր ազգի մատենազրութեանց մէջ մինչեւ այս
վերջին դարս չենք տեսնում այնպիսի մատենազիր, որ չի պահ-
պանած լինի ընդհանուր կանոնը, այսինքն՝ հոգեոր և մար-
մատոր իշխանութեան մէջ ամիսփած լինի ամենը, այն ինչ

Եւրոպացիք 'ի վաղուց հետէ այս զանազանութիւններ արել են, բայց չենք կարող երկրայիլ, թէ մեր ազգի փոշիներում թաղուած հնութեանց մէջ չգանուած լինի այնպիսի դրուած, որի հեղինակը մօտիկ լինելով ժողովրդեան վարուց և բարուցը, նրա կենաց վրայ առանձին լիակատար տեղեկութիւն տուած չլինի, նրա ազգայնութիւնն պահպանող միջոցները, ծեւաերը, սովորութիւնները, աւանդութիւնները չժողած լինի մեզ. բայց ինչ աննեք, երբ որ այսքան ձախողակ դիպուածներում Հայաստանը անհամար անդամ բռնակալ ճիւալների մազիլների մէջ է ընկել, անհամար մատենազրութիւններ են ծխի հետ երկինքը վերացել և յիշատակարաններ յաւիտենական անդունդի մէջ աներեւութացել:

Այս ամենայն հարուածներն ու յեղափոխութիւնները, թէև մեր նախնի ժողովրդի հոգւոյ պատկերը աւերելէ մեզանից, բայց համեմատելով մեր զրայի ազգաց հետ, մեր ազգը ժամանակի ժամանքի ձեռիցը թէ շատ թէ սակաւ խլելէ հընութիւններ և յիշատակաց արժանի սովորութիւններ և մինչեւ այս օրը որդէց որդի մեղ հասուցել և իրեւ սրբազն աւանդ կտակելով մեղ՝ անհրաժեշտ պարտականութիւն է զբարել մեր վրայ այս լուսաւորեալ գարումն չժողուլ այն ամենը անցացնութեան մէջ մնալ կամ թէ փանալ, այլ զրով 'ի լոյս հանել իւրաքանչիւրքս մեր բնակած երկրինը մեր բոլոր համազգեաց առողին, և այն անդին աւանդութեանց յիշատակները, որոնք բոլորը մեր ազգի կենաց տիպն են պարունակում իրենց մէջ, մինչեւ յաւիտեանս հացնել, սակայն ցաւալին այս է, որ մենք այժմ ոչ թէ ջան ի գործ ենք լինում այն սովորութիւնքն 'ի լոյս հանել, այլ ընդ հակառակներ ծաղը համարելով, ամօթ կարծում կարդալն անդամ, թող թէ ի գործ զնելը:

Մտածելով այս ամենը բաղմաջան Խաչատուր Արովնանուսումնականը և զգալով անշուշտ ազգի աւանդութիւնները և ծեսերը կենդանացնելոյ հարկը, զրեց իւր «Ակրօք ՀԱՍՏԱՆԻ» արդիւնաւոր շարադրութիւնը, նկարադրելով նըրան մէջ երեւանու նահանդի քանաքեռ դիւղի լեզուի գարձուածքը և անային մի քանի սովորութիւնքը : Այս օպատաւ

կար գըքի յարդը կարէ իմանալ ամէն խոհական Հայ մարդ և
մինչեւ այսօր գանուեցան մի քանիսը որ զին զրին նրա այս
աշխատութեանը Սա առաջինն եղաւ որ մի զիւցազնի ձեռա-
քով ընծայեց մեր ազգին իւր առանին կենաց նկարագիրը
և յայտնապէս ցոյց տուեց թէ մեր ազգն այնքան տառա-
պանաց և նեղաւթեանց մէջ ևս ունի մի վեհ հոգի Պարսից
անողոք բռնակալութեանց գէմ դնող սիրա ջերմաջերմ Աստ-
ուածպաշտութիւն զուարձութեան մէջ հոգւոյ պարզու-
թիւն Եթէ չէ եղել Աղասին կամ թէ եղելէ մի աննշան
ոմն հոգ չէ Աղասու վրայ պատմածներն ամէն Հայ մարդու
յատկութիւնն է Հայն այդ ամէնը իր օրօրոցի մէջն իր մօր կա-
թի հետ է ծծել Արովիւանը տալով Քանաքեռցոնց այն ջեր-
մուանդ ժամասիրութիւնը աղօթասիրութիւնը այն անմեղ
զբոսանքները այն հիւրասիրութիւնը և այն անկեղծ յատ-
կութիւնները տալիս է այս ամէնը բոլոր Հայոց ազգին սրա
ստուգութիւնը կարէ ամէն Հայ մարդ ինքն իր վրայ քննել
մանաւանդ նրանք ևս որոնք թէ ըստ դիսպաց թէ ըստ հան-
գամանաց և թէ ըստ այլ և այլ իրողութեանց հայութիւնը
մեռցելեն իրանց սրտի մէջ որ քաւ լիցի չկարծեմ թէ
Հայոց մէջ այսպէս մարդիկ գտնուին :

Կարդալով մեր նախնեաց պատմութիւնները և գտնելով
նրանց մէջ ժողովրդեան կենաց մի քանի նկարագիրը աչքը-
ներիս առաջին ունենալով մեծաքանքար Արովիւանիւ Վէր Ք ՀԱ-
ՅԱ ՍՍԱՆԻՒՆ սիրահարուեցանք մեր հարց մեղ թողած աւան-
դութիւնների վրայ և կամելով ծառայել ազգիս իրեւ յանձ-
նէ ելեալ երգեցինք ըստ մեր տկար կարողութեան մեր հայ-
րենեաց սովորութիւնքն վարքն ու բարքը և այլ այսպիսի
սրտաքին ծէսերը բայց դիտաւորութեամբ մեր զրուածքն ա-
խորժական առնելու համար սիրելի ազգիս թէ մեծին և թէ
փոքրին և տեսնելով կոյս սիրոյ սրբութիւնը երկու կուսից
միջնորդութեամբ պատմեցինք Աշտարակ զիւղի սովորութիւն-
քը ՚ի մէջ բերելով ամենափոքր և ընչեն համարուած արարո-
ղութիւններն անգամ առանց զանազանելոյ լաւն ու վատը
Որովհեաւ այն սովորութիւնքը որ բուն մեր ազգի հոգին են ցոյց
տալի հայկական հանճարոյ ծնունդ են բոլորը պարունակում

ին իւրեանց մէջ մեծ բարյական դասեր, որոնք որ ժողովուրա-
զը թէև զուարձութեամբ գործ է զնում, բայց մեծ բա-
ներ է ուսանում նրանցից: Այս մեր դրաւածների մէջ կա-
րեն մեր սիրելի համազգիք, որոնց համար հայրենաց վուշն
անդամ նուշ կը համարուի, նկատել Արարատեան դաւառի
սովորութիւնքը, լիզուն, թէ արդեանը և թէ մի յիսուն
տարի յառաջ եղածը՝ ի հարկէ այն զիւղիրի սովորութիւն-
քըն ենք ասում: որոնք չունին իրանց մէջ Պարսկաստանից նոր
դադթական Հայեր և նոյն խոկ Պարսիկ բնակակիցներ, Աշուա-
րակը չունենալով, եթէ կարելի է ասել, ընդհանուրին նայե-
լով, յօրէ անոի իւր հաստատութեան մինչեւ ցայսօր դադ-
թականներ և աղաս լինելով Պարսիկ բնակիչներից, որից ա-
ղաս չին ուրիշ շատ զիւղիք, պահպանելի թէ շատ թէ սակա-
իւր եթէ ոչ արտաքինը, զոնեաւ ներքին, անսային ընտանե-
կան սովորութիւնքը, մանաւանդ լիզուի ճշգութիւնը, որ այն
է, ինչ իրենց պապերն են խօսեցել: Հարիւր և քան տարե-
կան մի պառաւ կին, որ վախճանեցաւ **10** աարի յառաջ,
այնպէս էր խօսում, ինչպէս այժմեան փոքր երեխայն:

Պարեդնին մննք նկատազրումներ բաւական տեղեակ և
ուսումնական, սակայն էլի տեսնումնենք, որ նա չէ զանազան-
ուում բոլորովին խօսելումը անուսումն լոսիցը և ուրիշնե-
րից, և խսապէս այսպէս է, վասն զի Հայաստանի լիզուի քաղց-
րութիւնը ամէն ուսանող և հայրենասէր պան չուխտ որդ-
ւոյն ևս ախորժելի և պարձանք է համարուում՝ ի գործ
դնելը երբե իցոյց իւր Հայաստանցի լինելուն:

Աս զիւցազինս և Վարդիթեր զիւցազնուհուս վրայ
կատարած ծէսերը պարզ նկատելի է Աշտարակեցի տղայ և աղ-
ջիկ նշանելու օրիցն սկսած մինչեւ հարսանիքի տարին լրա-
նալը, Ամէն մէծ և հանդիսաւոր օրերում մինչեւ տարու վեր-
ջը հարսանիքի շարունակութիւնն է, որ պատճառուումէ նը-
րանց ուրախութիւն և զուարձութիւն, ինչպէս նորահարաբն
Ծաղկազարդի խօնչայ տանիլը, ուխտ գնալը, ծաղկաքաղը,
Վարդավառը, Աստուածածինը և այլն, որոնք ամբողջապէս նը-
րապէսուած են Ծաղկազարդիցն սկսած՝ մինչեւ յետի բա-
րեկենդան չորեքշարթի օրը, խոկ այս փոքր միջոցը մնումէ:

ուրիշ պատեհ ժամանակի ըստ պահանջման հանդամանաց
վիպասանութեան :

Անհասկանալի տեղական բառերն նշանակուած են փառ
կադիւ, իսկ ոճերի գարձուածոց միաբը, որոնք ուրիշ բառ
ուր են և ուրիշ բան կընշանակեն, մնում են հետախոյզ բառ
նադիսաց :

Ընծայելով սիրելի աղջիս այս մեր նախախայց աշխատ
տութիւնը, յոյս մեծ ունիմք, որ յօժարութեամբ կընդունի
իւր համազգի մի տէար պատանու նուաստ երկասիրութիւն
նը և հայրաբար ներողամիտ կըլինի սորա միջի բաղմազատիկ
թերութիւններին, որով և համարելով մեր աշխատութեան
ողտուղն արդէն իսկ վացելած՝ քաջալերութիւն կըստանանք
ըստ մեր տէար կարուն ամեն ժամանակ ծառայութիւն աշ
նել աղջիս :

Պ. ՊԵՐԵՏԵԱՅՑ.



ՍՕՍ և ՎԱՐԴԻԹԵՐ

Ա.

Մարտի տասն և հինգն էր : առաւօտը օրը մի քիչ բարձրանալից յետով , երբ արեղակը իրա ուկեղոյն ճառագայթները կանաչ ու կարմրին տաղով շողացրել էր մի մատնաչափ նոր եկած ճնի վրայ , և օրը երեւում էր բարեգուշակ , երբ բնութիւնը , կարծես թէ , զղուելով ճմեռուան ծանր լծիցը , մի թանձր պատան երեսիցը վերցրած ուղում էր զարնան հոտերովը քիչ քիչ ուրախանայ , բացց ևս այնպէս շատ ցուրտ էր , Աշտարակայ մուխը ամսպի նաման քուլայ քուլայ բարձրանում էր : Արշաւիրը իրանց զրանը , ուները բարձր ու ցած անեղով ձևոները փչելով դվյալի էր տալի . հինց խմանաս թէ մինը նրան տառղ կար՝ որ էս ցուրտ վախտը ըստեղ կանգնի , Գարեղինը ժամիցը դուռ դալով ձևոները ջերը զրած , առուն բանած ներքեն էր զալի իր միջումը դոմոդունալով . ով դիտէ թէ ինչ : — Ողորմի Աստուած Արշաւիր , կանչեց նա մօտանալով նրան . առուն անց կենալով էս կողմը . աղպէր , քու ջանը երկաթ ա թէ պողպատ . զիշերուան ժամ էլ չես զալի . լիսաթաթափախ դուռ ես զալի զրանը կանում . աղապ էլ չես , թէ ասմած ջուր տանող աղջկերանց ընխա մտիկ տալի . դու քունը պրծար , թող մենք հողս քաշենք . թող հիւանդը տնքայ . քու զլիմիդ ինչ թաս են կոխել էս վախտ ըստեղ կանոնել սրմթարթում ես , ետիւնջիդ էլայ վրէդ էլոր քցել , մի թէ ամաշումես Աշտարակայ սովորութիւնները բանացնել . ես ու դու էլ որ կամիածին բարեկամ ունենայինք հայր սուրբներիցը մենք էլ մահուցի շնորհ կծածկէինք . էհ , ինչ անենք . մեր պատկերը ինչ որ արել են մենք էլ ստի անենք . տնաշեն ինչպէս մարդ ես դու : — Ողորմի ծնողացդ . Գարեղին ջան , ասեց Արշաւիրը . ժամիցը հօ յետ ընկայ , էսօր էլ Պաղպարոսի յարութեան օրն էր , համա արի տես , էս ցուրտ վախտին արեւը ինչ լաւ դուռ ա եկել , հինց խմանաս մաշխափ արեւ ընկի , ընէնց չի : — Հա , հա , խմ սիրտս էլ բացուցի . ասեց Գարեղինը , համա ասան , ընչի համար ես էս վախտ ըստեղ կանոնել , ով դիտէ մի ուրիշ փորացու կունենաս . դու ընխա խմ արեւը ճշմարիտն ասն : — Ինչ բան , ասեց Արշաւիրը . էս մեր խիզանոնցն էլ Աստուած բարի տայ , օխուը սհամթ վախտում են , դեռ թունդրի անթեղը նոր են

բաց արել , աթարի մոխը տունը բռնել ու , ընչանք քուրսին դնիլը խելի վախտ կըքաշի , ոտներա էլ սառեց էի համա զիտես թնչ կայ . էքուց ծառզգադար ա , զիտեմ հիմի կասես ժամիցը ևո եմ զալի ողորմի Աստուածը դու ես ասում . ուռ պտի օրհնեն , ժամումը լու համուլո կըլի , ազատ աղջկերքը , պտի հարսները լաւ լաւ շորերի բոզէքը բաց պտի անեն , երէխէքը փառք ի բարձումին ճոճօնակիները ու ճոճերը (*) պտի ածեն . մեր տղայ , թնչ կըլի աղջալ աղջէքանց հալը ժամի դրանը , Աստուած ոչ չհանց տայ , Մողնու նախրիցը շատ կըլին . դու հօ որաեղ աչ , ընտեղ բաշ լի . (որտեղ կերակոր ընտեղ զիտառ) : — Ըսէնց սովորութխնը կարուի մեր միջլոյք , ասեց զլուխը պը-տըտելով Գարեղինը , մեր զեղի էս մի բանը շատ վասա , էս թնչ քրիս-տոնէութիւն ա , ամէն երկրներում , ասում են , ամէն կիրակի մենծ ու-պտիկ ժամ կերթան , նրանցում սիօթ չի կայ . հէնց մեզ համար ա որ ջանել աղջկերքը ու պտի հարսները տարին երեք անգամ են ժամ դնում . մեր տէրտէրներին էլ Աստուած բարի տայ , բողազերին հուզ տաս երկու այբ չի վեր ընկնիլ , անջախ մաշտոցին են ջան տալի , էլ չն՞ն ասում թէ քարոզեն բալըի էս սովորոյթքը վերցուի . ես տէր-տէր ընեի , տես մին օր կըթողային ըսէնց : — Ես լաւ սովորութխն ա թնչ , ասեց Արշաւիրը , մեր հարսները էրէկուանից իրանց չորերը հա-նել պատրաստով են էքուցուան համար , թէ ամէն օր ըներ ժամ զնալը էլ թնչ որտով կերթ այն . մարդկանց սովորութիւն ա որ միշտ ժամ զնան . ուր են , հինգ մարդ անջախ ես թոռով կալնում օրը , էս էլ բզրդ նած հայիսորներ , շատ օր էլ տէրտէրն ա ըլնում , ժամնարը ու չորս սինը : — Ժամ դնում են հէնց զիտես աղջօթք են անում , ասեց Գարեղի-նը (պառաններիցը սավահի) ամէն մարդ իրանց բարեկամներին ընտեղ են անսնում . ոլ զիտա թէ թնչ բաներ են խօսում . ինչոքս մեր Ասոն էլ ասում էր որ կիրակի օրը ժամ պտի զնամ . նա տարին մի հետ անջախ ա դալի , ի հարկ է ընդուր համար որ ձեր Վարդիթերին պտի տեսնի , անձախ մի ֆրանդն ա քցել , փորը զետինը քսելով մեռաւ խեղճը ձեր աղջկայ համար : — Տես Գարեղին , ես զիտեմ ընհնց կանէք ժամ էլ չեմ թողալ դայ մեր աղջկը , ասեց Արշաւիրը . ըսուր հա-

(*) Ճօճօնակին երեք տախտակից շինած բան է որ իրար կըհարկանեն կը-չըկչըկայ . իսկ ճեմ նոյնոք ս փայտից շինած խորակու զործիք է որ ձայն կը-հանէք պառակլու :

մար ա հիմիկուց պատրաստում , լաւ , լաւ , հլա տես , է , աշխարհ-քըս քանի դնում չարանում ա , աղջիկն էլ չեն իրանց հային կննում . մեզնից յետոյ Առառած աւելի չարից փրկիր . Հայ աղջիկը էնքան համարձակի որ իրա միջին տղայ ջոկի սիրի . ով ա լսել : — Ընդի ես ը-տէնց խօսում՝ Արշաբիր , ասեց Գարեգինը , ժամ չթողալով ինչ պր-ախանես . ջանմ , մի տղայ ա՞ մի աղջիկ , երկուսն էլ իրար սիրել են , թէկուզ թաղաւորի աղի էլ ասաք՝ սիրաը տաք չի ընդի վրեն . մեր Սո-սը շատ զիշեր անքուն ձեր դրանը անցա կացնում . ոչ Այլն ու Մաշ-լունը , ոչ Քեարանն ու Աղին , ոչ Էլ աշուղ Ղարիբն ու Շահ-Աս-նամն էնքան սիրով չեն էլել , ինչքան էդ երկուսը , շատ քիչ կը-պատճի աշխարհքում ըտէնց բան . Ես քանի մեր Սօսին խրառում եմ , որ յետ կենայ էդ բանիցը , հենց խմանա թէ իմ խօսքերը ցախ են դառել նրա սրտի կրակը աւելի բորբում թևացնում , աւելի ա վառում քու քուեր սիրովը . Ես դիտեմ թէ ձեր Վարդիթերն էլ ինչ սրտով ա սիրել մեր Սօսին . ինքը հօ վարդ ա , նրան էլ ալիւակու ա շինել . հենց խմանա թէ անումը դիտութևամբ դրած ընիք Վարդիթեր , որ մեր սիրապիսի անուշ քունը կտրի . ոչ մի աշուղ էնքան խաղ չու-նի ասած՝ ինչքան նա . ով դրանց ջոկի իրարից , Առառած էլ նրան ջո-կի , նրա մուրադը փորումը մեռյ : Գիտեմ , դու ըտէնց աւելով ուրիշ բան ես զլսի դցում , ուզում ես փախցնեմ , իմ ձևոխն շատ հեշտ բան ա . զորթ ա՞ ես շատ դոչադ չեմ , համա Սօսի համար զլուխս վեր եմ դրել . ինչքան էլ նեղաթիւն քաշեմ նրա համար , ոչինչ . նրա սիրաը շահիկը թանդ ամի ինձ համար . Արշակիր անսառ որ Գարեգինի սիր-տը առնուեց իրա խօսքիցը , լեզուն ծուեց . Էն աղ ու հացը վիրայ , ա-սեց նա , որ իրար հետ կարել ենք , ես հանաք եմ անում , ես սրտով ուզում եմ Սօսի միս վիտայ ունենայ , համա էդ անիրառ հերս ու մերս կամք չունին ապկու . քանի ես խօսքեմ բայ սրել , առարկու քցել , քերնիս էլել են . ես լաւ դիտեմ որ Սօսի միս աշխատասոր , մարդի սիրս բաց անուշ , ուրախ ու չաղ տղայ չիկայ , իլլաքի նրա հրեշտա-կի ձենք որ ամենին բերանը բաց ա թողել . մի Սօս ա՞ մի գեղ , հերս ուրիշ աղի ա ուզում տալ , մէրս ուրիշ . տեմուսմ եմ որ երկուսն էլ հարաւատի են մամնդայի , թքեմ հարաւաթիւնի միջին , մարդիս համար փողն ու հողը մին ա , դու մի վախիկ , վերջը մեր խօսքը սրափ ըլնի . Երկուսի միաքն էլ ջոկ ջոկ աղի վրայ ա , թէ խօսքները մին ընէր՝ ան կար , մի տան չերեկի որ երկու առանձիւնն ձեսի ընի՞ շուն բա-ժանք կընի . երկու զժին մի խելօք կինի . հալրամթ վերջը բանը ուը-

տի մնայ վարդիթերի վրայ , նա ում ուղենաց նրան կէրթայ . Առտուած տայ որ ըտինց ընի Սօսը , Սօսը , Գարնպին , էս ուր ա էս վախտ դբայ յիգանիքը դարբել , էս վախտ ինչ բան պտի ունենայ . մի ձեն տուր տեսնենք ուր ա էրթում , համա էլ ինչ ձեն , նա վախտա , ու զիստի ինչ շտապ բան ունիք :

Գարնպինը տեսնելով Սօսի վռազ վռազ անցկենալը՝ սեւ ու մութը զլիքին էկա . մի քիչ շփոթուած մնաց ու յետոյ առանց Արշաւիրի հարցմունքին պատասխան տալու՝ մնաս բարով , ասեց , ես զնումեմ մրանցի , ու հեռացաւ . Արշաւիրը ինչքան ուղեց յետ կանչիլ որ բալքի կարենայ Սօսի կորմիցը մի բան խմանալ , նա անկաջ չարեց . զընաց զբայ իրանց տունը .. համա սեւ ու մթին կէրթայ իրանց տունը . նրա զլուխը մի ընէնց քամի մուս որ ինքն էլ չիմացաւ , թէ ինչ անի , քուչէն ծուռեց թէ չէ , մէկ էլ քուչովը յետ զառաւ , մէքը կորցրած հորթի պէս նա մկնեց վագել յիգանոնց քուչովը . մի քանի իո զեռ . նոր էր զնացել նոր եկած բարակ թերթեփի վրովը , էս ճամփէն բռնեց ու զնաց , զնում էր՝ միտք անում , ու ինքն իրան խօսելով ասում . ախ Սօս ջան , եարանը ուր զնացիր էս վախտին , չընի թէ տանը քեզ նեղացրած ընին , չընի թէ ասել են վարդիթերին չենք ուղիք համար . ես կուղեմ , քեզ մասազ , իմ ջանը քու ուղուրին վեր և զրել , իմ զլուխը մնուած ընի որ զու նրան չառնես , աշխարհիս ոչ մի նեղութիւնը չի կարող ինձ էղ մտքիցը յետ դարձնիլ . դու հենց զիստիս թէ քու աղքէրը քեզ համար հոգու չի քաշում . էն խաչի ու աւետարանի տակի տուած ողջումը ինձ ինչ կանի , որ ես քեզ մտքիցը քցեմ , չեմ մոռացել քեզ քու ջանին մասազ , էս սհամբու էլ Արշաւիրի հետ կոխս էղ էր . Աստուած ջան , ով զիտայ ուր զնաց , կարսմ զանիլ թէ չէ , առանց նրան խմ օրս մի օր չընի թող համա տօ , ըստեղից մի իո ա զնացել , կամես թէ իմ Սօսի կուչկուչուրիլ որիների իսկ ընի . անպատճառ էն ա , ես դէսը զնամ տեսնեմ . վայ զլիխ չընի թէ դբայ ձորն ընի դնայած քարափիցը վեր ընկնելու , հենց ձորի ճամփէն ա , զոտիմ , զաղիմ . . . ձեն ա զալի , ըս . . . էս ինչ ձեն պտի ընի , էն հստա պտօքոքու (ընկուգնուոյ) տակիցն ա զալի . էլմով , էլմով (կամաց) զնամ , ստի շվիթուն չիմացուի . Քիչ էլ որ յառաջ զնաց՝ ընք , Սօսը մուներով դաղալը քջում ա արեգանի տեղուրումը , հենց խմանաս թէ մի բան կորցրած ընի ընտեղ . անզն ու անզը նառում ա Գարեգինը , բում ա որ Սօսը խառնչտորում ա զազալը ու աղբար էլած կանչում էս խալը ան միտք անիլ .

Ընչանք Երբ ես դիմանամ , մաշեցիր ջանս Վարդիթեր
կտրեցիր կեանքքս թելը , ոռ իմ հոգեանս Վարդիթեր .
Սերդ կրակ ա դտուել , էրում ա ջանս Վարդիթեր ,
Հերդիք ա ինձ չարչարես , կտրի տանջանս Վարդիթեր ,
Թուխ թուխ մազերիդ հիւը , աղեղնաձեւ ունքերիդ հետ ,
Հրեշտակի ճակատը՝ ուկենինջան աչքերիդ հետ ,
Դրախտի զուռ քերանդ , սփառակ շարմազ պուշնիրիդ հետ ,
Գրաւել են իմ սիրում՝ մորթել կենդանս Վարդիթեր :
Եարան կլնի որ բռնեմ՝ լիասթաթախ ձեռներդ ,
Շնքով սրտիտ տամ , երկար բարակ կռներդ ,
Պաշեմ ճակատի դնեմ , ակնամումքի մասներդ ,
Ասմ թէ էլ դարդ չունիմ , իլ հոգեհանս Վարդիթեր :
Եքուց ժամ պտի դնաս , զնացած ժամիդ մասաղ ,
Ճամփէդ պտի սպասեմ , կէս զիշերիցն էլ շատ վաղ .
Դուռը կտրած կըկաննեմ , որ քու սուրբ երեսի շաղ ,
Արեփ հետ ինձ դիմիչի , կաջողի բանս Վարդիթեր ,
Մանիշակի եմ մանզալի , քեզ ընծայ տալու բերեմ ,
Որ առէնքը խմանան , թէ իմ խօսքերին տէր եմ ,
Մարտ առին ա հեշտ բան չի , ով կասի զազալը որքնմ ,
Մատներս թիակ շինելով , անեմ էս բանս Վարդիթեր :
Հայտառանումը մի հատ ես , ոչով չունի քեզ պէս եար ,
Քեզ անսով ազաւ տղէն , զլուխը կտայ քարեքար ,
Կուզի ոէրդ իրան քաշիլ , մեռնիդ հետդ բարերար ,
Համա զամիս ձեռիցը , կիսուի կոանս Վարդիթեր :
Սօսի դարդը քանի կայ՝ խօսքիցը յետ չի դառնաղ ,
Գիշեր ցերեկ անհանդիսան , զլինին տալ պտի ու լալ .
Երբ քեզ կառնեմ կարծնեմ , հաց կուտեմ կուշտ ու հալալ ,
Բան ու գործս կթողամ , կնոտեմ տանս Վարդիթեր :

Սօսը կրակուած էս խազովը՝ Վարդիթեր ա կանչում . մին
կաննում ա ու մի քաշում՝ որ մանիշակ չի գոնում , մին էլ յետ
կոանում ա զազալը քրքրում . ով ա լակ թէ էս ցուրտ վախտին ,
զիս որ նոր ա ձինը վերկացել , զազալը յետ տան տակիցը մանի-
շակի ման զան , համա ով որ տշխատի նա կուտի . զորթ որ մի զա-
րիդուս տեղ , որտեղ արեսի զօրութիւնը շատ էր տաքայրել զետինը՝ մի
քանի հաստ զտաւ . պտի իմանանք թէ Սօսի սփառը բնչպէս ուրախացաւ
որ իր ուղածին հասաւ . կէս թազաւորութիւն իրան տայիր էնքան չէր

ուրախանալ, ինչքան էս մի քանի հաստ նոր դուռ եկած մանիշալի համար . ուրախութիւնիցը քաղցը ու հոգար անզան Աստուծուն փառք տալով ասեց . հիմի խանում և՛մ որ իմ ու վարդիթերիւ սիրառ մին ա . ևս որ էս ցուրա վախտը կարացի նրա սիրառ ուրախացնել մանիշակալ՝ նա էլ ինձ կուրախացնի իրա սիրովը . համա Աստուծ ջան , ով պը տի տանի իրան տայ , Երբ պտի նա դուռ դայ որ տամ իրան , կարամ էս դիշեր ժամ գնալիս տալ իրան , ախ էդ չի ընիլ , նրա մէրն ու հարմանը հետք կընին . Էն խեղճը մօր ժանդուա երեսն մափի տայ թէ չէ , կարայ յետ ու յառաջ ընկնիլ ընչանք ժամ մանիլը . ևս զխում էն զարմանի տակի ջուրը համեմուց խեղճ աղջկայ երեսը սոկելայ , ու քանիք քանիք թամբարներ արել , որ ժամին ճամփին հարմանը միջիցը դուռ չի դայ , ուրիշի խվանունց հետ չի խօսայ . բա ինչ քար զցեմ զիկիս , ինչպէս տամ իրան . գարեղինս թէ խանուայ ինձ կըսկը կըսի կհանի . ամէն օր նա ինձ ասում ա որ ես ասանց նրա խօսքին բանսոմ , ես էլ խօսք ևմ տուել , ինչ անսոմ , ասեմ չի ընիլ , չասեմ չի ընիլ . երկու ջրի արանքին ևմ մեացել . թէ չի ասեմ , ես չեմ կարալ էս մանիշակը տալ իմ սիրառ էրողին . թէ ասեմ , վայ թէ նեղանայ , համա ինչ ուղում ա ընի պտի աս (խօսքը փոխում ա) Աստուծ ջան , էս ով ա մեր խեճեմինի (շուտ կուրուող) պօպօքու տակին տարդումը նստած . վայ , հարաց , ես չի կարացի իմ սրար խորհուրդը ընկնց պահիլ որ թաքուն մնայ . հիմի ինչ անեմ որ էս մարդք լասծ ընի . սատանի սերունդ էր ըստեղ բունեց , էրթամ տան սպանսոմ , նախտիք քեզ չար սատանոյ , եարար էս ով պտի ընի . սա իմ բուսունը պահերով էկելա քամակիցս , ես դրա կարմիրը հիմի կը կապսմ . փորը մորը երբ որ վեր ածեցի թող էն վախտը սարծենալով էրթայ իմ խորհուրդը պատմի իր հընկերներին . էջ , ով ես , դուրս արի , թէ չէ մենծ թիքէդ անկաջդ մնաց . առեղով հանում ա զամէն զնիցը . մի քթալ արինտ էլ չուղեցի . ով սուրբ Գէորգ դու իմ կուանը զօրութիւն տաս , երեսին խաչ ա հանում Գարեղինս ա վայ զրւիս , Գարեղինս , շուտով զամէն զրեց զի մէջը . սորով ջան , քեզ մաստաղ ընիմ , ինչ բան անխ ըստեղ , իմ հողու խղարերի մում , սըրտացաւ Գարեղին ջան , քեզ ով ասեց էս ցուրա վախտը քու շուարայ սպագոր հետ ման զաս . ես զխում հաց էլ չես կերած ընիլ , վայ , ես ինչ զլուխս քարը տուի ըստեղ էկայ որ քու հացն էլ հարամ էտ , այ իմ կերած հարամ ընի . դու վախտեցար թէ կըրելում , վախիլ մի . քանիք քեզ ունս աղպօր , քանիք վարդիթերի շունչը բերնին ա կորչիլ

չեմ . որտեղ ընկամ կըզամ . թէ կուզ վարդիթերի սիրովը հարբած Արագեազու գեօյի բոլորքին վարադի պէս որտիա հերսիցը գետինը քարութանդ աննելս ընկամ , թէ կուզ էլ յետ խելքս զլուխս Եկած մնր սորք Լուսաւորիչ պասի անսպարան կանթեղի տակին Ալագեազու հաշումը (ծայրումը) աղօթք աննելս ընկամ , (*) էլ յետ կըզամ :

— Սօմ , էս Աստուած վեր կունի՞ , ասեց Գարեղինը , ինձ էս վախտ սպարդիլի տակին ապուխտ ես շնուռմ , դու չես զիտում որ ես ցըրտի սովոր չեմ . չես զիտում , որ քու էսքան յետանալիս՝ քու Գարեղինը հազար ու մին միտքեր անելով , ձաղը կորցրած սարեկի պէս զլուխը քարեքար իրան սարէսար տալով պտի որտեղ ընկամ քեզ զտի . քանի անդամ քեզ ասել իմ որ մի տեղ գնայիս դժի թեփ համ էլ ա ինձ խնաց արան , որ ես քեզանից երկմիտ չընկամ . դու չես զիտում որ թէ մի սհաթ յետի տեմանեմ քեզ հոգիս դուռ կոյայ , ըտէնց ես աղպէր պահում . համա մաշտպահ քեզ , Հայ ևս էլի , Հայը իր խօսքը դեանինը կորցրի , Հայը իր թքածը կլինի՛ , Հայը սրտով ասլանա ա , հընկերսիրութիւնով էլ տաստարամի , համա քու միջին էղ չի կոյ , մէնակ սիրտդ ես ասլանի շինել , էլ հընկերին մամկն տալ չի կոյ . դու ընչանք իրիկուն էլ որ Վարդիթեր կանչելով սառցի մէջ մոնես , հէնց կիմանաս թէ վար դիտորին Համապահնքայ զետումը կուներդ վուած լեզես տալի , ուրի կըրալլը , ասելեն , թէ Մասսի զլիսին դնես , տապանը կերեայ . ես քեզ քանի անդամ ասելում , որ դու հէնց խմացի թէ Վարդիթերը մօտիդ նըստած ա , դու նրա համար հոգի մի քաշել , էղ իմ պարտքն ա քեզ բնչ կայ :

— Ան . դու ամէն վախտ ըտէնց ես ասում . ասեց Սօսը , համա մի օր չէլու որ բանը զլուխ դար , շատ էլ ընելու էլ որ ընկի , համա ընչանք չիրը կըթրչի՛ հիւանդի հոդին կըթռչի , ընչանք էղ բանը կըլինի՛ ուղովի պոչը զետինը կըհամանի . . . է՛հ , ես մնդայ Աստուծոյ , քու սոսածը թող ընի , ըստուց յետոյ էլ զարտ չեմ անվիզ , բնչ կանես արան . ինչ ասես անմկոչ կանեմ , սիրտս սուփրայ չի ամէն տեղ բանամ :

(*) Ալագեազն է Արագած լեամն , որի զիտին , ինչպէս պատմում են , կոյ մի մնծ լին : Կոյ և մի այնպիսի աւանդութիւն , իրը թէ երբ Լուսաւորիչը աղօթումէր այս լեռան զլիսին , մի անսպարան կանթեղ լոյս էր տալի նրան զիշերը և այժմ կոյ , սրժանաւորաց միայն տեսանելի : Այս անսպարան բառի իրմաւուազն է որ Արագածոտն գտաւին ասում են Ալագան ըստ աւանդութիւն :

ուրիշը չէ , դու հօ լաւ զիտես :

Գարեպնը խօսքը փոխելով ասեց նրան , Էղ Բնչ ա բոխտ միջին . էս վախտ ըստեղ ընչի համար ես էկել , առ էղ մանիշակը որտեղից ա համա տղայ ես հա , արի , արի էրթանք , ես սառեցի ըստեղ , քեզնում խղճմանք չի կայ :

Բ.

Էն իրիկունը , երբ որ արեգակը ծովի մէջը մտաւ , աշխարհը մութը բռնեց , ամէնքն էլ զնացին իրանց աները ու համապատասխան Աստուծոյն փառք տալով , ու ամէն օրուանից թէզով քննցին որ առաւօտը շուտ վերկենան ժամ՝ զնան՝ ծառզարդար տեսնելու ու օրհնած ուռ առնելու որ քերեն իրանց տանը պահեն ընչանք մէկէլ տարին . պլատի հարսները ու աղասի աղջկէքը վաղուց հէնց պատրաստել էին իրանց լաւ լաւ շրերը , վաղի տուակի պէս , դեռ ջրի ափից չի հասած՝ ոտները հանել էին . համա ընչունքի վարդիթերի վահան աղքօրը էս տարի էին պասկել՝ խնամնոց տանիցը սրանց տունը մի խօնչայ էկաւ , որ էքսի օրը թէլլիղարին (պատի հարսին) հէրանց պտի տանեն ժամիցը գուս գալուց յետոյ + թէլլիղարի մենծ քիրը (Շողերը) խօնչի հետ Ալել էր : Խօնչէն բաց արին , աչքոյ բարին տեսնի . Աստուծոյ մի բարի կար միջին . օրը մենծ պատա , համա Աստուծոյ տուածիցը պասի բարութիւնները հաղար . շիրագտով գաթայ , հողի մաթով (ուռք , բազմազ) հալուայ , պատուց տօրմայ , լաւ չտմչալի , աղջանաբաթի չբով վրաւ , տապակած բոխ , մինը միից շատ լաւ . թէրմունը (օշարակ պղպեղով և ուռքով շինած) հօ էնքան քաղցր էին շինել որ մի թատ խմողի սիրտը էրում էր : — Շէն կենայ մեր իննամին , ասին ամէնը մի կողմիցը , ու շնթումը (վարդիթերի հէրը) նստեց մէջ տեղ , մէկ էլ տղէքը կարգով չորս կորմը շարուեցին հաց ուտելու :

Համասփառն էլ (վարդիթերի մէրը) խօնչէն քաշեց առաջը , հարսների ու աղջկայ բաժինը տուեց իրանց , մնացողը զրուց սուփրի վրայ ինքն էլ նստեց յետոյ հաց ուտելու մարդի ու տղէքանց հետ :

Վարդիթերն ու հարսներն էլ ոտի վրայ կանանած ծառայութիւն էին անում . նրա սիրտը արին ա գառել , ուղում ա որ էն գաթիցը մինը Սուրն հասցնի , համա չի զիտում բնչպէս անի . զիափ որ էքուց ծառզարդար ա , Սուր անպատճառ ժամումը կընի , համա խեղճ ջրաստարը

Հի դիտում թէ Աօսը իրանց դրանքը կանոնած առ միտքն Ակաւ որ թէ աքունք մինը աղլիսումը կորովի հետը ժամը տանի, բազգի թէ մի տամիւով կարենաց իր սիրեկանի սիրաը ուրախացնի: Խնամի Շողերը ծանրագոզօթ մի քնջում նստել առ սուս կացիկ. Հեթումը միտում նրա հետ քաղցր խօսիլ, նա էլ զլուխն առ տմբամբացնում, նա ասնդու տեղակ և խնամի Շողերի առաջը չալ զանաւուղ բաշօրթիկ (պիխաչոր) են խաւաթ դնում, խօնչն բերելու տեղակ. նա էլ ճանձին անող ձիու պիս շուտ չուտ զլուխն առ տմբացնում, սաքի թէ նորհամկալ եմ: — Աեր հարսին քեզ ենք տալի, սանց Հեթումը, լսու պահեք ընչանք կանանչ կիրակին, որ բարով էն օրը համեմնք, չենք թողալ ձեր տանը, աղջին թէլլիդար ջան, ըստու արի: Ծընիմ չխանանամ որ քողը երեսից տեր ա կացիկ հօրանցդ տանը. հենց արա, որ հարեւանները քու շուտքդ տեմիկ չի կարենան. հօրդ ու մօրդ յսու պատիւ տնար. էս փաղինը չի: Երիկունը քննելուս տաները արորի, ոնց որ մեր տանը իմն ու անքերուանցդ տրորումնս. շորերը հանելուս թեր քաշի: տուաջ նրանց քննացրն՝ յետոյ դու գնա քնիր. առուօտենց մեղիցդ ծեքելահան վեր կաց, տներն առի, ուսուշորդ քցի, կուժն ուսի, գնա ջորը բեր, հօրդ ձեռին ջոր ածա: որդի, հենց արա մեզ չի ամանչացնես. մատով շնանց տալու դանաս. ըստոց յետոյ ինչ սպակուտթիւն տնենաս, մերն ա:

Կնասուը էս խրատաները արհինի պէս հալում էր Թէլլիդարի անկաշումը. խնամնոց կենացը խանում էր, որ իրանք ըստեղ չէին, հօմատ մոշը ներն ըստեղ էր. խնամի Շողերին ծիծաղացնելու բաներէր պատմում, նու էլ ասօթիցը զլուխը կախ էր քցել, երեխին խստել ու նստել. մերն ու արդեքն էլ Հեթումը խօսքերը հաստատելու համար մի մին մասալեք էլ վըրայ կին բնիրում. համա վարդիթէրը հենց խանաս, շուաքն ընի ընտեղ. իր հոգին մինակ Սօրի հետ ա: ոչինչ բան աչքը չի զալի. աչքերը խփում ա՝ Աօսն ա առաջ զալի. բանում ա՝ հենց զիտայ թէ Աօսի խստումը փախչում ա:

Նրանք հացից վերիկացան, Աստուծոյն փառք տուին, երեւաներին խաչ հանեցին, խնամուցը նորհամկալութիւն արին, համի Հեթումը հըրամացեց որ խնամի Շողերին էլ հաց ուստացնեն, լսու պատիւ տան: Իրանք երբ որ քննացն պրծան՝ մի քնջումն էլ խնամին, հորիները ու վարդիթէրը նստեցին հացի. ամինքը սուփիրի միջի կած չելածը լըցնումն մեր խնամու առաջը, թէ համեցէք անուշ արա. նու էլ յիս զիր ա ունում դնում որա նրա առաջը առաջը, ևս կուշու եմ նորհամ-

կազմում ու նաղն ա անում հայց ուստիլու : Անհն հարսը դօռ անելով ա-
սում ա , քու հարը դայ , ասինք թէ սոված ևս կեկ . զէ լաւ , առ էս
մի թաս թէրմունն էրս անուշ արաւ :

— խնամի , քմ սուրբ Գէորգը վիրայ չնմ ուղում , ասում ա Շողերը ,
համա ԲՌէ անեմ խաթրներդ աղջող ա . զայ , աման , մեծ խնամին զար-
թուն կընի կըանմին համիկ թուք կընինք . յետոյ թառը մէկնելով
մենձ հարսին՝ ասում ա , խնամի ջան , թասս քեզ ողջութիւն . նա էլ-
չի առնում ձեռիցը՝ ասելով . լսու ձնոի ա , խմողանց սնուշ . յետոյ սա-
քի թէ չարէն կարուած՝ ասում ա մենծ հարսին , խնամի ջան , սադ
ընիա , քու տէրն ապրի , ասուուած քու երէխէքը քեզ բաշխի .
(միջնէկ հարսին) խնամի ջան , Ասուուած քեզ զօչ որդի տայ ուրա-
խանաս , ճղքնդքնուտիա , Ասուուած մնր խնամուն սազ պահի քեզ
համար . Վարդի՛յեր ջան , քեզ մի բարի նշանած ընի , բարող կըտ-
րուկ ընի , Ասուուած քու սրտի մուրազը կատարի , քու ապակը-
տինքն առցրին . Թէլլիսկար ջան , սարդիերս ընիա , հնազանդ մնաս ,
տոդ զադամով ընի էս տանը , ծլիա , ծարիկա ; իրար հետ հալիսորիք ,
իրար հետ սպասարիք , մի բարձի տիրամատք , դու սրանց ոտի հաղն ևս ,
տէք Ասուուած քեզ վասք ընի ; Ամէնքը մխասին սպասափան տու-
խն . շատ սազ ընիա , Ասուուած էդ մի երէխէն քեզ բազ՛յ , ուրիշն էլ
տայ՝ ուրախանաս , քու տէրն ապրի : Գնիմկալը յետ քցեց , ձեռը բեր-
նին ապղայ բունեց մնր խնամին , մի քիչ խմեց ու յետ էր ուղում
տոդ (թէստ կամին էլ չի թռչց) : — Քման վայ . թէ Ասուուած կը-
սիրես անուշ արա , մենծ հարսն ասեց : — Զէ , չոր կարող հերիք ա ,
— Դէ լաւ՝ իմ խաթրեր համար , տնաշըն , թէրմուն ա հօ զինի չի ,
— Դէ ասումն ԲՌէ անեմ , կարսամ խաթրդ կոտրիկ . էլի քննիկալը յետ
քցեց թէ չէ թէրմունի տակի տաքինի (սրբառը) էլ չի մնաց : — Անուշ ,
անուշ , ամէնքը կամաց վախասցին ու մի մին թիքայ մազայ տուխն ,
որը հազարայ՝ որը զաթոյ : — Անուշ կենաք , ասումա , ու մազէն առ-
նում , Ամէնքն էլ կարդով միտեցին մի մին թաս թէրմուն խմիլ , ամէն
թասի վրայ մենծ սպասիցը երկար չուրհակալութիւներ . վերջը Վարդի-
թիրին էլ մի թաս տուխն . նա հողը զիսին , ցեխն արեին կրիամի . նրա
դարդը , կասես թէ , էդ մի թաս թէրմունն ա . նա օձի փուշ , մար-
դամուշ ընի կըտիմի ու էդ չէ . չորհակալ եմ ասեց , ևս թէրմուն չեմ
սիրիկ , ձեր խմածն էլ իմն ա : Հարմաները վաղուց զիսին Վարդիթիրի
դարդը , համա չեմն ուղում խնամու կատին իրանց տան ուը բանադ ,
ոչինչ չի խօսացին , համա միր խնամին հենց զոռա անում , քեզ

մասաղ , իսկան , ևս սիրում էին , ձեր աղիոլ խաթեր հասմաք խմիցի . դու
էլ մի քիչ բերանդ առ ու յետ տուր : — Չէ , ասեց , զիսւեմ խաթեր
աղիոլ ա , համա թէրանունը վեր եմ տակ (ուխտ) . ինսամին ինչքան էլ զու-
տրեց՝ նա զլուխը տակը չի տուեց : Նա որ խաօզ ըլնէր՝ նրանց չէր մը-
տիկ տալ . ամարդ մարդի դարդ չի զիսենալ , կէս քշերին ժամ կըկանչի .
Նրա սիրուր ուղում ա թէ պատոի , նրա աչքերիցը ուղում արտաստա-
քը առուի պիս թափի , նա միտք ա անում , թէ ինքն ըսենց ուրախու-
թիւնի միջի նստածաւ , մե ըներ էն ուրախութիւնը , հիմի Սուր Բնէ
տուղ պտի ըլնի . օրթում էր կերել որ ընչանք էս զաթիցը մինը Սուրին
չի հացնի՝ բերանը նշխարք չի դնի : — Աղջի , հաց էլ ա կեր ,
ասեց խնամին : — Ես կուշտ եմ , դուք անուշ արեք . մենք հարսի կող
քին էլ թաքուն բրթում ա թէ պրծի , վերջացրու . էքուց ժամ պտի
զնանք , կէս քշեր դառաւ : Խնամին տեսաւ , որ ամէնն էլ ծիծաղումնն
համա Վարդիթերի երեսը դառել ա ձմռոււան երկիցք , հեց զիսենաս
ուշխարքիս կոտ ու բէկառը իրանից ըլնին ուղում , նստել ա ու սուս կա-
ցել : — Աղջի , ախար քեզ ինչ էլաւ . ոչ սսում ես , ոչ լսում ես , ոչ ու
սում ես . անենք հաց չես ուսում , բերնիցդ հօ քրեն չեն ուղում , մի
խօսն էլաւ : — Չէ , ուրիշ բան չի կայ , սսում ա , զլուխս ցաւումա , չեմ
զիսւում թէ ընչիցն էլաւ :

Խնամին շատ ախրեց էս բանի վրայ , վախենալով , թէ իրա ոտը վը-
րայ չի եկաւ սրանց տան վրայ , որ դարձ պիս վարդիթերը հիւանդա-
ցաւ : Վարդիթերը ինքը հօ հաց չի կերաւ , նրանց կերածն էլ հարամ
արեց . ամէնքը մի քիչ սաքի թէ այն ոյին կերան , ու սուփրէն չեն
արին ասելով , խնամին դու բարով հաղար բարի , աւել պակասը կը-
րաշխան , քաւ սունն ա : Նա էլ , — Ասուուծ հացն լլութիւն տայ ,
շատ չնորհակալ եմ , ձեր տէրն ապրի , ձեր ախարերն ապրի , Ասուուծ
մեր բարեկամութիւնը հաստատ պահի , ամէն վախսա զնանք , դանք ,
ուներս երկար ընի էս տանը : Համա ընէնց են խօսում , որ իրանք մէ-
նակ կարան խմանալ . Յևլիուրը հօ ոչոյի հետ իրաւունք չունի խօ-
սել . մի մին քնթի տակին մրթմրթումա քուեր հետ , ու մէկելներին
զիսւով կամ ուսում անում : Հացից որ վերկայան , մենք հարար հրամացից
վարդիթերին ու Յևլիուրին թէ պրծեք խնամու անզը նեքի օթո-
խումը քցեցէք . Յևլիուրար չան , զու ու խնամին մի տեղ քնիցէք .
բան չի կայ էս լրիկուն էլ թող տէքրս մէնակ քինի . Վարդիթեր չան ,
զու էլ զնան նանի ծոցին քնի : Վարդիթերն էլ էդ էր ուղում . վազեց իր
քօխչն բաց արեց , ալ զանառող մինթանին , բազասարի աղբուխը .

սաղրի մաշկները բներեց դրեց իր բարձի տակը , ու մօր կողքին բաթեց տեսաւ դեռ զարթուն աւ ասեց . նանի ջան , շուտ վերկացրու . Թէլի-դարն էլ էկաւ վարդիթերի անկաջումը քնթկալի տակիցը փափսալով ասեց , որ երբ նանը իրան վերկացնի , նա էլ զայ շուտով նրան վերկացնի , որ կեսառն ու տեքերամինքը չի տեսնեն քնած : Ամէնն էլ գնացին քը-նելու , ամէնի ան' յաջն էլ ձէնի էր , ջրօրննմբքիցը դէօր անձակն էս քը-շեր պտի ժամ դնային . պատի հարսներն էլ հօ էնա աւելի ենն ուղում , հարսանիքից դէսը մօր երևա չեն տեսած , էդ օրը պտի տեսմնէին :

¶ .

Ամէն արարածներն էլ հանդոսացան , գիշերը իրա եօրդանը քցեց սմէնի վրա էլ , առելի բներածների . Աշտարակայ քուչեքումը քա-մու վզզոցիցը սավահի սատանայ էլ չէր ժած զալի , մոթը ականակիր . ջանիցը ձեռք քաշած մարդ պտէր , որ էս վախա քուչեքումը մանգայ , էն էլ շատ հարկաւոր բանի համար . համա արի հարցննք թէ մեր պարոն Սօսը մրաեղ ա քնած , որ առաւոաը ժամ զայ : Սատանէքը կըքնեն՝ նա ոչ . նա էրէկուանից Գարեգնենց տանը բերանը մի երկու թիքայ հաց զմելից յետոյ , Վարդիթերմնց զրանը մանուշակը եսփուաջու տակին ձեռումը բոնած՝ ըստուր ընդուր հետ խօսում էր , թէ ինչ ա կարենայ իրան սրտի սիրելուն մի հնարքով տեսնի , ու նրա սիրուր ու-րախայնի մանիշակով՝ զտրնան շիշակով : Լաւ ես մարադ մտել մեր տրանց , համա օխալ տարի աչքերդ պլատրակին անի՞ նա էս վախտ դուս չի զալ : Վարդիթերի հօր աղբամթը խէր , ընկնց մի տեղ ա տուն շինել , որ ընչանք քչերը չի զայ , նրա զրան զոք վար՝ կտրուիլ չի . թէ նրա դուռը . թէ երևանու մէջը մին ա . Վարդիթերն էլ մի երեխայ տևանելում՝ ամանչելուցը երևոր վարդի պէս կարմիւմ ա . ուր մնաց որ նա էնքան բազմութեան միջին տանիցը դուս զայ , էն էլ մինակ : Տիւաւ Սօսը որ մոթը կոխեց աշխարհքը՝ էլ չի հեռացաւ . մոքու-մը զրեց , թէ ընչանք կենայ որ ժամհարը զանգակը տայ , բայբի ժամ զնալիս կարենայ իր բութին տեսնիլ ու մանիշակը տալ . քչերս էլ ընէնց ցուրտ ա , որ թքես զետինը չի ընկնիլ . կասես , չանդալները քցել են , վիրենն . քաշում . համա նա հնց զիսիթ թէ օգտագու ամիսն ա իրա հա-մար : Սօսը ըստեղ շատ մնալով , ցրտից սաւահի ոչինչ խէր չի տօրաւ .

միտքն արեց ինքն իրան ու ասեց . ըստեղ ցուրտ կուլ տաղով բան չի դառնալ . երթամ էո քչեր Գարեգիննոյ տանը քնիմ . նրանց խվաննն էլ պոտի ժամ զնան . մանշամը կը ուսէ Գոյրեղնի քուերը , նու կըհացնի Վարդիթերլա . Ասեց ու զնաց դպրա Գարեգիննոյ տանը . համա Աշտարակ արել մէր մոռաւ . թէ չէ էլ դուռը չի մնալ բաց . նրանց դուռն էլ վաղոց շնած էր . ծեծեց , ծեծեց , բան չի դառաւ . ձէն տաղով էլ ընրանը պատռեց . քնածն ու մնածը մին ա . անուշ քնի վախան էր , ոչ ով դուռը բաց չարեց . չարէն կորեց բաշովը նի էլաւ կոտրը , երթիակալը վ'ր կալաւ , որ մի խուրճը խոտ էր , ու երթիլիցը ձէն առեց . Գարեգինի մէրը անճախ ճմկատալով ասեց . Եղ ով էք : — Արի արի , ասեց Սօսը , տան դուռը բաց արա : — Տօ դու ես որդի : Էս վախտ աջարաջայ . Էդ Բնչ խարար ա . Խեր ըլի Էս թէվոխափն : — Արի դուռը բաց արա , ասեց , խեր չ'լած հօ շառ չարի ըլինի , շառը շառուս մուրդին կըդիալի : Գարեգինի մէրը դրան փակը մի քիչ լիոլիկացրուց չ'լաւ . բայնիքը չի դուռ , մասու կոխնեց կոտիանմերը բարձըրացրուց ու դուռը բաց արուց . զնաց չախմախի տալու ու տանց , աման Սօս ջան , դպրա ոնի տակն արի խմորի թունդրի կողքովը , թէ չէ ճրադ թամբը առաջիկ դրած ա ձէթը լիքը , կըթափես , աշխարհքու ուսոււլահ կանես : Խնդն էլ խնչքան ման էկաւ , էս անտէր չախմախամնը չի կարաց գտնիլ , սատանէն վրէն նոտել էր . խմդջ պատառը զլումը կոխնեց քորսու տակը , կոացաւ թունդրիցը կրակ հանեց , քորութ էլ չկմը որ կայնի . սատանական ա է . յետոյ թօնթօրալով ասեց . զգկում ըլիքա դու , թէ դանուխա . սատանամայ , սատանամայ , մի զատ եմ կրոցրել , զոտի կէմն խնձ կէսը քեղ .⁹ հէնց որ էս ասեց՝ ավլումորելով չախմախամնն էլ դուռ , ճրադ արեց . նոտի , ասեց , տրիմներդ հանա , մին էլ պառաւ պառաւ տեղիցս վ'ր կացրիր , որդի , Բնչ էք Բնձ չարչարում . ինձ տոտի Նրուտաղէմ պոտի տանիք , թէ մասով պոտի տեղու քանդէք , որ ձեր կրակումը էրուումնմ . կովը հորթին , հորթը կուլին , զլուխը ցաւի նախրարածիւ . դուք ձեր քէֆին ման էք զալի ընչանը կէս քչեր . ևս խմ սողիցն էլ մինը բերում եմ , խմն ինձ ա հասնում , ընչանք տուն ա դպիլ . համի քու մինն էլ քեղնից մինը բերուց հօ . ախար դուք մեղ Բնչ պոտի անէք . . . քա , Էդ Բնչ ա երեսդ կապիս լեղակա դառել . որ անդ ևս էլլի Էս վախտ . ձեր տունն ընչի չես զնացել . խեղճ մէրդ հիմի մնուա . տեղդ էլ կըդիանայ թէ չէ . ջուրը նրան էլ տանի : Սօսը լեզուն ծակմորելով պատախան տուրց . որիշ տեղ չէի , մեր տանիցն եմ զալի . պոտի ըստեղ քննամ , որ առաւօսը

Գարեղինի հետ մի տեղ ժամ դնանք : — ինզ պառաւ , սաքի չեմ պատռմ , ինձ ուղում ես խարիլ . դու թէ տանիցն ես զայի , ես Ասուծոց պատճին զամ . ով դիտայ որ տեղ ես էլել . սաքի ես չեմ խանույը . Են ինչ քու մտքումի ա , հրես իմ դրոշամը զրած ա . դու չեթումենց զրանն ես էլել : — Չէ բիրի ջան , (հօրաքոյք) առեց Սուր . ես ընտեղ չեմ էլել , հոգուդ մեղք մի անիլ . Է՞ն , առա , Գարեղինը որտեղ ա քրոնած մանեմ կուշաը քնիմ : — Կաց , կաց , վերկացնեմ , առեց պառաւը : — Չէ , չէ , քնահարսմ մի անիլ , ես քիչ եմ քնահարսմ դրան էլ մի թողար մի դինջ քնի : Ուսուկով շորերը հանեց՝ մտաւ Գարեղնի ծոցը ու թէք ընկաւ . ու երբ որ խմացաւ թէ խփանը Են դլխէն շուտ սրտի վեր կենան ժամ դնալու , սուանչաք տրեց պառաւին , որ իրան էլ նրանց հետ վերկացնի , Անուշի (Գարեղնի պատիկ քուեր) հետ բան ունի , որ հէնց ըստոր համար էլ էս կէս քչերին իրանց տանիցն էլել ա :

Սուր , որ ընչանք սախ վրա Վարդիկերմէց դրանը չորացել էր , այդր աղցան էր գառել տեղը մտաւ թէ չէ , էլ իրան չիմոցաւ . էս օր ես մեռակ , թէ էքուց . համաս Գարեղնի մօր քունը էլ չի տանում . նա մի հանգ քուն ունէր , որ պրծաւ էլ չէր քնիլ . ինքն իրան ով դիտա Բնէ բերթեր էր շմում երինքումը , էլ յևա քանդում . մին էլ լսեց որ Սուր դլխոյը դուս ա տալիս քնած տեղը . մին ստում ա , Արշակիր , ինձ մի բանիկ թող տանիմ , թէ չէ էդ շտոկ աչքը կընանմամ . մին ստում ա , այ ձի եղին փախի , թէ չէ փորդ վեր կած ևմ , ու դհա ըսէնց բանիր ա դուս տալիս դլխոյը՝ շաման էլ ան համականալու . խմացաւ պառաւը որ Սուր քշերս ընաեղ ա էլել , համա չուզեց քունը կարի վեր կացնի :

Բաղումքը հասել էր Շամիկուր — կշեռքի մօտը , լիս ասալը քանի դնում էր , մննծանում էր ուներքն էր զայի , աղօթարանը մօտացել էր , (*) որ Գարեղնի մէրը վեր կացաւ տեղիցը , հրազը վատեց ու աղջկերանցը ձէն տուոց որ վեր կենան . Գարեղինն էլ որ ակրացու էր ժամը սպտի դնար , նրան էլ վեր կացրոց . համա Սուին չէր ուղում զարթնացնիլ , որ նոր էր էլել քնիլ . ընչունքի սրան էլ Գարեղնի պէս սիրում էր ու նրանից չէր ջակում . ահճախ էս դլխէն լիսադէմին մի քիչ քնիլ էր . համա նրան հէնց խմանաս մինը կողքին բրթող ընէր , էս սհաթը տեղիցը վեր թուաւ :

(*) Գուշակով ասալելն են , որպէս Հայաստանումը ճիշտ կիմանան դիշերուան ժամանակը :

Գարեղինը որ աչքերը ճմռելով, արդշտուալով շորերը նոր էր հաղ-
նում՝ երբ աւասա Սօսին իր կողքիցը վեր կենալիս՝ զարմացաւ, ու հնայ
ուզում էր հարցնիլ, նրա աչքով անելոցը խմացաւ բանի տակը ու ուսու
կացաւ. վախեցաւ թէ չլինի մերը բան կարենայ հասկանալ, համա
ինքն չեր հասկանում, թէ չէ մերը նրանց չխօսածն էլ զիսի:

— Անուշ ջան, քեզ համար մի բարդասի աղլուխ կառնիմ, թէ որ իս
խնդրքը կատարեն. հնայ կիմանամ թէ մի թամքած ռախտած ձի
բախչեցիր ինձ էս բանովը, ասեց Սօսը, յևս դառնալով զալս Գարե-
ղին պատիկ քիրը:

— Եղ Բնէ խնդիրք առ իս իս մոհնալին ևս ընկել, ասեց նազ անելով
Անուշը:

— Տես Բնէ, ասեց Սօսը, էս մի քանի մանիչակը, թէ որ հասցրել ես
Վարդիթերին, էլ մաշիլչես. խօսքս խօսք ընի, որ առնիմ աղլուխտ .
թէ ևս ուրանամ էրկու աչքով կուրանամ: Ամէնը մի տեղից մեացին
արմացած, ու առեցին. այս սարայ, էղ մանիչակը որ տեղից ա էս վախտ,
էն-էլ ողիզ չի, ծիրանի. (անսամներն են մանիչակի.) զու զիւ ևս, Բնէ
ևս: — Որանդից որ ա, ասեց Սօսը, դողանալու Աստուած հասցրեց:
համա Անուշ ջան, քեզ մատապ, խօնդրքը: — Անը, առնը տեւէլիմ
ասեց Անուշը, վայ թուք ու թշնամ ըլնիմ ևս. անսնմ երեսս կը բոնի
որ ասմա Սօսնա զրկել. համա թէ որ խոռվի չի առնի, յետոյ արի
էշը ցիսիցը զու համան, փարանը դու դզին, նօխուէց դու դլուխը առնը.
էլ ինձանում մեղք չկայ: Գարեղինը էն կողմիցը բարկանալով քուեր
վրա՝ ասեց. քեզ բան չի կայ. դու անը, թէ կուզես հնայ ասա
աղպէրս ա ղրկել, խնդրում էր որ վեր ունիտ. նու ոչ իս խօսքիցը դու
կը զայ ոչ Սօսի. ևս որ ասմա զնաք քարափառը վեր Բնէ, բան չի ա-
նիլ, ինձ հնադանդ ա. Սօսին էլ հօ՛ է՛ ալամ զիսի թէ Բնէպէս ա պե-
րում: Անուշը աղրօր խօսքերը որ լսեց՝ ծպտոնը կտրեց. առաւ Սօսի
ձեռիցը մանիչակը, դրեց բարդասի աղլսի տռատը, էրմով վաթաթեց, որ
արտուի ոչ: Ընչանք զրանց շոր հաքնիկ շնորվիը, ընչանք զրանց
հարսի զլուխ կապիչը, զանգակը տռին. Գարեղինը մօրը խէշհամբուր
տռեց, ու Սօսի հետ մի տեղ առաջ տռաջ զնացին ժամ: Նրանք էլ
պրծան. պառաւը դուռը շնեց՝ տռաջ ընկաւ՝ տռանը աքլորին պահ
տռեց: հարս ու աղջկերանցն էլ քամակիցը քցեց, դնացին ժամ:

Գարեղինի մերը հարսին տարա իրա կողքին կաննացրեց. աղջկերն
էլ ժամի քնչումը աղջկերանց միջին կաննեցին, որամու վարդիթերը
նրանցից յառաջ Ակել կաննել էր: Ամէնքը մի քանի ծունը զրին. Ա-

Նուշն էլ Վարդիթերի մօտ զնաց , մի քանի հընկն խոչ հանեց՝ կան-նեց . յիսոյ յևս դառաւ նրան բարով տուեց . քէֆդ լու ա , ասեց , ոնց-ես . նա էլ նրան հարցրեց . հարց ու բարով արին իրար հետ ու դէսից զէնից խօսացին . Անուշը տեսաւ որ ուրիշ աղջկերք անկաջ են դնում իրանց , յետ դառաւ դրանց էլ մի լու ներկեց , որ ոչ ով չի կարաց էլ անկաջ դնել . յիսոյ սլիլի բիլի անեկոմ՝ խոհնջիկ մուհնջիկ զարով , քիչ քիչ մըմ-տալով ասեց . Վարդիթերը ջան , քեզ մի լու զատ տամա՞ կարախան-նաս : — Վայ դիմիս , ասեց Վարդիթերը , քու տուած փուշը հինց կիմանստ նուշ ու . Էդ Բնչ խօսք ա որ ասում ես : — Հօ սիրդտ առ-նուիլ չի , հարցրուց Անուշը : — Քա , ես քու ոտի տակի հող ու մո-խիլն եմ , զլաւսա էլ տրորես խօսայ չեմ , զատ տարնիվ պատի նենամաս , Էն էլ լաւ զատ : Անուշը բազդատու տուար յետ արեց ու ասեց , հո-մէցք , քեզ մաստաղ . քեզ համար հինց բանեմ բերել , որ ով տեսնիր բերանը բաց մնայ , խելքամաղ ընկի վրէն : — Քա , էդ Բնչ ա , ձևոր դնչին կայդնելով ասեց Վարդիթերը . Էդ մանիշակը որ տեղից ա էս վախտ . (իր միջին խմացաւ սատանի պէս . փէտը վերցնես , դող շունը կիմա-նայ) :

— Երու հօ լաւ դիմես , էլ Բնչ ասեմ , ծիծաղալով ասեց Անուշը , զորիյ ա վախտու ցորտա , համա դարդիմանոյ աշի ջամկն մեռնիմ . նրա ձմռին զժար չի , նա որ քարը դնոյ՝ կընանանչի . փուշ բանի ուկի կըդառնայ . ախալօրս ողջում ախալերն ա բերել , Էն ուկի քարուլ Աս-ոը , մախսուս քեզ համար . զէ , բաւ , կարմրիլ մի ըստնց շտուով . կընէլ , ես էլ քեզ պէս բազստ տնենացի , ինձ էլ ընէնց ուրախ չաղ տղայ թուշ ընէր , մանիշակ չի , թէ կող դառը բիմն կամ ուղար-լուկ (գառը խոսեմ) էլ զրկէր , հինց կիմանայի , թէ վարդտ . հանց մեղաւորին ով ա տուել արքայութիւն , ես էդ մանիշակը բերում չէի , համա աղպէրս վրէս բարկացսու , թէ դու տար , սում , գարելին ասում էր վեր կալ . հրա դիմ էս էլ ատի , թէ խալիսի աղջկայ վրա Բնչ քրք ունիս , նրան դու հօ սով տարին հաց չես տուել մենածացրել . ինձ ասեց , թէ նա իմ խօսքիցը դուս չի դալ , սուսն ու զորթը չեմ դի-տում :

— Քա ինձ տուր , ասեց Վարդիթերը , ես քու աղպօր դարաւաշն (աղպախն) եմ . նրա աղիու խաթեր համար թէ կող քարափիցն էլ վեր կընելինմ , ջուրն էլ կընելինմ հուրն էլ . նրա հրամանը կասարելու համար՝ վեր կառնեմ ամէն թուք ու մորն էլ :

— Զեմ տալ սուց Անուշը , ընչանք չասես , թէ Սոտի խաթերն եմ սո-

նուամ . սղպէրս հօ չի զլուխը քարին , երևոր աւրին տառել մանիշակ ճարկել դրկել քեզ . բանն ով անի , ես ու զուն , հացն ով ուրի , ես ու զուն . Սօոր փրթի , աղպէրս Խրթի . Եղ Աստուած Եւ չի վեր ունի՛ բանորէն Ել :

— Անուշ ջան , Եղքան մարդի ցեխը չեն կոխիզ ու հանիլ , առեց Վարդիթերը կարմիւտակելով . Հ , դու աղջիկ չես , չես զիստում բանը . (դառ Պարդի զարկար բիլուր .) ում զիստովն ընի , որ Էս քամին անցկացած չընի . հիմի դու չես զիստում , որ ես նրան սիրումիմ . թէ սիրում չընիմ , դարձու Բնչ Եր հետզ ինն սհաթ կաստամանին (երկարաբանութիւն) քցիլ եմ . ձուածեզի սիրուցը , թաւի կոթը կըպաչէն . զիստում որ Սօորին զուք սիրումէք . ես Եղ սրտի ձեզ սիրեմ , ձեզ պատիւ տամ , Եղի . Աստուածանից թաքուն չի նրա սէրը , քեղանից Բնչ թաքուն ընի . . . աման ըստանք խօսածներս կիմանան . եազուղ խաթէն պակաս չի մեզանից : — Հոգս զրանց զիսին , առեց Անուշը . զրանց հնաց չի սրիւարեցի , որ մուխը պնչներիցը Ել դուս հայ . Ել անկաջ չեն դնել , դուքս խօսքդ ասմ ՞

Չորեքշարթի քչերը վա Աւագ հինգշարթի , դեռ Աղամայ մութը չեր կոխել՝ Սօսի մէրը ճրազը վասեց ու Սօսին անուշ քնիցը վեր կացրեց . վեր կաց , ասեց , առ կացինդ , անխօս զնամ մեր դալաթայ խնձորենու , մեղրակենի տկլոր ծիրանու ու մեծ մալայի տանձնու (պտուղների անուններն են) քօքին երեք հետ կացնով տուր . Էս օր աւագ հինգշարթի ա , ասամ . բար (պտուղ) ես տալի տուր , թէ չէ կտրում եմ . Էս ա տասը տարի ա իրեքն էլ , չեմ դիտում , աչք ա դիպել , թէ ընչեցն ա , որ մի լոլոկ (պտուղ) չեն տալի . ողորմածիկ հերդ ձեր պէս աշխատաւոր էր այ . անխօս էս օր վիր կրկենար՝ կրթմար ծառ չեր թողալ , կըտար կացնով . քանի լիամազն սաղ էր , ամի՞ն բարութիւններս էլ կար . ինքն մեռաւ՝ էլած չէլածն էլ հետոր տարասւ . Սօսը անխօս վեր կացաւ առաւ իրա զօդ զրած (ծայրը նոր պողպատած) կացինը , կապեց իրա շիրմայի դաստաւոր զամին ու մտքամը մի երկու հետ Աստուծոյ անունը տուեց , դեռ ոչ իւր արած ծէքէլահան ոչ շառ , քցեց ևափունջին վրէն ու իրանց յիքին զնալու տեսլակ , իրան քցեց դպա վարդիթերենց Յօշականայ զլիսի միքին : Էն մութը ականակիր ժամանակը , նրա համար էն քարքարուաս սառցակ ընկած՝ օլոր մոլոր քուչէքը դառել էին , հինց խմանաս , մի կանանչ ծաղկալից մայնառան դաշտ , որ դմիչ չանես , թէ ծաղկները ոտիս տակին արորես . հինց մամսզաս վրովը , որ նրանք էլ չխմանան , թէ իրանց նևղացնող կայ . ընչունքի Սօսը հինց էր վազում , որ ոսի տակի քարերն էլ չին կըրում խմանալ , թէ իրանց արորող էլաւ . զնաց հասաւ միքին ու յևովն պատիկ անկուցը բռնած , ընչանք էն մենծ հասաւ պօպօքուն էլ , ամի՞նին երեք երեք հետ աալով ու « բար ես տալի տուր , թէ չէ կտրում եմ » ասելով , մի վլխիցը ընկանք մէկելը զնաց . շշլլութիւնիցը ուռունցն ու բարդոնցը ու ուրիշ անրար ծառերին էլ էր տալի . Յետոյ միաքն ընկաւ , որ էս օր , թէ չօլի դաղցը (սիրոնայ , անանուխ) ճմով համես շուռ տուած . քօքը զուսըն արած , կանանչը ներքեւ անկես . կըսիստոի սուսամբար . ընդոր համար զնաց մի քանի կունձլը (ճիմ) կտրեց դաղձալի անդրիցը , բերոց մի քանի անդերում շուռ տուած անկեց , որ սուսամբար դառնայ . Էլ իրանց յիքին միտք չի բերոց . աչքը վարդիթերենց համար էր միջակ լսա տալի : Երբ որ ահաս , թէ դամք էղամք ա (քիշա մեացել), որ ժամը տան , ծեքծեքուում ա էն ա , յետ դառաւ տուն .

Նոց խմանում էր, թէ աշխարհքս իրան կին տուել, ու ընչունքի դիտէր, որ
վարդիթերը էս առաւու ժամ չի դալ՝ ասաթ չի, ինքն էլ վաղուցուան
թուրքացածն էր էղ բանումը, միաւքն էլ չի թեքեց ժամ զնալու համար:

Խրիմնագահն Սօսը տանը նստած՝ մօր հնա միջնակ թաքուն թա-
քուն խօսում էր, մօր զիխումը նստացնելու համար, որ վարդիթերին
իրա համար տղի, լսեց, որ ժամհար պապը դռնիցը ձին տուեց, թէ
յանրաջի(տիկին քոյր,) կարադ ընրէք ոտնալուէքի համար, Աստուած-
ձիր կուլուր կաթնալի պահի Սօսը էն սնաթը տեղիցը վեր թուա առանց
մօր հրամանին, զնաց մաթրաթի(մնծ աման կաւէ) տակիցը ալանի կա-
րադը հանեց դունդ աշած՝ տարաւ տուուց ժամհարին: Խեղճ պառաւը
տան անդամ տուեց, թէ կէսը մնայ դատիկ շարաթէ իրիկունը ձուաձեղ
անենք. համա Սօսը նոր էր ջերմնամուացել, հոգու համիկն զանկ,
սադ դունդը վերկալաւ տուուց նրան ու կաւ մօրը, թէ նանի, կաժ
էլ կրնա մանած էս մնծ պասին, մի կաժ էլ տուր՝ ուները սրբի
տէրտէրը: Պառաւը ինչքան էլ վրէն բարկացաւ, թէ տասը կաժից
դիւման էլ չունիմ, երկուուը պրի հաստ դերձան անեմ, չորսը բարակ,
չորսն էլ պատրիքի համար ա պէտքը, Սօսը անկաջ չարեց, մի կաժ
էլ վեր կալաւ կարադի հնա տուուց ժամհարին: Ժամհարը օրհնելով
նրան, ումբը ու արև խնորդելով, ուրախ ուրախ յևս զառաւ, քանի
շատ ընէր եղը, նրա համար լաւ էր. կէսը կանթըթիւնը (թաղնել)
իր կճուճը կըկոխէր, կէսը կըտանէր ժամը. կամն էլ, որ շատ ընէր,
մինն էր պէտքը իրիկուան համար, մնացողը իրա երեխանց շորերը կը-
կարէր, հալբաթ շատ տուողին շատ կօրհնի, քիչ տուողին մի երկու
խօսք կասի, էն էլ կիսասիիրտ. համա ով որ ըսկի չի տայ, դու արի
էն վախտը տնս, թէ մեր ժամհարի բերնիցը ընչնը ա վիր թափում
յևս դաւենալիս. ըմբնիցը դուս զայ ծոցը թափի, ինչ օրհնանք, որ
նա կարագ չի տուողների համար անում ա:

Խրիմուան ժամը որ տուին, Սօսը էն սնաթը ժամումը հազիր էլաւ.
հէնց տէրտէրը զդեստաւորուած չոքեց, լականը դրուց առաջը, մի եր-
կու ծեր մարդկանց ուները լուաց, մանածով սրբաց ու մի թիքոյ եղ
քսեց, ուրիշների էլ ձևոների երևու լուաց ու եղ քսեց, Սօսը արանք-
ները ձղելով անց կացաւ ևկաւ իրա ձևոն էլ զիմ արեց, ջրու ամիկ
տուուց, Գարեղնիցն էլ, որ եղը բաժանում էր, եղ առաւ, տեղ չի թո-
պուց, զլուկին ու աչքերն ու անկանջներն էլ քսեց, մի քիչ էլ ձեռի ե-
րևոնին դրած՝ տարաւ, որ իր մօր եղի պուլի մէջը քցի, որ կովորը կաթ-
հազի ընին:

Արբաթ քշերը աքլորիցն յառաջ զարդները անփոսակ էկան իրանց դուքանները բաց արին , զնղաններին ելեք հետ չաքւցին , որ Արտաւազդի զնջիլը հաստանայ , չի կարենայ դուրս զալ աշխարհը քանդել , տակ ու վրայ անել ու ել յետ շինեցին դուռը , զնացին ժամ կտակ լսելու .

Փոստք իրարձունի վախտը ճրագները անցրին , սեղանի վայրագոյրը քաշեցին ու Գարեղինը նի էլսու սեղանի քամակիցը բարձր ձենով կարգայ կտակը ժողովուրդը սաղ ջուր կտրեցին , աչքները մինը մի պարկ դատաւ լալուցը . չիմանանք , թէ Քրիստոսի համար էին լալի . Էն կը-տակի միջիցը տէրտէրն էլ չէր մի բան համկանում , ուր մնաց ժողովուրդը : Ամէն մարդ միտքն էր բերում էս օր իրանց հին ու նոր մեռները , տեղի նոր մնուատէրերը , որ էս օր պատ ուրբաթը կտակ-րէին , աչքներիցը ուքուր ուքուր (ոլոնն ոլոռն) վեր էին ածում . կլաքի , թէ մի քիչ ազիդը ընէր մեռածը : Կնանոնց ազի ու ողբի բայ ու բոյցը կտակի ձենն էլ չէր ստուում . ընէնց մրմիջալով ամէնը իրանց ազիդ մեռների անունը տալիս ու զօշներին բոնցկում էին , որ քար ու պողպատի պիրտ կունենար տեսնողը ու չի լաց ընողը . բնը մարդ , որ դիմանայ , սիրտը փուլ չի դայ : Ճրագը որ վառեցին կտակից յետոյ , ոչ մինի աչքն էլ բան չէր տեսնում . ճրագները դժի վժի էին երեսում իրանց աչքներին :

Ժամը դուս ևկաւ , նոր մնուատէրերը ոսպախաչուի ջուրը դրին - ինչքան բարեկամ կնանիք կային , հաւաքուեցին ու օրը մի քիչ բարձրանալոց յետոյ զնացին գերեզմանները . նոր ննջեցեալի գերեզմանի չորս կողմը կտրեցին ու մնուատէրը վիր կալաւ բայտին . միլիներն էլ ձեն քաշեցին , ընչանք տէրտէրը էկաւ օրնաց , նոր վեր կացան է-կան տուն : Ճաշուայ ժամից յետոյ ոսպախաչուն դրկեցին ժամը տէր-տէրների ու մարդկանց համար , իրանք էլ հացից յետոյ մին էլ ուռք արին մեռվի համար : Ժամի հացի վրայ երեք ողորմաթաս խմուեց . մին՝ էս սեղան պատրաստուաց հին ու նոր ննջեցելոց հողին , մին՝ ում համար , որ սեղանը շինած ա նրա հողին , մին էլ՝ Աշտարակ գեղումը ինչքան ննջեցնաւէք կան նրանց հողին տէր լուսաւորենց : Գարեզինն էլ տիրացու էր , էն սեղանի վրայ էր . համար հարցնենք մեր Ասու համար , թէ որտեղ ա : Նա էս օր Գարեղնին չի տեսել . նա առաւ-օստեան ժամից դուս ա էկել , թէ չէ , զնացել ա մի դարբնի դուքանում դուլ (Ճառայ) դառել մի քանի հատ ուրբաթարօր (*) առնելու համար . մի հա-

(*) ուրբաթարօն է փոքր երկաթի կոռոր , կտացրած երկու ծայրը իրար վրա չախմախի նուսան , որ կը կարեն երեխեքանց զլիսի կտակ ուսի վ բայ , որ աչքը չի դիպէ :

ար նրկու ձու ա , չկայ վորթօյին գարի , բնշն ա բոլ Սօսենց հաւերը . քամն ձու տուից՝ տասը ուրբաթարօր առաւ ու դպա վարդիթերենց դուռը , թէ ինչ ա , տայ նրան , որ նա կարի իրանց երջիւեքանց ուսներիցը , ևս թասակիցը + Սօսը ոնց որ ուրբաթարօրն առաւ , ընէնց մաց ջիրին . վարդիթերը ծէքլահանն մի հնա զում էր Ակել , ջուր լցրել ու տուն մտել . նա ժրտելից կարէր նրան տեսմնել Տեսաւ Սօսը + որ որ ճաշ դառաւ , ճաշուան ժամն էլ վաղուց դուս ա Եկել , քոս վուշիմն յնտ դառաւ իրանց տունը : Իրանց ալսափ երեխայ չտնէին , որ նրանց զլիխն կարեն , առանց էն էլ դարբնի աշկերտը մինք բաժանեցու տուել էր իրանց տանը . Հաց կերաւ սրբաւ ու մի քանի հաս մոք ներկած ձու , որ մէրը էրէկ էր ներկել , մի երկու էլ իրանց մէրուն (պառաւ) հաւերի ձուերիցը , մի ձու էլ կոտրեց , դարդակեց , մէջը ու ձութ լցրուց ու էլ յնտ ընէնց կալցրուց , որ բէլլու չ մի , վեր կացաւ դնաց Գարեգնի մօսը :

Գարեգինը մոնթերին շարաթի իրիկուան զրքերը սերտացնում էր , որ կարդան : Սօսը մասաւ ներս ու հանեց կարմիր մուշք ձուերը զրուց Գարդեղնի առաջը . Էքտց , առեց , նշանած տղէքը իրանց սիրեկանների համար նաշխած ձուեր կըզրկեն . հէնց Ես պափ խաղմի տակով , դուշմանի սրտով ընկամ . առ էս ձուերը նաշխին , տեսմնենք , բակրի թէ մի սամթով զրկենք նրան : Գարեգինը , որ վաղուց մաքումը զրել էր էղ բանն անկըլ , բալքի թէ վարդիթերի մօս սիրաը նաշխած ձուով է ա կրակի , Սօսի վրայ դարձնի , ձուերը վեր կազաւ ու ասեց . Տրէդ ժամի բակումը տղէքը ձու են խաղում . զնա դու ընդեկ ուրախութիւն արան . ես ինչ կընաշխեմ , հաս աշխարհքումն մնորդ չի զուս Ակել , որ միտքն խանապայ : Սօսը , որ դուս էլլու , Գարեգինը , որ աշխարհքումն բան չի մնացել որ չիմանանայ , առաւ ձուի պողպատէ զալսում ու մի ձուի վրա քաշեց Սօսի սրտովերքը , Վարդիթերի կուռըրանած՝ բարչէ միջին վարդ քաղելում . Սօսը քաղում էր , Վարդիթերը վունջ անում . տակին էլ զրեց , թէ «զոր Աստուած զուգեաց , մալոդ մի մեխնեաց » : Ակել ձուի վրայ մի իննձորի ծառ քաշեց , մի կարմիր խնձոր վրէն , որ հոտը աշխարհքը բռնել էր . մի քանի ջանել տղէք քար Եմն քցում , որ էղ խնձորը վեր ընկնի . հոտմա ոչ ով չէր կարում վեր քցիլ . ումուսները կտրած յետ Եմն ուզում զառնալ . յետոյ Սօսը գալիս ա , որ քար քցի , երկու օձ , որ ֆշշացնելլա մարդի երեսի հէնց քամի Եմն տալիս , որ սառչում էր ու տղէքը երեսները փախցնում էին , էղ օձերը պատզը բնդրաններն առան ու զուխ զլիխն առին , որ Սօսի քարը

չի զիազչի . Աօրը հէնց քց'ց քարը , որ երկու օձի զլիսին էլ զիազա . նրանք շամնցին ու խնձորը վեր ընկաւ . տակին էլ զրում , թէ չէս բանը թթու էր թան չեր , ամէն մարդի բան չեր » . մէկ ձուփ վրայ էլ քաշում ա Սօսին մի սխալտակ քեւահան ձիու վրայ նոռած , որի բնդիկոցը կրակ էր վեր դալի փնչացնելիս . Վարդիթերին զաւակին դրած՝ մի սարի դօչի հէնց ա վախչում , որ թօղը վեր ա ըլում ու թօղի միջիցը մի ծափ չափ ա երևում . շատ ձիաւորներ էլ քարակիցն ընկել են , ուղղում են բռնիլ . շատերը ճամփին ձիու վրիցը դիմի վրայ ընկնում են , շատերն էլ մի ոտը մնացած օրգանդուի միջին , ձին քաշ ա տալի . համա էնքան հեռուեն , որ Սօսը նրանց աչքին չի երևում ու իրանք չեն հասնում , սկսում են յետ զառնալ . տակին էլ դրում ա , թէ «աշխարհը խելքութիւնով ա կերել . որ ոչ լույցէ ունկամք , լույցէ թիկամք » . մի ձուփ վրայ էլ քաշում ա էն մանիչակիը , որ Անուշը (Պարեղնի քոյրը) տալիս էր ժամումը Վարդիթերին ու առնում դամիչն . ու ա՛յին էլ դրում ա թէ սաքի Վարդիթերի բնդիցը և սիրելեմ սերն երիսին , ու համա թերն երիսին . ով յա սիրածն ինձ չի տայ , Ասու կը ակն երեսին : Չուերը նաշխելից յետոյ կանչեց Սօսին , որ ընչանք հիմէ իրա սերտ ձուերովը մի յատն ձու տարած կը լնէր , շնանց տուոց նրան , ու Վարդիթերի պատի աղաօրը , Փափակին , որ իր մոնթն էր , կանչեց ձուերը տուոց , որ տանի իրիւունը հէնց տեղ դնի ; որ առաւօար մէրն ու հէրը վեր կենան տեսնին ու պատուեր տուոց , որ էս խօսքը ըերնիցը չի հանի , հէնց որ տակն խանայ բանի , լոյ խօսածն իր ափունի ու նանի (հօր ու մոր) , զայ մի մին իրան խաբար անի , թէ է ինքը նրա աչքը կը հանի :

Ե .

Վարդիթերի մէրը դատիկ շաբաթ առաւօտենց շուտով վերկացաւ , թունդրիցը կրակ հանեց , ճրաղը վառեց ու մարդին էլ վեր կացրուց , որ ժամ զնայ . հէնց ուղղում էր զորս զնայ՝ մի կարմիր նաշխած ձու առաջնին վեր ընկած էր . կռացաւ , որ վիր անի՝ մինն էլ վիրի դի՞ը , մին էլ մէկ էլ տեղը , կասես թէ տան միջին ցանած ընէր . այ մմրդ , առեց . էս ինչ հաշխաներ են աչքիս երևում , քնած Բմ , թէ դարթուն . մի քանի նաշխած ձու ըստեղ շաղ տուած թափած են . բնչ սիրուն են տէր Աստուած . երևին խոչ հանկով

կրագին մօտ ա բերում . հէնց մնի վրայ մորի ա տալիս՝ ընք , Առն ու Վարդիթերը . մէկելին՝ էլ ընէնց . մարդ , անաքանդ , ասում ա . արի , անս ինչ կայ , դեռ քնած ես , սոներդ ջրումը . աշխարհքում ինչ խարարութիւն ունիս , խնդ միստիս + Տօ ինչ ա , խանի խարարի կը-նիկ . էլ ինչ քչերհանայ լիաթաթիւմ զատիկ շարաժ առաւօտահան զներդ բոնիցին , իծանըդ տուն էկան . տեսնեմ՝ էղ ինչ ձուեր են . Առաւ կնկայ ձեռխցը ձուն , մարկ տուեց թէ չէ , մատը կծեց . համ , սանց . բանի միջին բան կայ . էս թէ արել ա վուչ կենդանի մազ-մանի աշխերտ Գարնպինն ա արել + ըստել էլ մէր Փափակն ա բերել . ես նրա կերակուրը կեփեմ + թող ժամը զուս գայ , բարի լար բայ-որի , տես ինչպէս եմ անպատիւ անում , ցեսը կոխում , հանում նրան . տէր Աստումած , էլ բերանու ինչ ա զալի յևտ զառնում . զատկի շարայի առաւօտենց , դեռ ոչ խէր արած ոչ շառ , դեռ երեսիս խաչ չի հանում ընչեր եմ անսնում . ընտուր են ասել կոփել որտեղից ա զուս գալի . համա բան չի կայ , թող բերաններիս հուպ տանք , էս երկու աղիզ օրերն էլ անց կացնենք , հաղորդութիւնի օր ա , զատկը յետոյ ևս նրա աշքին հէնց երեսամ , որ քանի իմ անումը լսի , օխան օրին համիայ էլ հեռու փախչի . դու թող ձուերը տանք մնան , ես ժամից յետոյ Արշատիրին կարդալ կտամ . հովի տրիներս բեր . համա չէ , էս օր աղիզ օր ա մաշկներս բեր հաքնիմ , հովի կամեն , թէ պինդ մարդ ա , հինդ աղայ ունի , էնքան հարստութիւնի ու կորիաթի տէր ա , ըսէնց օրը արեխս ա հաքնում . չեթումը մաշկները հաքաւ զնաց առուի ափը քուչումը էն սոսու ջրովը երեսը լուսաց , փէշովն էլ որրեց ու Աստում կանչելով , Հայր մերն ու Անկանիմքն ասելով , զնաց ժամ . կնիկն էլ մի կէս մամթից յետոյ չարսաւը զլիխն քցեց , հարմեներին ու Վարդիթե-րին էլ , որ վաղուց պատրաստուել էին , քցեց քամակիցը ու զնաց ժամ . Ժամը որ արձակուեց՝ տէրտէրը սկսեց խոստովանք անելը . մարդի , թէ կնկայ՝ կողքին չոքացնում ա ու ինքնի լիան Մողեն ջրի պէս սասում ու յևտ զառնում ողորմնացի տալի . ոչ կնանանց , ոչ հարմերի , ոչ էլ աղասի աղջիքրանց ճէնը նա չի լսում . հէնց էն ա , որ առաջին չոքելիս ու վեր կենալիս քնիթկալները կըկացնեն տէրտէրի ձեռին , որ փիլտնի տալիցը մէկնում ա նրանց . սաքիթէ աշն տունն . հաստատ հաւաստա-ցել են , թէ տէրտէրի ձեռը , որ զլիներին դիսպար , մնզքները զբնաց . Բանը շատ երկարեց . տէրտէրը տեսաւ , որ ժամմանել չիմն ու նշխարք դործե-լու , խոստովանուուները քանի կենում են շատանում հն կանչի տուոց գարեղնին , ոտ ու ձեռնընկաւ, մի քանի ձու էլ կաշառ ք խոստացաւ , որ նաու ի

աղիրը մաղի , խոնար անի ու կամաց կամաց նշխարքը դործի , ընչանք ինքը մի քիչ թեթևանայ :

Տէրտէրը ջահեղներին խստովանացնելից յևաոյ՝ պառաներին էլ անց որ էւաւ՝ զիսիցը ռաստ արուց . գարեղնի շինած նշխարքը տուոց ժամհարին , որ տանի գևզումը բաժանի . ամէն մի նշխարքին երկու ձու աւ ինքն էլ նատեց նշխարք դործելու , մի կողմիցն էլ մասնառու- փը կողքին դրած՝ եկող երեխանցը , որոնք չէին կարում ընչանք իրի- կում սոված մնալ , եա թէ չէ պատիվներ են , որբութիւն էր տալիս : Ամոր հիմները հիմն էին հաղորդուում , մնածերը ծումէին պահում ընչանք իրի- կում , որ պատարազից յետոյ հաղորդուեն : Ժամհարը միաբար (անդադար) երեց ձուն ու խոխաղի մէջը լցրած , բերուց համարով յանձնեց աէրտերին ու էլ յետ նշխարք տարաւ . ամէն տուն էլ պար տար . շատ կնիկ էլ իրա չերմեռանդութիւնիցը երկու ձուի տեղ , չորս , հինան էր տալի , որ ժամարարը իրիունը իրա ննջեցելքին պատարազի միջին յիշի :

Ճաշ որ թեքուց , արել մի քիչ կախ ընկաւ , աէրտերը նշխարքից պղծաւ ու իրան թափ տուոց ժամը տալ տուոց : Տես հիմն Աշտա- րակու թունդրները . էս որ առաւօտնոց չէին վառել . էն էր , որ էրեկ ա- ռաւօտ քուրսիքը դրել էին . հիմն որ տանիցն ասես , որ ծիրանի մուխը երթկովը դուս չի ընում : Ամէն տան մի պառաւ . կնիկ մնաց կերա- կրները եփելու իրիկուան համար , որ իրանց սովորականն ա . օչիսիցը նոր հանած ձուկը սասպակած , զեղաքունի խաշած , փլաւ՝ ձուաձնին էլ տակը քցած , չոկ ձուաձնի նոր թարխունով՝ ու կողակ : Մնացալ- ները , մարդ ու կնիկ , հարս ու աղջիկ լաւ լաւ շորերով գարդարունցին . մարդիկը , ով ունէր , իրանց մահուա չուխեքը , ով չունելը , լանքայ կա- պէն , զատակ արխալուզը , սև զայթանից էլ դուկմայ կապած՝ էն լին ալջակները (մաջէքը) ձեռների երեսին քաշքցած , բոխարայ կամ զրիմի մորթուց դտակը զիսներին , մաչկըները՝ որը բարձրակրունկը ըն- չանք ոտի կէսը , որը տափակ կրնեկով . կնանիքը զիսները կապած , խուշուշները (լաչակի ճակասի վրայ եկածը) քաշած , քնմիները կալած , քաթիրայ , մինթանայ , զանառուդ կամ զասարի փոխանով պը- ռընկները շատերինը զիւլարաթունով ասդարուր կարած , չարտանե- րը որը պառաւը էր , երկու տակ քցած , որն էլ ջահել ա՞միտակ տուար գտակիը խրած՝ զիսներին քցած . աղջկէքն էլ՝ որը նշան դրած ա , կարմիր չաղբաթը ընչանք անչների ծերը քաշած , սաղրի մաջները հաքներին . որոնք էլ դիու անչանդնիլ են , բաղտասի ողջուխը բիկ ասկովը կալոմիր թշերի կխառվը կապած , ճալուերն (գանգուր) էլ կէսը

Էս թշի վրայ փուած՝ կեսը էն, աւքները զեղ դրած՝ գնացին ժամ. համա խեղճ աղապտ տղեքանցը ոչինչ չունին զատկութիւն. թէ հարուստ աղայ ա, կրնի, որ հերը սատանի զլուխը արորած ընի, զողի քարը վեր ածած, մի ջուխտ սուր քնիթանի լափչին առած ընի. թէ աղքատ են, ել էն ջուրն ա, էն ջաղացը. մի փօստը (զսակի միջի մորթուց աստանը) դուս եկած գտակ ա, մի պատուրուտած արիստրանին, մի ջուխտ ծակուած տղափ (կարկատան) դրած տրեխ. դորթ ա շորերը պատուած կրնի, համա սրտները հենց ուրախ կրնի, որ տեսնողը կասի մի տուն խաղինայ ունին. ժամը հենց լիքը կրնի սրանցով, որ տաեղ քցես, զետինը չի ընկնիլ. Անր Սօսն էլ ըսօր ընչանք իրիկուն ծում ա պահել, ուզում ա հաղորդուի. վաղուց զարգարուել ա, եկել ժամումը կաննել, վարդիթերն էլ իրահարսների հետ էլ ծում՝ էկաւ ժամ աղջկերանց միջին կաննեց, որ նա էլ պտի հաղորդուի Շատ տղեք էլ՝ մի մին կարմիր ձու կլպած՝ աղ արած, ովատակ լոշ հացի միջին կորուած՝ ջիբներումը պատէլ էին, որ հենց ողջումը վեր զայ թէ չէ, սադ սադ քցեն բերանները:

Պատարագի վերջին մարգկանցից բանած ընչանք կնանիքն ու աղջկեքն էլ հաղորդուցին ու քաշուեցին իրանց աները Տէրտէրն էլ մի տիրացու կամ ժամհարը հետը քցայ՝ ընկաւ տընկըր օրհնելու. թուղթը շուտ անըր, ապասին կուլ տուր. մի տուն շարական ա, մի կարճ աւետարան, ընչանք ասել են, ջաղացի կոտրած չախչախ են դառել. կարդում են ու փողը ծնկ կացնում. համա չեն խմանում, թէ սուը վեր կարած ջաղացը, խարաք կանի ցորնի հացը Ժամաւորը դուս էկան ու զնացին սուփրէն փոեցին ամէն մարդ իրանց տանը. հաղորդուուղներին մի քիչ դիմի խմացը դուս հաց չի կերած ու ամէնը մի մին կարմիր ձու ջարթելով իրար հետ խաղալով «Վրիստոս յարեաւ. ի մեռելոց» սաելով, մէկէն էլ՝ «օրհնեալ է յարութիւնն Քրիստոփրի բարով, մէկէլ սադ աչքով, ուրախ սրտով հաննենք էս օրին» պատասխան տալով, սկսեցին յառաջ բերանները ձուով բաց անեղութում էին, խմում իրար հետ ուրախութիւն անում. Շինչ կըլի մի աղքատ զայ, առում էր տանսկինը, մէր սեղանիցը մասնաւորուի, փառք քեզ Աստուած, մէր աչքը մէր դրանն ա. հիմի քանի մորդիկ կան, որ չօվերում ըլմինին. քանինը հիմի ցամաք հաց էլ չի գտնուում որ իր սուված ութիւնը լցնի. քանինը հիմի բքարք ընկած ցրտին մաստաղ ա էլել. հաղար բերան զոհամ քիմից խմ Աստուած, դու խմ երեխեքանց աչքը իրանց դրանը պահես. շատերն էլ հիմի 10, 15 աեսակ կերա-

կուր տռաջն ա դրել , շակոթիմիցը չի խմանում , թէ որն ուսի , որը
բողայ . ևս չեմ ուզում ընդո՞ք . էս քիչ հացը թողի խմ տանիցն ան-
պակաս ընի , էս թառուր ապիզ օրը իմ դուռը մի աղքատ բաց անի ,
կամ մի զարդի մարդ ճամփիցն եկած ընի , տեղ չտնենայ , դայ մեր հա-
ցը հալալ անի , Ենինձ հսմար լաւ աշեմ քանց հարուստների լիքը
սուփրենու : թէ որ Աստուած սրաներովն էր անում մի աղքատ տուն էր
մանում հացի վրայ , են ոհամբը տեղներիցը վեր էին թռչում , համեցիքը
բարե ջան , աղպեր ջան , համեցէք հաց անուշ արան , ասելով՝ տա-
նում սուփրի վիրի դիր բաղմացնում . էրթալուս էլ նրա խորդինը
կարմիր ձուով , ձկնով ու ուրիշ բաներով լցնում թէ , տար հըմկերներ
կունենաս , նրանց էլ տուր չէ Ամէն մարդի տան էլ էս իրիկուն ը-
սինց ուրախութիւն ա ըլում անոյատնառ . համան խեղճ ջրատար Սօսը
ժամփոց դուս ա էկիլ , զնացել իրանց սուփրի վըսյ նասել , բնիանը
հաց չի դնում . նա միտք ա անում , թէ էս իրիկուն ամէն նշան դրած
աղջկայ համար հարանախայ ա զնացել , ձևոքերով շոր , ջլուներով
դոթայ , հարիայ , ոտով ոչ խար ու նրանց վեսէքն էլ ուրախացած
կընին , որ էքուց զնալ պտեն դանքաչատնեմ . համան ինքը էսքան աշ-
խատեց՝ չկարաց իր մուրազին համել . մէրը , աղպերտինքը զօռ են
անում , թէ այ տղայ , հաց կէր , էս թառուր իրիկունը մեր հացն էլ
հարամ մի անիլ . նա սառում ա , թէ իշտահ չսանիմ . իշտահն սառուի
տակին կընի այ որդի , ընչել ես ըտինց անում , սրճնուստալով սառու
ա մէրը . նա հինց պատասխան ա տալի , թէ Աստուած սիրողն ինձ
չի զօռ անի , հաղորդուած եմ , վեսս կըտայ . խեղճերն էլ ահու
սուս են կենում , ընջանք կացաւ Սօսը , որ հացը վեր կալան , տեղիցը
վեր թռաւ , որ զնայ ժամփի բակը , ախտախ (զատկի մատաղի) կուշար
որ մորթել էին ու քերթում էին . ու ընչունքի էս օր ինքը խառնուած ա
էլլի , չի կարացել ցախ տանիլ , հաց էլ դեռ չին դրկել , մի սառուդ շա-
ւակ ցախ չակամեց , տառը հաց մի տաման աղ էլ տուեց իրա սրտիկ
աղպօրը գեղամին ու զնաց մատաղի կուշար , ցախը վեր քցեց ու մը-
տաւ ձու խաղացողների մէջը , որոնք հացը կերել էին թէ չէ , էկել էին
ընաել , մոնին ու քանան ձու տանիզը մին էլու . Սօսը էս քշեր բաց
աշքով լիսացրուց մատաղների կշտին , ձու խաղալով կամ սրիների տա-
կը ցախ անելով : Աղօթարանիցն առաջ , որ ժամը տուին , զնաց ժա-
մի դրանը կարենին ճամփին սպասեց , որ հինց դայ , տանի մի ա-
ման մատաղի ջրիցը տաք տաք էրևախ չաղ տեղիցը խմացնի . որիշ
սիրացուերն էլ էկան շուրայ խմեցին ու մտան ժամ :

Բազմութիւնը ձնի նման իրար վրայ թափուելով ժամ են զալի . դռները շինել են , ինչ կայ , չկայ թողիլ տանը , իրանք եկել լցուել ժամ . թէ որ մինը Աստածոյ ահը սրախը հանի , աբուը վեր դնի , երեսի մեռնը լուանայ , էլ ծակ չի թողալ , որ մանի ոչ , մաղին ու մուռը (Կողած , չեղածը) կըհաւաքի , դուս կըգայ , ոչ ով բան չի խմանայ . անաշնները 365 օրն անյ են կայնում , մինն էլա հոդին միառքը չի քերում , ժամ գալսա . թէ որ հարցնեն , թէ ընչի չես ժամ գալսա կամն , ևս որ ժամ զնամ , ժամը տեղիցը կըփախի , հիմի էս երեք օրը սաղ տարուան փոխարենը հանում են : Ժամը որ վերջացաւ , Սօնն ու գարւինը , որ սովորութիւն էին արել , էկան տէրտէրին ասին ; որ իրանց աղջումը նորիր տէրտէրին էլ աւեստարանը սռաւ ձեռք , կաննացրուց երկուսին ատենու տակին , սեղանի առաջին ու ողջումի աւեստարանը կարդաց պլններին , պահպանին ամեց ու օրէնեց նրանց , որ սիրով կենան : Մի քանի որիշ աղէք էլ իրար հետ ողջում տուին , ողջում ախտէք դառան : Մի քանի էլ կնանիք , հարսներ ու աղջէք էլ իրար հետ ողջումաքիր դառան , սէք հաստատեցին . Վարդիթէրն ու Անուշն էլ իրար հետ առաջուց խօսք էին տուել Ծառզարդար կիրակի օրը , սրանք էլ իրանց մօր հրամանովը էկան աւեստարանի տաղին ողջումքիր զառան :

Ժամը որ արձակուեց , տունը մի մարդ մի մին վարիաջ ու աղլուխ ձեռներին կիսուեցին մատաղի կշախն ու մի վարիաջ մատաղի շորջայ ու քանի էլ տամու հոգի կան , ծծէնը երեխիցը բռնած ընկանք հայլսուրներն ու պառաւները , ամէնի համար մի մին լոշի մէջ փաթաթած մատաղ առան : Ես օր ամէն տան էլ անպատճառ սրտի մատաղի ջրով շորիայ ըլի . ընչանք սուրբ ախառութ չժամախուին , բնաները նշխարք չեն դնի , թէ կուզ թուր ու սուր խաղայննս երեսներին , շնոքներովն օձ վաթաթ աթ տաս :

Գարեղինն ու Սօնը ժամոյ զնացին Գարեղինն տունը : Գարեղինի աշկերտները էկան խողիի (վորժապետ) զատկը շնորհաւորելու բերքին նրա հսմար ձռւածեղ , ներկած ձռ ու մի շոշայ արաղ . Վարդիթէրն էլ իրա աղքածք հետ զրկել էր թանի միջին նաշխած երկու ձռ , մինը Սօնին մինը Գարեղինն . սրանք էլ անդամիցը երկու ուրիշ զալամքաշ ձռեր զրկեցին , որոնց վրայ զրած էր թէ « Ահ և ձեղ մնձ աւեսիք » . Քրիստոս յարեաւ ի մեռելոյ : Պատի հարսների բաղդիցը էսօր օրը պարզ էր , արեւ լաւ աւաքայնուամ էր , ձները հազուել պրծել էին . կատահանքի դուզը կանանցը քիչ քիչ բռնել էր նաշ որ թեքուեց՝ կըհնանիքը առան իրանց խիզանուացը , աւելի սրբի հարոնատէրերը զնացին

իրանց թմնամու տունը , վեր կարան ընտեղից խնամոնց թօրոնն (ժողովը) , նրանց ամէն բարեկամներին , ազդ ու ընտանոնցը , որ առաջուց խնամին կամէկ էր իրանց տունը , զնացին սուրբ Սարիամ եմի-զեցումը ուխտ արին ու անց կացան ժամի քանակից , կաւահանքի դուզը : Այի դու էս անդ աղասի տղեքանց հալը տես , ով մի քիչ հունար ունի , կանումը զօրութիւն կայ , պափ բանացնի աղջկեքանցն արմացնելու համար . ձիանը թամքել են , դաջարու ապրշումէ վնջուխ-ները կախ քցել , մի մին ջիրիս ձևոներին բոնել , չուխեքանց կամ կապիքանց փեշերը ջիրներովը հանել , թները ուռներին կապել , կարմիր դանաւուզի դոշուզը զառ բասթով կարած կապել դօչերին , ձիու վրայ հէնց սարքուած նստել են , որ կասես ամէն մինը մի խանի տը-դայ ըլնի , ովնչ բանի հոգս չեն քաշում , հէնց ուրախ ուրախ իրար հետ խնդում ծիծագում են , կասես ըսկի վաս օր չեն քաշել . մէնակ մի դարդ են քաշում , թէ ով պոփ դօչազ դուս զայ , իրա անունը աղջը-կերանց բերնի խօսքը շինի : Սօսը , որ էս թաւուր օրը իրա հունարը շնանց չի տայ՝ ել ընչի ա պէտքը , վաղուց պատրաստուել , շինուել , ջիրիսը ձեռին ձիու վրայ նստած էր . աչքերը քցեց կնամոնց մէջը անսաւ , որ իր սիրելի , աննման վարդիթերը աչքի տակովը իրան ամուկ տալիս արծուի նման ու հէնց խօնաս թէ աչքով , ունքով աղաչանք անելով , ասում ա , թէ ինձ ամօթով չի թողաս , ինչ որ հունար ունիս պահես ոչ , Դափի ու զուռնէն նշան տուուց ջիրիսին (ձիարշախէ եղանակը) ածելով ու Սօսը , որ թէկուզ ոչինչ հունար ել չունենար , վարդիթերի երեսին մափկ տալով , արան էր դատել , ընկաւ էս մէյդանի մէջը , երկու զլուխ ձին դէս ու զէն քչեց , տաքացրուց ու ջիրիսը ձեռին չարխի պէս պախու տաղով ընկաւ իրա թշնամիքանց մընի հետ , որ վարդիթերին ուզում էր ու իրա ձիրանի վէտից չարխաքաշ ջիրիսը , որ նեսի նման չքցեց , նրա միջքումը հէնց կացրուց , որ էս շանաթաթախ , աղջկերանց աչքին դիր եկած տղին շշմեց ու զլիսի վրայ զետնին փառեց , ձին էլ վախաւ : Սօսը , դորթ ա շատ նախանձ ունէր նրա հետ , դորթ ա նա պողպատի պէս պինդ սիրու ունէր , համա զութ էլ ունէր . հէնց որ տեսաւ ազի զոյնը թռած զետնին փոռուած , ուրախանուրու տնդակ արածի վրէն փոշամանեց . էն սհաթը վիր էկաւ . ձիուցը , աղին խտանց տարաւ . կնամոնց մէջը , որ ջուր բերն խմացնեն սիրու կաննի . պոփ ասած , որ վարդիթերը ուրախութիւնիցը աշխարհքը իրանն էր համարում . Ընկանք Սօսի ազի հետ ըլիւը , մէկել աղէքը մի քիչ քշեցին . համա հէնց որ նստեց ձիու վրայ ,

ում քամակիցը որ ընկնում էր , խեղճերը օձի համան լիզուները համում էին , աղաչանք անում ու մէջդանից դուս դալի , զբաղին կանում . աշքների առաջին տեսնում էին էն տղին . ընդուք են ասել « չալ օձը տեսնոյը չալ չաթուից կըսախի » : Ամէն աչք էլ Սօսի վրայ կթաց , մէր ու մանուկ նրան էին մտիլ տաղի . ամէն ջահեների խօսալու բանը դառաւ Սօսը , կէս սահթից աւելի ձիու վրայ նստած՝ մէջդանի մէջ տեղը , ջիրիսը երկինքը ծուլի քցելն ու բռնելէն կանոնկ էր ու կանչում , որ իր քամակիցը գան , քցեն , համա ոչով սիրու չէր անում նրան մօտանայ , նրա հետ մէջդան դուս դոյ . որ խղիթ (կորիծ) , քորառ տակներումը պարծեցող աղի էլ համեցէք էր անում , լիզին ջուր էր կըտրում , թուք ու մուքը բերնումը ցամաքում , Սօսը շատ որ մնաց ձեռք կողքին դրած ձիու վրայ կանոնած , ոչ ով մօտ չեկաւ , ինքն իրան մի ուրախացաւ , ձիու զլուխը յետ դարձրուց դպա կնանոնց կողմը ու ջիրիցը մի նաշխած ձու հանեց , հէնց քցեց , որ ձուն զնաց ու վարդիթերի զոգումը վեր ընկաւ չի կոտրուեց . ով ասես էս բանը տեսաւ ու մաժ էլած պէլացած (աւիշեալ) մնաց . մինն ասեց Սօսի վրայ թլիստ կայ . մինն ասեց սուրբ կարապետու պատն ա պահել , նա ու տուել , մէկելը , թէ սուրբ Գէորգ էլ շատ ա զնում , ամէն շաբաթ մումտ վառումը նրա սիրու . նրա չնորքն ա , ամէն զլիսից մի խօսք էր դուս դալի : Վարդիթերը ուրախութիւնիցը ծառս էր ընում պատումը , համա մօրը , որ դանակ տայիր , արին չէր կաթալ , ուղում էր հերացը սիրու բերնումը դուս դայ . աւելի կնանոնց ասակումէն շատ բորբ էր տայի նրան . լուն ուղու կըշինեն , ձէն էր , որ անկաջն էր ընկնում , ուժ բերանը փակի , առանց էն էլ էրկուան ձուերը դեռ մոյն էր . համա ինչ անէր , ձեռին ճար , չի կար , էս թաւուք ազիոյ օրը , որ մարդի զլիսի աղուն էլ աղաս , ջաղաց պախտ ասս , խօսալ չի պափ , թէ չէ լափ շուռ կըտան զլիոն . մուկը ծակը չէր մտնում , ցամասելն էլ պոչիցը կտակիցն . քիչ էին թաքուն խօսում վրըները , էղ էլ աւելցրին :

Ձիու խաղը վերջացաւ , հերթն ընկաւ աղջկերանցը . դափ ու զուռնէն ածեցին ու ևալիբաշի խանումը վեր կացաւ տեղիցը մի ձեռքն աղլուխ առաւ մէկել կուռն էլ քցեց իրա հարսին ու սկսեց խադալ . զուռնէն ճռներն էր ընկել , հէնց կոտրաստուելով ժաժ էր դալի , մի մին էլ աղլուխը պատակով , որ ամէնի սիրոն էլ հասրաթքցեց , քուռնէն էլ տեղներիցը վեր կացան , Եալին տաքացրին ու ծանր ու բարակ սկսեցին տերամբարալով , ինինկազով պախտ դալ . աչքները խանումի վրայ էր , նա ուրբ ոնց փոխաւմ էր , նրանք էլ հւար . համա

բանն էս ա , որ Վարդիթերի մէրը շան պոչը բռնել ա , վերի ոտին կան-նել , չի թողում , որ խողա աղջիկն էլ ընկնի եալլու մէջը . ուրիշ կընանիքը ինչքան մունագթ արին , նու առելի սատանի ձին նի էլաւ , վեր չեկաւ . Սօսը ծխու վրայ կաննած մոմի էր տաղի , հինց որ տեսու , թէ պառաւը չի ուղում աղջկանը թողալ խաղաղու , ևկաւ Գայրեգնի կուշտը . որ ընտեղ կաննած թամաչայ էր անում , քեզնից ուսւահր ասեց , ոչ ով չի կարող պառաւին բան հասկացնել , զնա երեխին եալ-լու մէջը քցի , թէ չէ ուրախութիւնու մախս կընկնի : Գայրեգնին էլ զորթա չէր սաղի , որ էնքան կնանոնց արանքները ճղի անց կենայ , համա շլինքը ծոռողն իր խաչն էր , մէջ տեղը Սօս կար , թէ նրա խօսքը կոտրած՝ թէ նրան սպանած՝ մին ա , ըստու համար անցկա-ցաւ էդքան կնանոնց միջովը ու նատեց Վարդիթերի մօր կողքին . կամ ասեց ինձ սպանիր , կամ էդ երեխի սիրութ մի կոտրիլ . « սիրութ շուշաց ա , թէ որ մի կոտրուց , էլ չի սաղանալ , թէ կուղկուի էլ » . քու թշնամիքդ մի ուրախացնել , բարեկամներիդ տիրացնել . նա ջահել տղայ ա , զեռ ջուրը դարիղում էր , չէր հասկանում . զեռ թղթի մի երևն ա կարդացել , զու էլ ևս ուղում երեխայ դառնալ , արինը ար-նով չեն լուանալ . մի անին , մի լինի . էս ասեց ու վերիացաւ հաւր ճուակի պիս բարձրացրեց Վարդիթերին , որ մօր կողքին շլինքը ծոռած , կոնկը խաչած , նստած անկաջ էր զնում դրա խօսքերին , տարսու քցեց եալլու մէջը , ինքն էլ յետ զառաւ էնքան դիլի աւետարան կարդաց պառաւի ողիմին , որ սիրութ առաւ , զուխը եղ քանց , նրան էլ տանու-հինդ տարեկան աղջկայ պիս տարսու քցեց եալլու մէջը խաղացրուց : Ասպին որ սպածան քէյլունի էնանիկը , որոնց ձեռին էր հրամանը , առան իրանց թորունները ու ցրուցին իրանց աները : Ոսմ էլ ճիռու վրայ նստած՝ ջիրիուը ձեռին խաղացնելով , զնում էր էն թորունի եան-փցը , որի մէջն էր Վարդիթերը , մաքումը ունենալով նրա սէրը , ա-զօթք էր անում առ ամնանկալ Տէրը , որ օր առաջ հասցնի իրան իրա ընկերը , թէ չէ էնքան չի քնիլ քչերը , որ կը քոռանայ աչքերը . ընչունքի ինչպէս ասում նն , աթարիցն էր կողել սէրը , անկորելի էր ջոկելը :

Էս օր ընչանք իրիկուն ջահենմերը ըստեղ քէփ արին , հսմա ահենմերը (ծերերը) քեթիսուդայ , ատանուտէր , ու ամին պատուաւոր մարդիքն էլ ամինքը իրանց տանիցը մի քողչայ հաց , մի դաւ դիմի , մի մին քթալ էլ իրանց համար՝ մի ամանով առան զնացին ժամի բաղչումը նստեցին . մատաղի մնացած շրպին բրինձ էին քցել . լիայ շնել . որանք էլ

շվեն կերան ու ընչանք իրիկուն լաւ խաղ ու տաղ ասելով անց կառ-
որին ընչանք ժամի տաղը : Երկուշարթի օրը նոր ամէնը իրանց մևոել-
նելին մոռները բերին, մյուր կազան մի՛մին կապոց հոց ու երեկուան մը-
նացած աւելցուիներիցը զնացին զերեղմաններն օրհնել առին, մի՛ մին
թու էլ աղաբամթաս խմեցին ու ամէն մարդ դնաց ըստոց յնուոյ իրա
աշխատանքին . համա ընչանք ժամի տաղը որսի բանելին, թէ չէ ժա-
մից յնուոյ, որ բանելին, համկիր կը ընելին, աչքները բան չէր տևմալի ի-
րիկնապահցը բռնած . ընչանք Համբարձումը համկիրը շուռ տալու
օրը ըսէնց կը մնացին (*) :

¶.

Զատկիցը յնուոյ Աշտարակումը ով ընի, աչքին մի նոր բան
կերևայ, բոլորը ծառ ու տունկ ա, կանանչները նոր դուս էկած՝ ցըն-
ծին ևն տալի յիքանոնց ամիներումը, ուռի ծառերը բաց արած իրանց
լեզուակ տերեները գտրնան բարակ քամոցը խշոշալով իրար են դիպ-
չում, հէնց իմանաս, թէ իրար բարտում են, պողատու ծառերը իրանց
կտրդին՝ որը . կոկոմել ա, կարծես, շուրած մարդուցիտ ընի, ուն էլ
ծաղկել ա, եօթանատոն աարմելսն հաջուրի նման տալիս է մարդիս
մի յոյս ու սրտին ուրախութիւն, թէ պէտք է մին օր վայելս խմ քաղ-
ցրահամ պաղիցը . մանիշակն ու եասամանին (յատմիկ) իրանց անուշ
հոտերովը քաղցր քուն են բերում յիշու մէջ ունի անողին . մանիշա-
կը զուխը քաշ ա քցել պասի հարսի կամ աղասի ու ապուռով աղջկայ
նման, մուկ ա խոտերի տակը, որ չընի թէ երևալը հպարտութիւն հա-
մարուի . համա եասամանը իրա ծառի վրիցը ճիթ ճիթ կախընկած ու
հոտով աշխարհքը լցրած՝ հէնց իմանաս, թէ կանչում ա անցկենողին,
որ առանց իրան ու իրա պարկեշտ քուերը տեսութիւն դալու չի անց-
կենայ . վարդն ել զուս էկած ձմռուան տկլորութիւնիւը՝ հաքել ա
կանանչ աթլազ . շոյերը ու իր սոկի կոճակի նման կոկոմեներովը խմաց
ա տալի, թէ ես զրկել եմ ինձանից յառաջ խմ քոյր մանիշակին, որ ձեզ
ուրախացնի, ընչանք ես ել կըդամ խմ միկել ծաղիկ ընկերների հետ .
էսպէս ամէն բանը իրանց կարդն ընկած մի ուրախութիւն էին բերում

(*) Այս համկուրի սովորութիւնը շատ հշութեամբ պահպանում էն բուռն
Հայաստանումը յինանց էօ օրը :

մարդիս վրայ կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը , որ Սօսր գարեղնի հետ առաւօտեան հովին ման էր գալի իրանց միքումը . երկուսի ձևոին էլ մի մին վունջ ծիրանի մանիշակ ու մի ճուղք եասաման . սարեկնարը ծառերի ճղքներին կանանած կարմիր արևզակի դէմը հազար ու մին անսակ ճպլացնում էին ու իրանք ածում իրանք խաղում . նըրանց վրի մանր սփակակ պէծերը հէնց սիրունացնում էին նրանց , կասես , թէ ամէնը մի ասազերը ճառաքած քչեր ընի . համա ի՞նչ մի մննծ սար կար էս կրկու ողջում աղազօր մէջը . մինը ուրախ որուով , համբերով հոգւով զուարճանում էր էս տեսարաններովը մըտքումը զարմացած Աստուծոյ բարիքների վրայ , բայց մէկէլը քոնած իր առաջին բարեկամի կոնցը , զորթ ա , երեսահանց խօսում էր ու մին հետ էլ ժմառու , որ չի կոտրի իր աղազօր քնքուշ սիրաը , համա որտիցն արին էր զնում . մանիշակը , որ վախտ վախտ պնչի մօտ էր տանում ու հոտ քաշում , հէնց խմանում էր , թէ բիանի կամ եալշանի զառը հոտ ա . վերջը չի կարաց համբերել ու մի խոր հողէց որ քաշեց , հէնց խմանաս , թէ Գարեղնի սրտին մի թուր տաս : — Ի՞նչ ա էկել քեզ , աղազէր ջան , աղալի ձենով ասեց Գարեղինը , քեզ չեմ ասել , որ ըսէնց օրն էլ ա թող հանդիսաւ վեր ընկնիմ . թէ ըսէնց պտի անեից ուր էիր ամազ աջակս կորում , հետզ քաշուպով բերում . ի՞նչ ա էկել փառք Աստուծոյ , մոփել տնւր էս զեղեցիկ օրի քաղցրութիւնին , Աստուծոյ բարիքների վրայ անրան սարեկներն էլ են ուրախացել , փառք են տայի նրան , նրանցից էլ ա սարվի , դիսես դրանով հոգուդ մեղք ես անում : — Ա՛խ , ի՞նչ անում , մէկ էլ խոր հողէց քաշելով ասեց Սօսր , ըսոնք են , որ իմ որտին Եարայ են գառել . մնաք համի էս օր ուրախանք , էքուց ի՞նչ անենք . էքուց ուրիշների միքանիքը կնանանցով լիքը կընի , ընչանք Երբ սրտի մնր խորճ յիքու ափը մի ուրախութիւն անողի երես չի տեսնի , կարմիր ձու ու ձուաձեզ չի թափուի վրէն . ընչանք Երբ էս կանանչ Աստուծոյ տուած խոլիչէն , էս սիրիսիրի խստերը չի արորի վարդիթերի ոսները . ընչանք Երբ սրտի աղազ աղջկէքը չի քաղեն էս սիրի սիրի խոտիցը ու որա տերեովն իմանան իրանց եարը ու մատով իրար շնանց տան էն հետո ամուսնու նրանց սիրու համար էրուող ջահիշներին . չես խմանում , որ էքուց կարմիր կիրակին ա , ի՞նչ կընի ուրիշների միքանանցումը . էս մանիշակը ընչանք Երբ ես սրտի քաղլում ու ձեռումս արորելով թոռմացնեմ . ընչի չի սրտի վարդիթերի ձևոին ըլնէր . ասումս ոստիլ մի , թէ Էս չի զժումն ով զժուի , քար ու քոյ հօ չպտի զժուն , ընչի չի սրտի մեր

ամիներն էլ ուրիշների նման զազալները (աչնան չորսցած տերեւ) կրակ տուած ըլնին պրած , որ էքոց կանանչ խռափ , չափր չխմանի վերայ կարմիր ձուով կարմիր կիրակի անցկացնէր Վարդիթերը : Առաջն թէ թողացիր , էնքան կըշարէր , որ օխան օր հասնիլ չէր . սիրով էրած սրամն որ ջուրը կարաց հուացնիլ , ալլապուն էլ էնքան չէր կարող իր սրտի զարտերը վարդի կշտին բացանիլ , եթէ գարեղինը թողար , որ նա խօսքը յառաջ տանէր : Հերիք ա , տօնց , հենց տանք միտով էրված ա , չարով թողաս մարդ բերնիցը մի խօսք հանի , առևէ են քիչ խօսմ , շատ լի՞ . քու տունն Աստուած շինի , զու հարիւր խօսուամ ես , մարդի մին էլ չես թողում բնրան բանայ , Բնչ էլաւ քեզ . թէ կուզ նիինես երկինքը , վեր զաս զետինքը էս տարի անցկացու , մեաց աշունքը . թէ կուզ ջանըդ քանոցես , քեզ կրակի մէջ քըցնու , էրես , հօ Աշտարակայ սովորութիւնը չեմ կարող քանոցիլ , դիտես , որ մեր նշանդրէքն էլ՝ հարսանիքը էլ ձեռն է ձեռն ա , մի աթեւմ բարութի պէս բան ա , որ կրակը զիաչի թէ չէ էն սհաթին կըպրծնի . զու հիմի նհանի տեղը ծանր տեղդ թեթևացնի մի , ոքարն իր տեղը ծանր կրինի . ծանր նասի լիսոր զաս , քու բանիդ կաց , աշխատամիր . երբ որ Աստուած կըտայ էս տարի էլ միքանիքը երես կըտան , աշունքը Մողնու տիսակյ յեսոյ քութահ կանենք կըմիրջացնենք . համես որ միտով ուզում ա , էքոց նրանք կերթան միքին , զու էլ մի քանի տղի հնա դնա մարիկ տներ , ես էլ կըդամ . հաց վերկան , Աստուածիցը զինի վերկան դնանք . ես դիտեմ Պատուեակոնդը կերթան կամ Զորսանարիլ . մենք էլ կերթանք նրանցից մի քիչ հեռու կընտինք , քէք կանենք , մեր կուռն ով կըբռնի . մի վախիկ Աստուածով մօրը կակդացըրել եմ , տամարը զակել եմ . հենց կանեմ , որ ինքը մեզ համար պաշար կըդրիի , ոնց որ զանքաշները իրանց փիսեքանցը կըդրկեն , զու հիմի արի դնանք տուն մի կտոր հաց տանենք , ճաշ անցկացաւ , սոված փորին բատեղ մանգալը սաղիլ չի : (թէ և օրը նոր էր բացուում) :

Կարմիր կրտակի օրը Պատուեակոնդի (մի ամայի տեղ է ծաղկաւէտ մի այցույ կողքի) դուզը հենց իմանաս , թէ կարմիր ու միատակ պատուեակոնդ լիքն ըլնի . որ կոդը աչքդ քցումնս , կիտուկ դառած դուռ են գալ իրար քամակից զառան նման տունկի տալով աղջկէքը չալիկ մալիկ շորերով : Քասաղ զետը ներքեւը զջոջարով , մեծ մեծ քարավնիքն դիսէլով , մին նման փրփրակալած սնց ա կենում , նոր մի քիչ հանգարաւացած իրա կատաղի վարուրութիւնիցը ու դեռ հրա

պրոռորը երեսիցը չի գնացել . նրա կրկու կողմի ավիներումը թօռը ձեռին կանոնած ա ձկնորսը ու թաղայ ձռւկը խսլտալով հանում թօռի միջիցը , քցում ափը . մեր սիրուն աղջկէքը վ'րէ կանոնած իրար շնանց են տուլի ու ամէն թօռը քցելումը իրանց մեխ բազզը փորձում . Արդիմիւնիրն էլ աղջկերանց միջին խառը , ախուր , արտում մափմ ա տալի Պատուելակոնդի բարձր քարափի ոլիիցը ու իր կրկու աչքերովը ման ա զալիս ուսիրանց վոհուտանիրի (մացառու) միջին կամ ջրի խշնշան տեղումը իրա սիրելանին , որ նրա թօռովը փորձի իր բարդը . համա Սօոր չի ուղում մի քանի կնառ տղեքանց պէս աղջկերանց առաջին պարծենալով թօռը վուել ջրի միջին . նա զնացել ա Աղբիւրակներիցը լաւ լաւ կարմրախեանիր , կապուանիր , մորակնիր , ճանառնիր ու սաձախնիր (ձկանց անուննիր են) բռնել ուսիր ճղքան վրայ շարան արած , ձևին բռնել , կանք կախ բերել ու ինչպէս Գարել նըաւ սել էր , Պատուելակոնդի քարափի տակին ծիրանու ցախի քողը չսող արել , սերկելլի շներից շամփուրնիր շննել ու ձկները տժմին տուել , ընէնց որ , նոր ձկան հոսոր սաղ թառակիր (թաղ) բռնելա . Գարել նըաւ էլ մի քանի ջահելնիրի հետ թեները ումներին քցած , խաղ ու տաղին զլած , քաղցր ձենով լըլացնելով , ուրախութիւն անելով իրան ժամանակին էլու ու հինց ընաեղ վրայ հասաւ , որ սիրուն սիրուն աղջկէքը Պատուելակոնդի զդումը կուռ կուռի բռնած իրար հետ ուրախ ուրախ վաղելադ էին անում . յիքու ախումն էլ կուանիքը նստուտած , որը զըրդից են անում իրար հետ , որը ախներին են մանդալի . համա Վարդիթերը մէն մէնակը քաշուել ու մի քունջ ու աչքը քցել էն սեղին , որ տեղանց պատուել էր կենում Սօոր ձկների ծիրանի մոխը : Մի սհաթից յետոյ էս թառակիր յիքանոնց ավները ասեղ քցելիր , դետինը չըր ընլիլ , ամէն տեղից գալուոց ա , որ գալիս ա , կուանիքը սուփեք ա , որ բաց են արել , կանանչ տիները զառել են կարմիր ձռի խռմեա , երեխէքը բորիկ ուսուվ , զլմները բաց ժանդ ու ժունդ են անում . ճօճ քցած ծծկեր երեխանց ճաճանակելուցը մարդ մարդի խօսած չի լուռմ . մէկէլ կոդմիցը զրանցից բառական հեռու աղասի աղէքանց ձենը զանդակի նման ա զալիս մի միսի կշափի , որ թէ մօտ զնաս բողոք թաղայ ձռւկն ա . կուանիքը իրանց սուփրիցը բաժին են հանում , զրկում իրանց տղեքանցը , որը զանքաչ ա , վեսին , որը մէր ա , տղին , որը բարեկամին . աղեքն էլ իրանց կալած ձկներիցը բաժին են յետ զրկում կընանոնցը , ուրախութիւն ա , որ ընում ա : Հացից յետոյ աղեքը թօփ էլած իրար կուչո , վէլ են ասում ու խաղում . աղջկէքն ու հարմերն

Ել իրանց քեյլանոնց հրամանովը տղեքանց Ալեսլը կուռեն բռնում
ու Եպի խաղում, ես թէ չէ իրանք քաղցր ու բարակ ձենով հենց
ասում, որ մէնակ իրանք են լսում: Կո օր ընչանք իրիկուն քատէզ
քէֆ արին ու ժամի վախար ամեն մարդ առաւ իրան թօրունք հե-
ռացաւ . պղոփ հարսներն եւ կեսուրների ձեռք պաշեցին ու իրանց մօք
հետ գնացին հերանց տառնը . մի շաբաթ եւ ժամանակ ունին ընչանք
կամանչ կյամիլ օրը հօրանց տանք քէֆ ամելու .

Պ.

Երկուչարթի սուտօսենց Սուր բառը բերուց սարքեց, ճրուի
կաթը քցեց վրէն, ծիրանի թափէակն եւ անցկացրուց, կոները և-
զեց, լավուինները վեր դրուց տանք, արինները հաքաւ, էտոցն եւ
խրեց մէջքը ու գնաց վախարայ բանանակ վարդիթերենց միքն վո-
քելու, որ նրանք եւ դան իրանցը փորեն: Վարդիթերի հերք հայիսոր
մարդ եր՝ համա հենց դլան ուրիցը թեզեն եր, որ կամիլ, թէ
քան ու հինդ տարեկան աղայ բնելու . բանուրներիցը յառաջ դժմա-
ցել եր յիքումը նոռել. հենց որ տղէքը բան ընկան, կաննեց զրւ-
խավիթեները ու սիրո տալով նրանց տանց - դէ տղէք ջան ապրիք,
ձեր ջանին մասակ, աշխատեցէք, քու բանի տաէք. ևս ձեր վախ-
արը հենց փոր եի անում, որ քանը ձեռիս դորում եր . ու հանաքներ
անելով նրանց էշիք քցելու համար, տառում ա . առ, ձեր տղամար-
դութիւնին թնչ անմ, ձեր վախարին ետ քարին հուփ եի տաղի, ջոր
էր գուս գալի կամ հող եր դտանում բռնուում, մածունն անիւիլ եի ու-
տում, օխուր հացը մի ամսն կիրամիրով եի խիշտում, նոր ջրի պէս
եի խմու՞ . հիմի ա, որ ուրից ձեռից ընկել եմ, թերնիս մորիկ անող
չկայ, ոչով ինձ մարդունեղ չի քցում. ախանս մասնակ, տնցկու-
ցած օրերին օր չի համնիլ, մեր վախոն ել մի վախոտ եր, թառ. եւ
ձեռ չի ընկնիլ. առէք ոչ, թէ հայիսորեզ եմ, իմկըս յետ ու տուել .
ինչքան եւ ու ու ձեռից ընկած ընկամ, քանի մոջին ձեր պէս օխուք
արդին հում կուտեմ, կըթողամ որ շունչ քաշէք, չուլուք թնչ-
քան սատէի, սա ոլի, կաշին մի իշի բեռը կընի: գէ, ասպին յամ աղեքը
համ, առ, ասենք տառում եմ մեր ովրուր ուրախացնելու . դորէջ ա,

ասած ա , թէ հիմիկուան տղեքը անբան են , ծով են , համա ձեզ պէսերի համար չի ասած . մի քանի տղին , ոյին , թիլիլ , միլիկ տղեքանց համար են ասել , խմացել են Ալին սառեկե ա , համա չեն խմացել Ալին ա , թէ Արամաստ—վաղին . ոչ , հրէս նրանցից մինն էլ մեր վահանը , դէ , քու յիս քցողի հերը օրհնուք , կասաւ , ձևաները փրաւ են տառում , աղբաթը լինք , կաց վրաւը զայ : Նոր կուներդ քշամէ , համա չընեցանասո որդի , հանուք եմ անում + ապրին խմ տղեքը . ապրի խմ Սուր տես է , մաշալահ , կամսա սորսն ա , բանը ձետին դովում ա , ինչ կամսմ բանց տղին , հապալ ա սրան հացը իր մօր կամի պէս , քու բերադ մէրը քեղնից օխոն անհնայ , հօ տնի ելի վառ Աստածոյ , համա նրանք քու մօր հափ ճռու . բառ որդիք , Սուր քեահլանի ջինս ա (նժոյզի ցեզ) , Աստուած որս պէս կորիճ տղին իրա մուրացին կը հացնի . ինորեմ անարժան բերնուսի ամենիդ որսի մուրացն էլ կոտարի . ամէնքդ էլ բաւ եր աշխատառմ . ապրի վահանս , աչքումի եղ ա ունեցել , բաւ աղեք ա ջոկել , բերկ , էն անկեսու ա ճըլէրքներին բաւ ա ճամանչել . բառ որդիք , տեսնում էք սրանք ոնց որ ջան են ապի մնոր բանին , դուք էլ պ ուն ջան առաք սրանց բանին , (իրա որդւոյն է ասում) աշխարհքու գոխ հաց ա , ոնց կամսմ ընկց կուսաւ , ես էս թառուք տղեքանցը տես ինչ սրատի . եմ սապի . փափակ , (պասի տղին) աղքճի , զնա , տես հացն ինչ արին ճաչ դառաս , էսքամ կը յւսացնեն , աղեքը ափսոս են . միս կրիմ , ընչանք օխոր սհամի ձրբացնել , քունջ ու որոջախ ա ընկել վախալով , բանը էսաէցն ա համել , ինչ անի խորճ ապառուք . հիմիկուան հարսները իրանց կէսաւըների զլիսին խանում են դալի , մի բանի զնելիս նօվերը կիտաւմ են , սինչները օխոր զադ կախ քրում . խեղճ որտասու էլ վախզութիւնիցը ոչ մի հարսին բանի չի դնում , քօնմա ինքն ա անում . . . ընք , հացն եկաւ , ապրի խմ պառաւք . ես դիտէի , որ նա բանը յիս չի քցիլ :

Այն էլ տեսնիմէք , որ մենք հարաց դաստախնումը կապել ա աշխով վլասն ա զրել զլիսին , հրէս կկաւ , վարդիթերն էլ զաւք զինի լցրած ձեռին բանած՝ կկաւ . խեղճը չէր վիտառմ , թէ իրա սիրահարը , իրա անուշ եարը իրանց միքումը բանում ա . զլուխը քաշ քցած վկանին մաթիլ սալով , զալիս եր հարսի քամակիցը . հնց որ հասաւ բանուորների կուշոը , զլուխը վիրքաւեց , ու երք որ աչքով ընկաւ Սուր , սիօթիցը խեղջ աղջմէր կարմիր վարդ զառաւ . ապաք ջուրը բանը կովսեց , քիչ եր մնացել , թէ խեղքամազ ընիփ + Սոսի հօ բանը ձեռի-

Եր վեր կընկներ , թէ չուղենար իր հունարք շհանց տալ իրա աղիդ ջիւանին Արք որ հայրաւրք ձեն տառաց . յետ դասերք սովերք ջան , ձեր արևն ասպիք , հազար ա ձեզ հացը , Ասու մովի չի տառաց ու Եշվին ընկած տղում էր ել փորի . զնացերք , ասեց ընկերներին , հատեցերք , ևս իս թժիրի կիասար փորեմ ու զամ , ասեց ու բահը հնոյ շուստ շուստ բանացրեց , որ չես խմանում , թէ ոնց ա տալի . համար Վարդիիթերի հերը չի թողուց . արի , ասեց , հայ կեր , դոտիդի սինդի , յետոյ տառանց էն ել քու աշխատամքն ինձ հասաւ , « բանն ալ անի , ևս ու դուն , հայն ալ , ուսի , ևս ու դուն . հացը հայրաւրքին անուր , մինն ել աւելի » . ասպիքք , ամէնքդ ել լաւ եք աշխատամք . Վարդիիթեր ջան , անք փարփառաջը վերի կաւառիցը (ջրարերան , որանդից ջուրը մըսնումէ այդու մէջը) լցրու թեր , որ սովերքը ձեռները բառանան ու հնոյ որ աղջիկը ջուրը թերաց , հերն ասեց , ածա ջուրը ձեռներին որդի . խեղճ աղջիկը զլուխը կախ քցած ամէնդի ձեռին ել լցրուց ու հնոյ հերթը հասաւ . Սօնին՝ նա չեր խմանում ինչ անի , թէ ածեր՝ դեմնն էր մանում ամանչելուցը , թէ չի ածեր՝ համ աւելի ամօիք եր սովերքանց միջին բանը յայտնելու , համ ել վախում էր Սօնի սիրու կառելու . էս աղբամթը խերն ել երկու ոհավթ կաննել ա , նոր ձեռների ցեխը վեր թերամք . տօ մի ասես , քու ընչին ա պէտքը սովութիւն (մաքրութիւն) անելը , զու մի բանուր մորդ ես . համար չէ , նա ձեռները խառակելու համար չեր կախ քցամք , խալիսն ել լաւ զիստին , չեթումին ել լաւ յայտնի էր բանի էռեթիւնը . նա ել չուղեց նրա սիրու պատկի , ընչանք կայցաւ , իր քէֆուլը ձեռները բուաց պրծաւ , նոր կամեց իրա մօմ նասացրեց ու վլաւը լցրեց հացի վլայ , քաշեց նրա առաջը , թէ կեր . աղջկանն ել ասեց . էդուզ կաններ , որ ջուր թերեւ . հարսին ել ասեց , զնա մի քիչ ցախ ու մախ , չոր ու չորի հաւաքի , տար իրիկուան կերակրի համար . ևս լուսն , որ էս օր կողծնենք փորից , պատի խեչ փունք (*) անենք . մեր քէլվանուն ել ասամ , թող լաւ սրապաս շնի , ակնակալը բրինձ քցի , շուջուս ալանու

(*) Խէչ փունք , ասում են այն վնչած հասկին , որ երբ արուր քաղումնն վերջացնում , ցըրենը խաչաձեւ կապում էն մշակները ու թերում սիրութիւնում , նրանից մրգը առնում լնծայ . այս սովորութիւնս մաել է և արակրի բաների մամանակը , երբ մի տողին մշակելուց աւարտում էն այն երեկոյին միրդ են թերում և որախութիւնն անում . այս սովորութիւնս անունն էլ մնացել է խէջիւնն այսինքն խաչ փունք :

բաւնտվնիքը բաց անի , որ տղէքը մի լաւ ուրախ լեզ փունջ անեն և խայխը հաց են ուստում , համա նրանցից մինը ինչպէս բանի վախան էր , հմտի էնակս չի . ծգծամ առաջով բերանն առանտում թիրէն ու աչքի պոչովը , թիրինանուիք տակտովը մոփի տաղի դիմի կանածին . ով չի առել , թէ Ասմ ա . նրան վիտոք հարկաւոր չի . նաև առանց էն էլ կշտանում ու , դու Վարդիթերին բեր նրա մօտ կանացրու , ովք որ սովոր պահի , նա հինգ կրպիսենաց , թէ աղիրխմայ կամ զառնով վիտոք ընի կերած , դու Վարդիթերին անը նրա դիմը կանացրու օխար մարդի բան անի : Հայիւորը հինգ կրակել ա , թէ հաց կեր , որ զօշադ բանիս , նա սուռմ ա . չնորհակալ եմ , ուստում եմ , Աստուած հաստատ ուրանի , եմ ուսովը հօ պատաւոր չի ընկի : Սօսի հաց ուսովը հինգ էն վախանն էր բլում , երբ որ տղէքը վարդիտի ջորը խուռմ էնն զարդակում , Վարդիթերը զնում էր ջորը բերելու . նա էլ հօ ընչանք ծափ խմիլը յեա էր զառնում : Հացից վնր կացան երևնուրին խաչ համելով , Աստուծոյն վիտոք սովորվ ու Աստուած հացին լիութին առյ սաւելով , զնացին իրանց բանին . Վարդիթերն էլ հարսի հաւաքած խոչուրները կապէց զառնախունի միջին ու հարսի հետ յետ զառնա առն . նա զնաց , Սօսի սիրով հեռու տարաւ . մաքումը դրեց Սօսը , թէ հաշուաց հացի վախոտը կըսպա . ճաշուան հացն էլ էկաւ Վարդիթերը չեկաւ : Սօսը նասուց հացի վրայ ու խորհուց մնաց . բանի էլ Վարդիթերի հերը զունց , թէ կաց կեր , նա հինգ չնորհակալութիւնն էր յառաջ բնուամ . բանի վախտը առան եթ զառնում , հացի վախտը զառը :

Տղէքը բանեցին ընչանք իրիկուան ժամը ու չիքին պրծան , յետ զառէք , ձին առւոց հայիւորը , կուններդ դալոր , օրհնեալէ Աստուած : Լեզ փունջ , ձին առին բանորիները , Հեթում ափէր (ձեր մարդոյ սաստանունն) դու զնա չտրապը պատրաստիլ տուր , ասին ու ամէնքն իրան բանն էասցով քիրեցին , դրին ումներին , եկան սուն :

Ժամը դուս Եկաւ , ինչքան վոխարայ բանուղներ կացին Աստուած , որը սուռցումը , որը աէր Ասաքեկնեց դրանը , որն էլ Պապենց դրանը հաւաքուած զրից էնն առիլի . մի քիչ ժամագարքը կոխեց թէ չէ , ամէն մարդ հաւաքեց իրանց բանորիներին տարաւ հացի . Հեթումն էլ Թօփ տրեց իրաւ բանուորներին տարաւ սուն : Հացը քաշեցին ու թանով ուրախաւը լցրին երկու մէնծ քերեղանի մէջ : Հացը փրթեցին ու քթալներին առան ձեռները , խրթեցին : Մեր պարոն Սօսն էլ , հաշուաց

պէս մի քթալ վեր առնում , չորս հետ մայմկ սալի մի տակի կան-
նողին , կամ Արշակուրի երևին : Նա ել աչքով , ունքով անում ու ,
թէ հաց կեր , որ հերս չխմանայ . Հացից յետոյ տղեքը ձէն տուին .
Ափեր խէջ փունջ . Են սհաթը մին ել տեսնինք , աչքդ բարին տես-
նի , շուջուս կասես , կռանս պէս հաստ , ալանի մի նալլագառու (ա-
փաէ) լէնութիւնով . կըսպած ու անկրպի զեղձի չիր՝ խուրմի պէս քաղ-
ցըր . փշաս մասններիս երկարութիւնով , մի կախան ել հաւող՝ կասես
թփիցը նոր քաղած , տեփլի մէջը լցրած՝ դրին մէջ տեղ , դնիլն ու
տեփրիցը չմթիլը մին ելու , Սօնը մինն ել չի վեր կալաւ , հէնց եր
ժամ դպի , կասես երկօրէն սպափ հարսն ընի : Էսալէս ուրախ իրիկուն
անցկացնելից յետոյ , ամէնքը դնացին իրանց աները , որ դինջանան ու
առաւօտենց գնան իրանց բանին :

Ժ .

Վարդիթերէնց սունը կանանչ կիրակի օրուան շարաթի իրիկ-
նապահին մասթը հէնց բանելա , որ մատոյ մարդի աչքը կոխիս , չի ի-
մանալ , Վարդիթերի մօր հազի ձէնը զուռնի պէս ազալի , երկու ե-
րեք հաւ մորթուած վեր թափած են , օճաղի զրադին , ցախը դիզի
պէս կիսել են , որ պափ ընչանք օճաղի վեր գալը (էրուիլ պլրծնիլը)
կամաց կամաց զնեն տակը . մի ձևները եղումն ա , մինը մեղրումը ,
մի հարսը եղի բղդի (քիլայ) կոխաքին նստած եղ ա քանդում , մինը
փոշտանիցը ալիւր ա հանել մաղում , Վարդիթերը հաւերն ա թէրուում ,
թիրուլը լշնում խախալի մէջը իրա բաժնքի բարձի համար , պառաւը
քունջ ու պուջախ ա ընկել , կամ քթալ , չերէփ , զաստամալ (ջնջան)
ա բերում , կամ պղինձը ջուր ա լցնում զնում օճաղի վրայ ,
որ խօնչայ պափ դրկի խնամոնց առնը , պստի հարսին , թէլլիղարին
էրոց պափ բերն էրանց տանիցը : Մի կէս սհաթից յետոյ անուշ հո-
տը տոնը բռնեց , վերաքունի կամ թաղայ ձիները , որը ճղճղուած
քցում չեն ալիւրի մէջը ու հանում քցում դադ արած եղի մէջը
տժմոցը աշխարհքը բռնում ա . անուշ հոտը հէնց զալիս ա , մարդ ան-
ուսիկ կշատում ա , մէկէլ կիրակրերն ել էնալէս մարդի քէփ են բե-
րում . վերջապէս բանից պլրծան , խօնչէն բէրին , ամանները միջին
շարեցին , թէրմունն ել զաւը լցրին ու տուին Գաղիկի (Վարդի-
թերի չորրորդ եղբօր) խախաը , Վարդիթերին ել զարդարեցին , զըլ-
իին քցեցին իրա մենծ հարսի քիրմանու շալը , դրկեցին խօնչի հետ

խնամոնց տունը : Գաղիկը խօնչէն վեր դրեց ու ամանչելոցը դունէ դռւս . ինչքան էլ ձին տուին , թէ այ տղայ , կամնի մի քիչ խօսա , համա նա անկանչ չի դրեց : Վարդիթերը զնաց մենծ խնամոնց , (հարսի հօրն ու մօր) ձևոները պաշեց , մԱկեներին էլ խոնարհութիւնով պղուս տուուց . դնաց հարսի շնչքովն ընկաւ , փաթաթուեց ու իրա մօր բերնիցը շատ բարով արտոց . ինամուն էլ խնզըրեց , որ հարսին պատրաստեն , էքուց տանձն Մողնի ուխտ ու յետ զան իրամոց տունը : — Ենա էիք վաաղել , ասեց խնամին , վասք Աստուծոյ անողներուց շատ , երկու հարսն ունիք տանը , մի քանի օր թողել էիք երեխէս մեր տանը մնացել էր , ինչ կրինէր , ձեր հարսը հօ ձեռներիցդ խելու չինք : — Դէ ինչ անենք , ասեց Վարդիթերը ուսերը ժամանակով , բաններս շատ ա , զլուխ չինք կարում աստակիլ , լաւ , հերիք մնաց . էլի ձեր աղջիկն ա , երբ ուզենաք՝ համեցէք , ձեր տունն ա , մի վախենաք , զլմներիս վերայ տեղ կունենաք դայուս բարեկամացմնք , բարեբարացմնք մեր տունն ու ձերը ըստոց յետոյ մինա : — Ի հարկէ էրպէս ա , ասեց Վարդիթերի մէրը , միայն լաւ կրինէր , որ էս մի քանի օրն էլ մնացել էր ըստեղ , մի քիչ սիրու բացուէր , համա տարբէք , աշխարհքիա կանոն ա , ձեզնում ինչ մեղք կայ , թէ կուզ թողաք էլ , ևս չեմ ուզիլ . խալիսի լիզուի տակ չեմ ընկնիլ :

Խրիկուան ժամից յետոյ Թէլիդարի հերն ու աղօրեամնքը նստեցին հացի . խնամոնց դրկած խօնչէն յետ քաշեցին ու չչն կենայ մեր խոր նամին ասելով հաց կերան . Թէլիզարն ու Վարդիթերն էլ ջոկ մի քնչնում երեսները շուռ տուած նստեցին հացի . համա Թէլիզարը ուսել ա , դառել փչած տիկ , քիչ ա մնում արտատոնքը աչքերիցը վեր թափի . պար ասած , որ որտով ուզում ա մարդին տեսնիլը , հօրանց տանը շատ մնալով թնգարել ա , համա լաց ա ընում , սարի հօրն ու մօրը շնանց տայ թէ շատ ևմ սիրում ձեզ , նազնա անում . մին էլ , որ ատաթ ա : Մէրն էլ վարաւորդ ա մնում , որ աղջիկը հաց չի ուստում , մօտ ա զալիս իրա զլիսի չակարի տառվը տղջկայ աչքերը սրբելով ասում ա . հաց կեր , քեզ մասաղ զնամ , անսամիք մեռնամ , թէզ թէզ տեսութիւն կըզամ քեզ . աղջօրտանցդ կըդրկեմ կըզան ակը կըտան ու Համբարձմանն էլ կըզամ կէսօրիցդ կըխղըն , կըբերեմ . լաց մի ընկի աչքերիդ դուրբան , Թէլիզար ջան : Վարդի թերն էլ կամաց քնթի տակին ասում ա . աղջի , ընչի ևս լալի , հօդուշմանի տուն չմս էրթում . ինչ մի նսղութիւն անսար մեղանից փառք Աստուծոյ , որիցա լանցիր , թէ աչքիդ վերին ունք կայ , ու-

րիշ գեղում հօ չես , Եքուց էլոր երբ որ խնամու քեզը կուղի , կրդայ քեզ կրտեմնի . հեռու հօ չի , անկաջիղ տակին ա , ձեն տաս՝ կըլոփի . հաց կեր , թէ չէ Եքուց նամին (իր մօրը) կամեմ : Խեղճ Թէլլիզարը տալի (*) իսուքերիցը առանցեց , վախեցաւ , որ զորթ կէսերը կասի , ըսկանց պատճար պատճար դուրսմեներ (թիքայ) շինել ու բերանը դիլ , ձեռն առաջին բանած քողը տակիցը : Պորթ ա , վարդիթերը երեսան խրատում էր , ան էր տալի , թէ հաց կեր , համա ինքը հինց լըցակ ա , որ աչքերիցը ուղամամ կրակ թափի արատառնքի ակակի Նամաք անուամ , թէ անի , Երբ սրոի ընի , որ էս օրը ինձ համոր էլ դաշ , ևս էլ երեսան տիրեմ , սրտանց որաբանամամ , որ սրոի Եքուց Ասպին տեսնիմ . համա ընչամեք էն օրը կըլոյց , ինձ ինձ կըհանի . ան սուրբ Եքուցիմ ուխա , ասում ա մոքումը , թէ ևս էլ քողը քցած չարտառմ կոլորած հերանցու տանիցը ևկայ քու դուռը ու յետ զառայ Ասպին տանը տեսայ , ուխաս ուխա ընի , որ մի տարի սարէ սար ամէն երկուչարթի օրը քու տնտենի համար պատ պահեմ . ըսկանց խնդիրքներ անեղով իրա մաքառը՝ հարսին խրատում ա , թէ հաց կեր , ինքը կամաց կամաց «իմ բաժինն Աստուած օրհնի , շն պահի » ասեկայ՝ յետ քաշուում . ինչքան էլ զու ու անուա խնամին , Էլ բերանը նշխարք չի դնում , հինց ասում ա՝ թէ սա կուշտ եմ :

Հացից որ աղքան , Թէլլիզարի մէրը ըեզաց հինէն , (որ առաջոց շաղախնել պատրաստել էր) հարսն ու տալի ձեռները զնիլու համար , որ Եքուց կորիքը ընի ուխա զնայիտ , յետոյ մի քիչ , որ վաշաշեց (քիչ չորացաւ) , վարդիթերի համար Թէլլիզարի հետ սեղ քցեցին տան մի քննումը ու իրանք էլ իրանց անողը քուն էլուն : Աստուածնց Կանանչ կիրակի օրը , որ Գարնան Մողնու ուխան էր , վոր չի բացաւած , աղօթարանը նոր ծագելիս , Թէլլիզարը անողիցը վիր կացաւ , շորերը հաքաւ , կուժը վիր կալաւ զնաց ջուրը բերաց , անելն ու զուռն աւկեց , զնաց մօրն էլ զարթնացրուց , եկաւ տալին էլ վիր կացրուց , օճաղի ցախը բերաց կշտին կիսեց , աման , չաման էլ հազիր արուց , որ շուտով կրակ վառեն կիրակուրն եփեն , պրճնեն ու զնան Մողնի , աղօթորն էլ վիր կացրուց , որ զնայ դամը , տառարի տակը սրբի , ևմ (կեր) տայ , ձիու առաջը հօնչայ քցի , թխարի : Սերն էլ , վիր կացաւ կրակ վառեց , միչըլթըլթան քաշովի էվից , խորովածն արեց , վիր

(*) Վարդի քոյրը կնոջ տալին է :

քոչեց, դան զրուց ու մնաց մարդին, որ ժամից տռն զայ, շուտ հաց ուտի, զուս ընի, որ խնամիքը գալ պտեն. տղամարդը որ տանն ընի, ամօթ առ ։ Ժամը զուս էլաւ, մարդն ու տղէքը շուտով հաց կերան, զուս էլան, Մի քիչ որ արեի ուկու զոյն փոխուց էր-ծաթի՛ հրէս Աւրորիթէրի մէրը, առած իրա մօռկի բարեկամների կը-նամոնցը ու իրա հարսներին՝ տռն մտաւ, բարի լիտ տռուց, հարսի թշրը սրաչեց, խնամոնց քէֆը հարցրուց ու սակց շուտ արէք զը-նանք Ասղնի. ձաշ դառաւ, խեղնէրը շատ ընի էս մէր խաթան-ների, լիսը բացուել չի դրկել եօ՞ անձտի հատաքուեցին. ոլրծէք գնանք: — Անց, քան խնամին չան, տռոց Թէլլիպարի մէրը, նըս-տէք մի քիչ դնջայէք, մէր հայի համը տեսէք, էլի կէրթանք, հրէս Ասղնին, հօ կորած չի, անտչն զնու լիսը նոր ա բացուում, զու ասում ես ձաշ դառաւ: Զէ, անց, չնորհակալենք, քու որդիքն ասլիքն, օրը մթնեց, մէր աղխորի բնոթինը դուք չէք խմանում, մի քիչ յնով գնանք կըթուրքանայ, մի կտոր հաց կըլի, յիտ կը-դանք, կերթանք մէր տանն էլ կուտենք: — Ասղնիք, թէ սոված կըլնիք, պատասխան տռուց Թէլլիպարի մէրը. մէր տանք մի քիչ սառը ջուր խմեցք, դնանք, մի վախնանք, սուրը Գէորքը բարիանու չի, որ հաց կերան էրթանք էս թաւուր աղիկ օրը, ուրիշ վախս էլ ծում կէրթանք, հիմի կըրաշչի, մէր տղին ա. ձեր հարսը հօ ձեռ-ներցց չեմ կարող խլի. էլլի տարէք. ընչանք մէր մի քիչ նհար (նախտածոյլի) անիլը, նա էլ զլուխը կըշնի, թագայ շորերը կըհաքնի, նրանք վարուց իրանց հացը կերեկ պրեկ են: Հացը քաշեցին, ինչ կայ, չի կայ, մի տղար (բոլոր) բերին լցրին սուփիրի վերայ, Վարդի-թերն էլ գնաց հարսի զլուխը կապելու. ընչանք նրանց հաց ուտիլը, սրանք օթախուումը բօյահացին զրած՝ չոր են հաքնում, ընչանք Թէլ-լիպարի շուշտակը (*) քցիլը, բաշորթիկը (**) կապիլը, ճպինդը (***) պոլը (****), բառպինդը (ճկատի աղլուխը) լուչակը (չիքիլայ), քնթիալը, ճակտոտի ուկին ու չալ շխանը (*****) սաղացնիլը ճաշ դառաւ. մհասիլ

(*) շուշտակի երեխայից թասակի ողէս բան է, երկար պաշտուու:

(**) Բաշորթիկը = հասմէինի դիմաշոր է:

(***) ճպինդ = ներ դօտի որ ճակտոները հուռ կուն:

(****) Պոլ = կոտ, կամ կոսի, կամ կուտ:

(*****) Չալ օհամ = ծնօտի վերայ, քնթիակի վրայից սաղացնիլը ճաշ դառաւ: ճակտոտի ուկին բարսեկ կուրու:

(շտագացնող) մհամլի վրայ ա զալի , թէ շուռ արէք , պրծէք . դէջ . դան դէջ (հաղիւ հազ) զարդարուեցին ու ձամիւու ընկան : Թէլլիզարի մէրն էլ առաւօտենց իրա իրաւորներին կանչել էր , նրանք էլ հևաները զնացին Մողնի : Մողնու ճամփին , որ մոփկ տաս , սփառամը չարսաւառուած կնանիքը , կարմր չաղրաթները քցած աղջէքը , հէնց կըդիտենաս , թէ զաղերի քարվանն ընի , որ իրար քամակից զնարով զարդարում են ջրի երեսը . մէր կնանիքը զնացին ու հէնց որ հասան վանքի հասարը , իրեք անգամ տորբ Գէորգի զլսովը սպախ էլկան ու մտան ժամ , հաւաքուեցին զերեզմանի զրանը ծնիլի վերայ եկած՝ երկու , երկու , իրեք իրեք՝ չոքէ չոք անկրուի խորանի դռնովը մտան զերեզմանի կուշար , երեսները զետինը քոկուի համբրեցին սթիտվ զերեզմանաքարը ու տորբ Գէորգի Գիխաքարը , որ զերեզմանի վրայ զրած էր . ձեռները կոխեցին զերեզմանի տակի վասի մէջը ու 0րհնութիւնի հողիցը հանեցին , բերանները քցեցին , ոյի մին սև վոր էլ լոէչնամբուր քցեցին , չոքէ չոք յետ դառան :

Հէնց որ հասան Ծակ խաչի զլուխը , որանդից զեզն երեսում ա , թէլլիզարի մօր աչքերը գեօլ (լիճ) դառաւ . մօսացել էր վախար , որ իր երեխացը պտի բաժանուի . քիչ էլ ներքել եկան զեղի զլուխը , մըտան կարմրաւորի . (կուսանաց փոքր վաննք ուխտատեղի) բակը , դուռը համբրեցին . թէլլիզարի մէրը պաշեց աղջկայ երեսը , արտասունքը սրբդով բռնեց աղջկայ կռնիցը , տուոց Վարդիթերի մօրը , խնամի ջան , ասեց , սադ սալամաթ ձեր ամանաթը ձեղ եմ տալի , ըստոց յետոյ մեղ բան չի կայ , զուք զիտէք . ոյց կուզէք , պահեցէք : ոհ , աղջիկ բերող մօր օրօրոցը կրակ ընկնի . պահի , մենծացրու , հրից , ջրից , փորձանքից թափի , ուրուրի պէս ազտն արա (պտխատ արի) զիխին , հէնց որ մենծացսւ , վախտն էլառ , որ հարարիդ հանի , զլիփդ տան , ձեռիցդ խեն . ախ , քո մէրը մեռնի թէլլիզար ջան . . . լոց մի ընիլ զադէտ (ցաւդ) առնիս . ըստոց յետոյ քու կէսուրն ա քու մէրը , կէսասդ՝ քու հէրը , տեքերտինք՝ ապոէրտինք , տարդ՝ քու գիտք . մէնք էլ քիզ չենք մոռանալ . համա նրանց մեկնից աւելի պտի համարես , կէսասիդ , կէսօրդ , տեքօրտանոցդ խօսքին անկաջ անես , հհազանդ ընկնա , ոսների հողը դառնաս , հէնց անես , որ տանն չէն կինայ քու դուս թշողնողի օճաղը , չսանն քանդուի դուս անողիդ տունը . ոէ կէսօրդ ձեռը պաչի , զնա հետը : Աէկէլ բարեկամներն եւ կան թէլլիզարի թշերը պաշեցին , բարովեցին ու հէնց կարմրաւորի զոնիցը բաժանուեցին իրարից : թէլլիզարի մէրը իր բարեկամներին

տարաւ. իրանց տունը , վարդիթերի մէրը իր բարձրամերին իրանց տունը՝
Ծնչանք ըստեղ հասանք , չես ասում , թէ Սօմն ուրա ։ Նա էս
քանի օր ա չի երեսմ , չընի թէ հիւանդ ա , կամ զլուխը մի բան ա
եկել . չէ , նա որականի նման Գարեգնի հետ ծեփելան աչքով պա-
հանով իր սիրելանի ճամփին , ընկաւ նրանց քամակիցը , գնաց Մողնի .
Նրանք ժամփիցը դուռ էկան՝ նոր նա մտաւ նեքու տիստ արեց , մում վա-
ռաց , ինչհամբուր քցեց , ել լսա դուռ էկաւ քամակինիցը ընկած՝ էկաւ
դեղը . համա «դարդակ ամբար , դարդակ ջուալ» , էնքան գնան , արի , ուներիդ
տակին ել չի կաշի մնայ , էնքան ճամփիէքը չափի , հովիդ դուռ դայ :

Ժ. Ա. •

Գարունքը քանի գնաց , տաքացաւ . Մոյսի մլնին կասէիր ,
Օգոստասի սամին րինէր . երկինքը ամէն օր հենց պարզ ա ընսում , որ
զիզուպեափի համար ամփի նշան չես զսնիլ . արեի թէժութիւնը քաչալի
զլուխն էրումա . էն յիքանիքը , որ մի քիչ ջրզիսի են , էլլի կանան-
չի ծեղ երեսումա ափիներումը՝ շուաք տեղերումը . թէ չէ , ինչ որ ներ-
քեի յիքանոնց հայն ա , կատուած հեռու անփի . կասես , թէ առայի
չու ընին . չխման տեղ երազում չես տեսնիլ . Աշաւարակու որ քուչովն
անց ես կենում , ամէնի բերնիցն ել լսում ես , թէ էս տարի մենք ե-
սփիներա պափի ծախևնք , թէ մի քանի օր ել ըսէնց գնայ . Ասուած
մեր մեղքը մեր երեսովն ա տալի . չորային ընկը հերիք չի , թըր-
թունն ել մի կողմիցն ա ծառերը սոմնդ անում (վէացնում) , խնձորե-
նիքը , ծիրանիքը ու շորիքը , կասես , թէ մի մին քրդի աղի չափը ըւ-
նին բռնած՝ թրթոփի ձեռիցը . տնաւշիներ , մեր քրիստոնէութիւնը վե-
րացել ա , հաւատներա ջըլիս պականել ա . ամէն տարի էս վախտ սուրբ
Գէորգի Մասունքը , մեռնիմ նրա սուրբ զօրութիւնին , երկու հետ
բմբած էնք ընսում , էս տարի սուրբն ել ենք մաներիցս քցել . Ասու-
ած էլ հետը . էս մեր կոստորուած երեխէքը նուրին (լազարէ) ել չեն
ման ածում , բալքի Ասուածոյ սիրաք քաղցրանաց վրբներս , մի լիս ու
ճար անփի . Ըսէնց խօսում էին մի քանի մարդ իրար հետ ձանձապա-
նենց զրանք կանոնած , երբ որ Գարեգնը ալռազ վաւազ անց էր կե-
նում ընտեղից : կաննի , կաննի , կանչեց նրանցից մինը , խորֆայ
Գարեգնին , ախանք էս ինչ պատուասա ա , զրի սի ու սիալտակը դուք
էք համկանում , ինչ ասում զիբը էս տարուան համար , անձրես ովր-
ափի դայ , թէ չէ ձեռներս լուսանք , ումուաներս կտրենք , յստ նըս-

ամինք : — Ես հարկե չի դալ , ասեց Գարեգինը . մի տեղ , որ ջերմեռանդ դութիւնն չընի , սորբերի պատար վերանայ , Աստուածը մոռացաւի , թափօր չընի , ընտեղից Աստուած չի հեռանալ : — Ընչանք հիմի մենք էլ էդ էլենք խօսում , ասեց ին մարդը . ումն էք տառմ , մեղքը տէրտէրների Մինքը , նրանք երբ մեզ քարոզեցին , Աստուածոյ ձամփին սարվացրին , մեր խէր ու շառը ճանանչացրին , որ մենք արինք ոչ . ևս խմ բռակալ (կոսպիտ) , կարճ խելքով լաւ . ևմ հասկանում , որ մեղքը ձերն ա . մեր տէրտէրները , թէ որ մեզ քարոզին , մարքիստնէութեան պարտքը սարվացնեն , հէնց ժամ ասն , որ ժողովաւրդը կարողանայ բան հասկանալ , ժողովրդի հետ արդիւնք տալու ժամանակը լաւ վարուեն , հէնց անեն , որ ժողովրդին լրանց սիրի տան , էլ ընցի ըստնց կանենք : Մենք որ կանք , ոնց որ մէ ոչխափ սուրու . որանդ անում , ընտեղ պըսի արածենք . այ տեղն ա էլել , ընչի չեն միտք անում , թէ հալբախ Աստուածոյ բարկոթիւնն ա , որ էս զեզի զլիսին թափելա . մի խրառնենք ժողովրդին , յևս դառնան իրանց չարութիւնիցը . սորբ Գէորգ ունինք , պատական մեր սովորութիւն ա , որ ամէն տարի պատի բեկենք . քարոզենք , բալքի զնան բերեն . Աշտարակ կեզը Երբ ա տրամաց , ողորմութիւնից , մտադից փախել , որ հիմի փախչի . զու ընկա քու Աստուածը , խալֆայ Գարեգին , կարզին ևմ ասում , թէ չէ . թէ մի խօսքը սուս ընի , բերնիս սիլին , մասոդ կոխի աչքս հանա , թէ չէ ախար էս ինչ ա մեր տէրտէրների արածը : Գարեգինը տեսաւ , որ էս մարդը տաքացած ա խօսում , ամէնն էլ տէրտէրի վրայ ունեն բարձրացրել , լաւ . ևս ասում , ասեց . խօսքդ աւետարանի կողքին զրած ա . հիմի ինչ էլաւ . էքուց անկաջներդ ձէնի պահեցէք , պատրաստի կացէք , ակրաթին (մօտ 10 ժամին) զանգակի ձէնը որ լսէք , զուս էլէք , որ սորբ Գէորգի մասունքը բերիլ սրանք , բալքի մի փարասութիւն ընկնի . նոր ըտուր վըրայ էին խօսում ներքեւ քէթխուղէքն ու մենծ տէրտէրը . ասեց ու զնաց : Էս մարդկանցից մինը զզիր Սուրբն էր . հէնց որ լսեց , միրուքը քորեկով վիշար քաշաւալով ընկաւ քուչէք , չաւ արեց , թէ էքուց պատի սորբ Գէորգը բերեն . ուրիշ անդ չի զնաք :

Էքսի օրը արեք մի քիչ բարձրանալից յետոյ՝ զանգակները քաշեցին . ավրացուերը հաքան ժամանչապիները . որը քչոցը վիր կալաւ , որը խաչփառը , որն էլ մումերը բանած՝ տռաջ ընկան . Գարեգինն էլ նրանց կարգի քշելուց յետոյ , բորվան ու շոպիլը վր կալաւ , զնաց . մի տիրացու . էլ շարականը խստեց տարաւ . տէրտէրներն

էլ շուրջառները ժամհարի կանատակը առուած , որն էլ իրա ուսոբն քցած՝ զնացին դպա Ապղնի . ժողովուրդն էլ , մէր ու մանուկ , տէրտէրնէրի քամակիցը Ապղնութառովը (բարձր ճանապարհ) վիրեւ զնացին . Ծնչանք ժողովրդի դալը տէրտէրները իրանց զարդ ու զարդարանքովը , տիրացուերովը յառաջ ընկան , զնացին Ապղնի ընտեղ նստող Հայրուուրդի մօտ . ժողովրդի բերնիցը ինդրեցին , որ սուրբ Գէորգի մասնաւու առնի ներքն զայ . Նա էլ «օրհնեալ լինին ձեր ժողովուրդը , ասեց , Աստուած իրանց հաւատոն օրհնի , աչքիս վրայ , այս սհախու , տղայ , (իր ժառացին ասում) կօչիկներս բեր , վեղարս սրբի տներ , Փարաջէս բեր հաղցրնւ , խցի դուռը ամուր փակի , այս երեք օրը Աշտարակ կըլինինք . Հայր սուրբը վառաւորի , էն սհաթը պատրաստուից , զնաց ժամի դուռը բաց արեց , Աստունքները խորանիցը հանեց , տէրտէրների հետ ինքն էլ շուրջառակալեց ու ամէնքը մի մաստնք վիր կազման , ինքը բանց սուրբ Գէորգի էրծաթի տոկէջրած աջը . մնացող տէրտէրնէրը մինը զլսաքարը , մինը գագաթը , մինն էլ էն զանաւոր մաստնքը , զգնստաւորուած , շարական ասելով , խաչ ու խաչիառով՝ մենծ հանդէսով եկան դպա Աշտարակ : Հէնց հասան Պատաշարը (Ապղնու ճանապարհին մի տեղ) , ջերմեռանդ ժողովմարդը ; որ ընտեղ սպասում էր , զառան նման բայ ու բոյը քցած՝ զլմաները բաց , արտաստնքն աչքներին՝ թափուեցին յառաջը . Կնանիքն էլ ամէնքը բորբկ սուով , ճամփի քար ու քոլին , փշին , տատաշին , զետնի տաքութիւնին մտիկ չի տալով , ովկ սուրբ Գէորգ են կանչում , քու զորութիւնին մատաղ , մէր տէրն ու պահապանը զու ես , էս տաք ջրին մի հով ջուր ածա , մէր լաց ու աղաղակը լսի , մէր երեսեքանցը խեղճ արի . որ կողմն էլ մտիկ ես տալի էս չօլը , քօմիա մարդիկ են , ձեռները երկինք բարձրացրած՝ զինաւոր սուրբ Գէորգ են մէն ապի : Հայր սուրբը կանց ըստեղ ընչանք սաղ ժողովուրդը համբրեցին ու մաստնքի քամակիցն ընկած՝ եկան կարմրաւորի յառաջը , գեղի զլուխը ու ըստեղ թափօր արին : Հիւանդներն էլ փաթաթուած , զիները կապած , ընչանք ըստեղ էին դուս էկել սուրբ Գէորգի յառաջը . հէնց որ անսան , մուացան իրանց ցաւերը , աչքներիցը արտաստնք թափելով , ընկան մաստնքի առաջը ու ատք սրտով համբրեցին . թաքօրից յևոյ էլի շարական ասելով զեղի զլսապիիրնովը զնացին դպա սուրբ Ապրիամ եկեղեցու թալլը : Շատ մարդիկ էլ մատաղ արին յառաջին . որն էլ մի աչաս (արջաս ,) կամ մողի , կամ ոչխար բերուց մաստնքի առաջին անկաջը կարեց , յետ տարաւ , ոք

Հն նրա մատաղն ընի : Երբ որ հասան գեղի մէկել դլոխը՝ մին էլ ընտեղ թափօր արին ու պատելով բերին Ամենափրկիչ Ակեղիցու . յառաջը . մին էլ ընտեղ թափօր անելուց յետոյ , խաչալուայ արին առուի վրայ , սուրբ Գէորգի աջը քաշեցին ջրի մէջ , որ էրթայ յիքանիքը թրթուռը կարի . յետոյ տարան ժամումը սեղանի վրայ բաղմացրին . Հայր սուրբն էլ կողքին կամնեց , գանձանակ քցողիներին ամսիկ աալի : Ժողովուրդը չի կշացած էնքան համբուղուցը՝ Էլի կիտուկ , կիտուկ լցուռմ էին ժամ ու ուղիղ սրառով խէչնամբուր քցում : Ասմ էլ , որ ընչանք հիմի ութ անդամ համբրած կընէր , ընչանք կացաւ ժամը խոլլաթացաւ , ուխտ անողները քչացան , էկաւ մին էլ չոքեց մասունքի առաջին ու սուրբ Գէորգին մի գառը մասուադ խոստանալով , ազանչաք արուց . որ իր մուրադը կատարի : Տես Բնչ ա խնդրում . ընդուր են անել և պղպուն իր դարդը կըլայ , աղուաւը դմու , դմու կանի » , էն խալխը աղօթք են անում ; թէ Աստուած մի անձրեւ տայ , նա իր մուրադն ա ուզում կատարիլ տայ :

Իրեք օր սուրբ Գէորգը մնաց Աշտարակ . Աստուած ասպաշտ ժողովուրդը ընչանք մասուադ ու կարառներով դիմի խոստացան , թող զիրանց քըցած դամնամակը , որ Մողնու միաբանքը ութ ամիս ուտելին , համնիլ չեր , Տաման ու հինգ հազար դիման վող ու իրեք կարաս զիմի յատուել հէնց Հայր սուրբին իրան տուին , որ նեղութիւն էր քաշել , մասունքը բերել իրեք օրից յետոյ սուրբ Գէորգի մասունքը ինչ հանդէսով որ ըերել էին , յետ տարան Երեխեքն էլ նուրին շինեցին ու ման ածեցին . Երկուսը կանցը բռնեցին , մինն էլ տոսրակ ա վեր կալէլ , մէլլէն էլ մի պատիրը յութ ու ման են գալի աները . որ դրան առաջին կամնում են , ասումնա

Նուրին նուրինն էկել ա ,

Աջբա հուրին էկել ա .

Եղաւ շաղիկ հաքել ա ,

Կարմիր գոտիկ կասել ա :

Եղ բերէք պարաը քունք .

Զուր բերէք զլիսին ածենք .

Միր նուրինի փայը տուէք .

Ուսմնք , խմենք , քէֆ անենք :

Կնանիքը մի առան ջուր բերում են լցնում էզ նուրինի զըլին ու երմիեքանցը բրինձ , կամ եղ , կամ ձու տալի , որ տանեն քէֆ անեն : Էն իրմկունը , որ սուրբ Գէորգի մասունքը տարան ու նուրին էլ ման ածեցին , մի պատիկ ասու Ալաղեաղիցը վեր կացաւ , դպա Մա-

սիւ զնաց . քիչ քիչ շատամնալով՝ երկնքի երեսը թղթեց ու կէս ուղամթից յևառյ մի հէնց անձրեւ էկաւ , որ աշխարհքը շնուց ցեխ ու բաթլախ . իրեք օր իրար վրայ կտրտեց ոչ . միքամնիքն էլ կշատացան , տաւարի արօտն էլ լաւացաւ , դռերն էլ մի թիզ կանանչեցին , բոյն էլ գուս էկաւ , արտերն էլ իրանց կարդին յատաջ էկան , մի շարք ում երկու թիզ բարձրացան . աշնավար ցորենները համելը քչկլուն մօտացան , գարնավարների տմբուններն էլ հէնց ցնծին էին տաղի իրկինապահների վեր կացած բարակ քամուցը , որ կամես պատմիզ դեօլի տաղդք (ալիք) ըլնիլին , որ քամու վախտը խաղումն պատղին տաւով . մափել տուողի սիրաը ճիսում էր ուրախութիւննցը . թրթուոք հօ ընկնց փլչացաւ , որ նշանը չէիր գանիլ . բըները , այօժերը , որ ծառերի վըրա բանել էին , քօմմա ջուր գառան . ամէն մարդի բերնից էլ փառք ու չնորհակալութիւններ էր , որ բընում էր Աստուծուն . Աշտարակը իրա տուաջուան դեղեցկութիւննը ստացաւ , ամէնի սիրան էլ տեղն ընկաւ . Սիր Սօսը հօ ամէնիցը շատ ուրախացաւ . քանի օր էր , որ Վարդիթիրին չէր տեմնուամ , հիմիկեց դէնը զիտէր , որ կերթայ յիքին , ընդուր համար ճամփէքումը բուսուն էր պահուամ :

Մի առաւօտ Վարդիթիրին մէրը դրկեց յիքին , որ զնայ թիւննու տերեւ բերի ապրչի ճիճուի համար . խեղճ աղջիկը չէր ուղում զնույ մէնակ , համա մօր խօսքիցն էլ չէր կարող գուս գալ . վեր կացաւ , առաւ դաստախտնը , զնաց յիքին . իրա Գաղիկի աղայերն ընտեղ էր , նա ալրատի քաղէր ծառիցը վեր ած էր ներքեւ , ինքը կասրէր դաստախտնի միջին ու բերէր . շարակեց տերեւը , յևս գառաւ ու դեռ մի քանի սղլով (քայլ) չէր վախել ուաը , յևս մտիլ տուուց , տեսաւ , որ Սօսն ու գարեզնը կուռի բանած՝ ներքենիցը դալիս են , քիչ ա մնացել , որ համենին . խեղճ աղջիկը քաշունց պատի տակը , երեսը պատմին դէմ արեց ու տերեւն ուսին կաննեց : Սօսը հէնց իրա համար էր առաւօտենց դէսը ուրախաը տաղով ման դալի . հիմի նա ինչ պատի ձևոք բերի իրա պատմին ունաւ զնելովը Շհասաւ իրան , կմննացրուց Գարնդին դարաւուլ , որ մարդ չի տեսնի , ոնց որ կուռնկը զաշտամը քշերը վեր գալուս մինը պահապան ա կաննացնում չորս կորի մտիկ տալու : — Ա՛յս , իմ հոգուս հրեշտակ , ասեց Սօսը , ընչի ես երմադ ինձնից շտու տաղի , քու երեսը տեսմնիկը իսմ սրտի ուրախութիւնն ա . չընի թէ սրանից ընիս ամանչում , իմ սրտի խորհուրդը սրա կշտին թաքուն չի , աս իմ ախտէրն էլ ա , քունն էլ . յևս մտիկ տուր , մի խօսք տուր ինձ , որ սրտիս մի աւմուս ըլի . յևս զառ ու ասա ինձ , թէ խօսքիդ տէր ես , ինչ որ ասել-

ևս . ընդամենք մեռունելու դուռը հետա կըզպաս , թէ բաննն էն տեղին ընկնի . տասն , մի՞ ամանցիլ , ասան , թողի մու քու աղիիդ Դարենցինը իր անկաջովն իմանայ . առ թողի մեր էր՝ ուսի մէջանցը Աստուածակայոց կողմանէ վլայ ըլնի , ևս սրա ջանին էլ մեռնիսմ , քունին էլ . ախ , ինչ կըդնի մի ասես տեսնիմ սիրտդ բնչ առ ուղում , քարի տակիցը ճարիսմ , բերիսմ . կըդնի , որ վիրդին տեսնիս ըլնի քեզ . էլ ըսէնց խորված տեղ չնմ . կարող քցիլ . առան , քանդիլ մի սրտիս հմաքը , թողար պտես շինքս ծուռը՝ խաչերի դաներին ման զալով զրի բանասեղ ընիլ , թէ խօսքիդ տէր ևս , հաւաղու կաթնակեր ևս վարդիթերը աչքերը բարձրացնելով՝ շինքք ծուռած մոփկ տուուց Գարեգինին ու ասեց . ազգեր ջան , էս զերութիւնիցը մեղ աղատի . ասում ախային տէրը զօրաւոր յահին . մեր տէրը զու ևս . հերիք առ էստեղ միտք անելով հալ ու մաշ ընիմ , էդ խեղձնէդտեղ . իմ հօրն ու մօր քարացած միրտը դու կըկակացնես . մեղ ձեռաց մի թողար , խնդ արի իմ ջահել ջիւան ջանին , որ Սօսի ուղութին վիր ևմ դրել . էս օրէնքից դուս բան առ , որ իմ լիզուն քու առաջին սրտիտ էկաւ . իմ թայ աղջիմը քեզ պէս պատուաւոր տղի հետ խօսայ , զես լուսած չի . համա բնչ անեսմ , ինչքան միտք եմ անուսմ , բանը քեզնում ա վերջանում . ինչ կուկ ևս խմացի , համորձակութիւնիս դիմացի . սա ինձ ասում առ , խօսքերիտ տէր ևս . տէր չընիմ , բնչ ցաւս ա էս թուք ու մուրը վեր ունիլը , ևս ովլ , դուք ովլ : Գարեկինը որ սեսաւ վարդիթերի միկուցը , աչքերիցը արտասունքը բուռը բուռը վեր ածեց , մօտացան նրան , քիրա , ասեց . խօսքիցը յիս զառնողը մարդ չի . ևս լաւ զիւանիմ , որ Սօսը քեզ ա սիրում , զու նրան , ևս էլ էրկուսիդ . ըստեղ խելք կուղի բանացնիլ , վոազելով բան չի զառնալ . մենք վոազենք , հօրդ էլ բարկացնենք , վեր տնի քեզ տայ ուրիշի , էն վախուր կըռուզի մեր վրայ ասել , թէ չշատ զիսեցաղ աղուէսը , չուխտ ուսույթ թալաւքը (որոգայիթ) կընդինի . համա կամաց կամաց , զուք ձեւ համար կացեք Սօս , Սօս , վաաղ վոազ խօսքը վոխելով ասեց Գարեկին . նը . բաց թող , որ բանը խրթեց (խարաբ էկաւ) , թող , ծկուիք . . . աղջիմ վեր կալ տերեւդ զնան , հերդ հրէ վերեկցը վիէտը քաշ տալով զալիս ա . ասեց ու ինքն էլ Սօսի հետ հրեշտակի պէս աներեւոյթ էւսա , իրանց քցեցին պատովը վիքին :

— էս ընչի յետացար , մօտ զալով հարցրուց էէրը աղջկանը , էդ տերեւ որ ծառիցն ա . էս կարմիր կորզաւոր թթւնսուց հօ չի :

— Զէ , ասեց աղջիմը , սիպտակ բիուանայ թթենուցն ա : — Դէ տար , տնը , ճիծուները սոված կոտորուեցն . որդին , շաղ զնալու (պօժ դաս-

նուշու) վախտն ա , բաղրի ուսեն ուստ ըլնին կորչին : ծառերս վերջ-
արին էլի . բարով էլող տարի համենիք՝ թէ մէրդ մին էլ բռնի՝ պար-
ծենայ : Ել չի խօսացրուց խեղօք աղջիկը . առաւ տերեն ու զնաց . մի
քիչ տեղ որ յառաջ զնաց՝ տեսաւ , որ Անուշն (Գարեգնի քոյրը) էլ
տերեւը ուսին , իրանց յիքուցը դոււ էկաւ . մօտացան իրար , բարով
տուին ու զրից անելով երիշները (ընթացքները) ծանրացրին : — Քա
Անուշ ջան , ասեց Վարդիշները . ձեր ճիճուն Բնչ վախտն ա հասել ,
— Դեռ երկու հետ ա քնել . մենած քունը չի մտել . մեղ շատ ունե-
ինք , համար պատուի չար աչքը . Էն օրը Ամիրենց Մարդունը էկաւ
մեր տունը կրակի . ընչանք խմ առն մտնիլը , օճաղիցը կրակ բերիլը ,
ինքն էլ քամալից նի պրծաւ ու մօրս , թէ և աղջի Մարգարիտ , էս
Բնչ շատ ճիճու ունիս , լաւ տուուզ տուուզ ենք . քամ , քնող դուրբան :
Էն օրունից դէսը դիղնուում են ու սատկուում . էրէկ նոր Պէտքակա-
նենց Համադին օխուը ձիու մուննաթ ենք արել , որ կեկ տ աղօթել
նվազն (վարձը) էլ առել մի մենած ալլուխ . նոր էս երկօր ա մի քիչ
վրայ ա գալիս . ձերն ինչպէս ա : — Մերը մենած քունը պրծել ա ,
շաղ զնալու նշանները քցել ա . կը լինի , որ մի շարթից յիսոյ վերջանայ .
մեր ճիճուն էլ հիւանդացել էր , ով զիտայ էլ աչքից էր , թէ ընչից .
ուզարլուկ (զառը խոտ է) մուխ առնիք՝ լաւացաւ : — Ա՞նչ պտի անեք
էզքան ճիճուն , հարցրեց Անուշը . բամինքիդ համար խիսթի շինի
ոտեք , տեղաչարսաւ գործիդ տալու էք : Տիսնինք , ասեց Վարդիթերը ,
հալրապթ վասենը կեփենք կադ կը շնենք չարսաւայու , լաւն էլ խիս-
թի կը քաշենք . Է՞ն , մի բանի պէտքը կը դայ էլի . քամ ևս խմ , (ես Բնչ
զիտենմ) , իրանք զիտեն , ինչ կանեն ~ , թող անեն :

— Եքուց . ծաղկաքաղ ա , խօսքը վոխելով հարցրուց Անուշը , դուք
հրանուղ պտի զնաք ծաղիկ քաղելու . Պատուկակուղը թէ Զորահորի-
կու լանջերը (զառ ի վայրը) : — Չեմ զիտում , ասեց Վարդիթերը .
մերս զիտի , աանդն էլ ա իրա ճեռին , զապտէն էլ . քարն էլ՝ պօուզոքն
էլ . ինչ կուզի , էն կանիւ — Ե բաս մնաս բարին , ես դէսը պտի էր-
թամ , ասեց Անուշն ու համիլին ծակա զպա վիրե իրանց տունը .

Համբարձման չորեք շարթի օրը ամէն և պատրաստութիւն կայ . որոնք ճիան են ճարել , որի դնան Ծաղկեվանք (*) ուխտ . որոնք էլ չեն ուզում դնուլ , որի դնան ծաղիկ քաղելու : Յանդրներիցը անուշ գաթի հոտը հինգ ավեր էլել , որ աշխարհքու բանելու , որտչար ա , որ իապում են . խաչալուայ դիմի ա , որ տերի մէջն են լցնում : Ոխտառի տուար գեափ կարմունջն անց ա կացել , Անուշին էլ իրա քեռակինը հետը տարաւ Ծաղկեվանք , որ իրանց ուրախացնի . Չան զիւլուամոլ ծաղիկ դուիի , Ամէն ճխու վրայ հատած են երեք հույս . մի իրնիկ , մի տղջիկ թարքին , մի երեխաց էլ առաջին : Ոխտառիները զրնացին , մնացաղները ամէն կնիկ իրան թօրունն առած՝ կնացին մի նոր պատկուածի տիրոնջ առն , որ էրթան յիշանիքը , ճորերը ևս Պատուիլակոնդը ծաղիկ քաղելու :

Էլ Ճեա միքանիքը լցուելին քւմմա կարմիր ու սաղրի մուշիներով , պառաւ կնանիքը իրար մօտ հաւաքուած քչիւացին , զրից տախն , որտ նրա վրայ բամբասանք տրին , համա ջահէլ աղջէ էքն ու հարաները կանանչ ու կարմիր չորեկով , վաղէ վազ անելով , ընկան յիշանանց թօմքերի , ևս թէ չէ զոերի մէջք . մինը վազում ա մի ծաղիկ վրայ , որ քաղի , մէկէլը աւանելով նրան , ինքն էլ գառան նման թոչլուսաղով դալիս ա նրա մօտը ու նրա ձեռիցը չմթում , ինքը քաղում , որ ասի , թէ ևս շատ եմ քաղել . ծաղիկ ա , որ զողերը լցրած բերում են . մինը վըշատու ճուղքը կոացրած նրա ծաղիներն ա ճոցով կոարասում . մէկէլը զիզին ու կարմիր խնկածաղիկը վիշը լցրած՝ ծիծաղալով կարծենում ալճնկերի կշտին , թէ ևս քաղածը լաւն ա քունիցը . մինը բացունակուկի ծաղիկ ա խստա արած բերում , որն էլ բույի բույի ծաղիկ , ևս թէ չէ աստաշի ծաղիկ զողն ածած բերին ափումը կնանոնց կըշտին կիսուցին . էլ յևս յևս դառան ուրիշ ծաղիկ . Վարդիվերն էլ մի քանիսի հետ ծաղիկ քաղելու էր դնացել , նա էլ իրա քաղած ծաղիները բերուց ընտեղ : Ծաղիկը քաղելուց յետոյ , էկան բոլորիմների նըստեցին , ամէն աղջիկ իրա բերած ծաղիկը քաշեց առաջը ու միւն-

(*) Նաղկառանք է Արայի սոր կոշտած իշտուք քառակ դեսի ափին , որ է սորը Ա. առաջառու կուսի զերեգմանը մի ոյրի մէջ ըստ առաջութեան:

յին վունջ , վունջ կապիլ , կանանչ խոտի վրայ կիսիլ : Վարդիթերն եւ ծաղկամերը (*) ձևոն առաւ մի օրինաւոր հազար թուոլու ծաղկից կապեց : Հօպագիրը զովին սկսեց ևալլիքաշի Խանումը , որ մէկեների եւ լիլուն բացուի . աղջկէք , ասեց , դուք ձին սրահեցք ես ասում ևս ջան դուզում , ասեց ու վեր կալաւ բարակ ձէնով : (*)

Խնձոր ունիսի կծած ա , ջան դիւլում ջան , ջան ,

Չորեք կողմնեւ երծաթմած ա , ջան ծաղիկ ջան , ջան ,

Ախարիք ուզեց չի տուի , ջան դիւլում ջան , ջան ,

ասի հարի դրկած ա , ջան ծաղիկ ջան , ջան :

ԱՇ աղայ հիլ անիլ տուր — մասնաչափ դիր անիլ տուր ,

Խնձնից ել քեղ ճար չի կայ — քաքուրը վեր անիլ տուր :

Երբ ես էլայ ձեր տունը — ուկին սարէսար կուղևի :

Ալրակի ել պաս կընի — երծաթից լաւ թաս կընի .

Որդիղ մնոնի վարդապետ — սիրածը ջնաս կընի :

Աշտարակ բարձր անդ ա — ջուրը հիւանդին դեղ ա ,

Ալրածը սիրածին չեն տալ — էս ինչ անիրաւ գեղ ա ,

Էն սարը բարձր սար ա — տակը դնջած քար ա .

Ես քեղ թաքուն սիրեցի — բաս ով տրաւ աշկարա :

Խմ հարըն ինձ եար սրտի — մոռումը հիւանդին դեղ ա ,

Խմ հարէն չար տալ — մէկ չինարի ծառ սրտի ,

ԱՇ աղայ դու հազար ըլնիա — խմ աղազօր սարար ըլնիա :

Թէ ինձնից ջոկ հար բանես — դու սրտապատառ ըլնիա :

Քաքուրից կալին մնոնիմ — երեսիդ խաղին մնոնիմ .

Կակեմ կարդացող ես — սաղմոսիդ ծալին մնանիմ ,

Ամոկի ես ամոկի նման — շաքար ու դանդի նման .

Խմ նահն ինձ ոնց ա սրահէլ — ծալած դիւրանդի նման :

Կաննել եմ ախայ բախայ — շաւաղուս տուոր կախ ա .

ՇԵԿ աղայ , կարմիր աղջիկ , — թող բանենք իրար եախայ :

Ամոկի ա ձուն չի դալիա — մինեկ ա տուն չի դոլիա .

Էս անակը բարձր վրայ — սուանց եար քուն չի դալիա :

(*) Կաղկամերն է խաչաձեւ վնչած ծաղիկ , որ ծաղիկը բաժանեցց յեւ առ կընուիրն եկեղեցոյն :

(*) Ամէն տան միջումն եւ վերջումն կընել ջան դիւլում ջան ծաղիկը :

Աչխարն արել ևմ բաղը — զեմ որօիկ սէլի ակը .

Ավ խմ սիրածը տանի — չի վելի (վայելի) դիմի թաղը :

Կաքար կան ել ա քարին — կոտոցը լիքը արին .

Մի ազգուն վարդ ևմ քաղել — զրկել խմ ախաղօր հարին :

Վաղիկը դունցին պրծան , բերմ սուփրեն փանցին կանանչ խռայ վրայ , ամէն կոնկի իրա բողչի միջինը լցրուց մէջ տեղ . զինու զար ձեռն առաւ Խանումը , հարամերին ու աղջկերանցն ել ասեց , որ երևաները դին արած՝ Խանն . յնքն էլ կոտրած քիշտի պէս մէջ ընկած՝ նրանց ել հայ , խռակ տաւուց , մին էլ թէրմոնի դար : Կհանիքը ջոկ նստացին քէֆ արին , հարս ու աղջկեքը ջոկ : Վարդիթերի մէրը մի երեխի ձեռով մի սուփրայ էլ շինեց աղասի աղեքանցը , որ յիքու մէկել դինը հաւաքուած էին : Իրիկուան ժամը տախն ու հացցց վեր կացն . Էս թօրոնը դնաց Վարդիթերինց տունը , ընչունքի նրանց նորահարս ունին , նրա ծաղկաքաղն էր : Մի քիչ զէսից , դէնից զրից տուխն ու Վարդիթերը մէջտեղ բերուց ծաղկը , որ յիքումը դովել էին՝ ծաղկամէրն էլ մէջտեղը դրած . Հմայի կարդին նստացին նորից նոր դովիկ , էն թաւը չէր օրէնքը հմայ ա :

Խմ միջինս քամար ա — քու ունքերդ կամար ա .

Ա՛ տղայ ինչ ևս մափկ անում — խմ ջանս քեղ համար ա :

Մախկ տումք էն զաղին — պուտուտուրիկ բողազին .

Հողն էն հօրն ու մօր զլիսին — աղջկի կըսայ չորմազին :

Կանանկ ևս բարձր սարին — չոխիտ նախշը կարին .

Հեռու տեղից ևս զալիս — ուր ա բերածդ բարին :

Քաքուդդ թափ ևս տալիս — ձեռներդ ծափ ևս տալիս .

Էս օր էքուց քերկով — ամէն օր խափ ևս տալիս :

Գութանը հայ ևմ բերել — բերանը բայ ևմ բերել :

Տնս քեզ ինչքան ևմ սիրում — ձեռով տապիկած ևմ բերել :

Ա՛յ տղայ եախմող մովա — սուրբ կարապնար քեղ դովայ .

Ես քեղ խփան շատեմ սիրում — քու սիրան ինձանից հովա կանանչ խառէն քիսայու — կարմիր կովը մնայու .

Ես քու հօրը հարմանացու — զու խմ մօրը վիսացու :

Երթիկ վրեն թինդուկ ևս — էրթիկ կոճը բռնել ևս .

Հէրս քեղ աղջիկ չի ապ — ափսոս քունըդ կարել ևս :

Ցեսայ խանումը մկանց հաւկիրը շուռ տալ . տէփուրը առաւ ձևը ու շուռ տաղով տաեց :

Սկրայ ոլդայ սկստին տաւը , հաւկիրը չուռ անը :

Վախում ևմ քնիմ քունս տանի , չարսաւս տանիլ տամ ,
Մին էլ շուռ տուոց տէփուրն ու տուց .

Աղջայ , մերայ պատին տուր , հաւկիրը շուռ տուր ,

Վախում ևմ քնիմ քունս տանի , չաւս տանիլ տամ :

Ամէն մի հետ տէփուրը շուռ տալումը մի հետ մղջայ էր տառմ , ու
զլիաշորիցը բունած՝ ընչանքը մաշկները մի մին տանիլ տաղի . վերջին
էլ տանց .

Աղջայ մղջայ պատին տուր , հաւկիրը շուռ տուր ,

Վախում ևմ քնիմ քունս տանի , մաշկներս տանիլ տառ .

Յուոյ մի քալցը ձիով , աղջիկըն էլ հետը ձին ձինի տուած՝ տանցին .

Համբարձում ևայլա , (դնա ,) ևայլա ջան ևայլա ,

Համբարձում էկէլա , մէր բաշին կաննել ,

Լաջակ ա քցել մէկ մէկի վլրայ ,

Մինը տամբանց , մինը վերևանց .

Քա խաթուն գիւրադ , հունարդ երեաց .

Համբարձում ևայլա , ևայլա ջան և այլն .

Խանումը հինց որ հաւկիրը շուռ տուին պրծան , մէր կալաւ վարդիթերք
մօրը , թէ խնամի ջան , աչքդ լիս , վառք Աստուծու , անշառ , անխաթայ
անց կացրինք էս հաւկիրը , Աստուծու մին էլ ուրախ օրուով , ցամաք
աչքով էս օրը հատցնի : Ադրիւրդ անսպառ , խնամի ջան , չնորհակալ
ենք , լաւ ուրախութիւն արիք , մէր աչքի վլրայ , մէր զլխի վլրայ .
բարեկամներ , զուք էլ բարով հաղար բարի , Աստուծու էս ուրախու-
թիւնը ամէնիդ տանն էլ ռաստ բերի խրար չնորհակապոթիւն արին ,
Աստուծոյն վառք տուին , պրծան :

— Դէ բերէք , վարդիթեր ջան , վիճակի բուողը , անց խանումը ,
որ առաջ էր կաննել ամէն բանումը : Մէջ տեղ էկաւ վիճակի բը-
դուողը լցրած մի քիչ ջուր , մի երկու բուող խոժոս տւաղ . մէր զը-
րին մէջ տեղը ու յառաջ պառաւ կնամնիքը , մինը մի մատանիքը , մէ-
կէլը մի օղ , մինը մի քօրոց , մէկէլը մի սե փող ևս դանակի շղպը-
լինկ (անկոթ դանակ) քցեցին մէջն ու տանցին , « զնացի սաղ աշ-
խարքնը ման էկայ , շատ խեր ու բարի տեսայ , շատ փորձանքների
ռաստ էկայ , էկայ ընկայ էս բոլղի մէջը » . հինցն էլ կար , որ իրեք չորս
րան էր քցում , ամէն մինի համար մտքումը մի խորհուրդ անկուվ . յանոյ
տոմէնքն էլ մի մին բան քցեցին բղըդի մէջը . Աստուծունից խնորե-
ցին , որ խերով բարով վիճակ ընի ու տարան պահեցին , որ տուառ-
անց զան բանան , ամէնքն իրանց վիճակն խնամնան : — Մուզային կա-

ցլք , ձէն տուոց խանումը . ազատ տղեքանց էրմը , ֆէրմը (հնարադիտութիւն) ոչ ով չի խմանալ , կըդոգանան խափալ ու առակ կըլնինք . աման վարդիթեր ջան , տակ հէնց աւել դիր , որ ազգերաբինքդ չխմանան . մեր խեղճ երեխի (Թէլիդարի) բազզը ես զիսում , նրա խաթէնիր հետ ու . ուղարքի լաւ չի , թէ որ գողանան . ջանէլ ալդէրք , գուք էլ էլքք , էս ձադիկը տարքք , ալահեցքք , որ էքոց ման պատի ածուի , էդ ձեր բանն աւ .

Մեր քէյվանիքը էս իրիկուն ըսէնց անց կացնելց յետոյ , մնաք բարով ասին վարդիթերի մօրն ու ամէնքը զնացին իրանց մները :

Արի համբ Սօսիցը հարցրու . հէնց որ յիքանոնց խիզանը ցրուեցին , իրիկուայ ժամն էլ տուին , Գարեզինը բաց թողուց Սօսին զնաց ժամ . նա էլ ջակնուց հետի տղեքանցիցը , մէն մէնակ յետ դառաւ , Ելաւ քարափի ղլիվն նստոց , աչքերը քցեց զետի խշչան տեղը , մի քիչ միտք ամնելուց յետոյ , մին էլ վառուեց ու ջունուն դառած վեր կուր ջան դիւլումը էսովէ :

Քու սիրուդ ինձ կուպանեմ — աղջիք քու չարը տանեմ .

Դու խմ խօսքիա կամ արի — նանիոք ուազի կանեմ :

Զիթ մինթանէդ հընմաշ ա — ունքերդ դալամ քաշ :

Աղջիկ բնչ ևս միտք անում — խմ ջանու քեզ փեշքաշ աւ .
Աղջիկ բնչ լաւ մազ ունիս — սոխակի փարվազ ունիս .

Խօսքիա ջուղար չես տալիս — բնչ շատ էշս ու նազ ունիս .
Սազերդ օլորուել ա — աչքերդ բոլորուել ա .

Իրեք օր ա չեմ տեսնել — խմ սիրսու մողորուել ա :

Ամսիկ ևս սամպի տակին — ծընկդ ծունկանս տակին .

Ես քեզ բնչ տեղ սիրեցի — խնձորի ծառի տակին :

Եարս զրկել եմ թթի — աղջիք քու վլիզ փթի .

Որտեղ խաղաղու զնաս — ման արի եարդ քթի :

Պատի աղջիկ դալում ևս — մազերդ որալում ևս .

Գևզարդի դազարին դաս — միան ուկուից հանում ևս :

Պատի աղջիկ լաւ աղջիկ — ունիս մննծ համբաւ աղջիկ .

Խմ քեզ ծածուել սիրելքա — բնչու էլաւ չաւ աղջիկ :

Աղջիք դու շատ սառն ես — Արարտանան գառն ես .

Խիստ ճարտար լեզու ունիս — սոխակի բարբառ ունիս :

Զուրը կըդաց քարիցը — աղջիկ դու կըդաս սարիցը .

Սէրս բնչակս հոլիսնայ — քեզ պէս սոխակ ճարտարիցը .

Ես զիշեր լուսնիակ զիշեր — ձին էկել զետինը նաշխնել .

Դոչդ զէմ արա սրաչեմ — կեռ ունքեր , կարմիր թշեր :

Սօսը ջամն զիւրումով քարափները դողացնելով՝ բան չի շնուց . զիժ մողու պէս վեր թռառ տեղիցը , Ակաւ իրանց տունն ու լոռ ու մանջ նաևոց . ոչ պոօչը պոօչն կպցրոց , ոչ թերանը մանանայ դրոց . մէրը , աղպէրտինքը ինչքան էլ զոռ արին , ևա բան հարցրին , հօնրան տուած՝ հօ սար ու քոլին՝ մին ա . թէ դու ձեր աշնիը ջուկար տուիր , նա էլ քեզ հետ : Խեղճ մէրն ու աղպէրտինքը տեսան , որ էլ չի ի օւում , իրանք էլ սուս կացան . խմացան , թէ ընչի համար էր նրա լալանալը :

Հացից յիտոյ մէրը անզերը քցեց , սղեքանցը քնացրոց , Սօսին էլ տաեց , որ մտքի դրածիցը յետ կենայ . դիտեր , որ պարի քշերս աղէն անքուն մնայ , վախում էր , թէ զիլօնն մի փորձանք չի գայ . համա Սօսը քառի պէս քառացել , լալի պէս լաղացել էր . ոչ լսեց , ոչ էլ ծովուաց : Խեղճ մէրը , որ անձախ կրակներումն էր էրվում ու շուաքներումը չէր հովանում , մոռաւ տեղը ու տաղ արուց . չուկեց քնի , որ տեսնի , թէ տղին ինչ ա ընտում . համա ինսան՝ էր , Աղամորդի էր , քնի զալու վախուը աչքերը իրանց իրանց խփուեցին :

Սօսը նստելա տեղումը ու աչքերը բաց սպահում . քոն ու երաղ իրանից փախել են , պի (զե) ա դառել . միտք ա տնում , թէ երբ պար մտքի դրածը կատարուի . մին էլ , կընէր կէս քշեր , տեսաւ , որ քշերը ցերեկ դառաւ . արեի շողքը երթկոսիլը ընկաւ տուն . ինքն էլ ստքի , թէ Ակարան մի դաշտ տեղ կաննած ա . էն դաշտի ծաղկների խշնչոցը , նրանց ռանդը , հոտը , սիրունոթինը , էնտեղի հաղար տեղից վաղող աղբիւրների հայրու պէս պարզ ջրերը իրա սիրուը հէնց ուրախացրին , որ էլ չէր կարծում , թէ աշխարհքումն ընի . էս տեղը մի հարիր հետ տեսած կընէր , ըսկի միտը չէր զալի , թէ մի օր ըսէնց տեսած ա . պապերիցն էլ չէր լսոծ , պէլացել էր մեացել . Ոին էլ էն տեսաւ , որ մի սասամիկ քամի Մասիփոյը դարա Աղաղեաղը դալով ձն ա տալի . պատրաստ կացէք դաշտներ , քոլեր , ծաղկներ , խոսեր , ձեր աէրն ու սիրականը , էս աշխարհքի մէրը զալիս ա : Էս ասելով , քամին անց կացաւ ու քամակիցը Մասիփ էկաւ . նրա առաջին սիրուն , ջահել աղջկէքը իրանց քաղցը ձէնովը ջան զիւլում տեսելով դալիս էին , ձեռներին մի մին փունջ ծաղիկ բռնած . Մասիփ հասաւ Աղաղեաղին ու ճառվն ընկաւ նրա , փաթաթուեց ու տաեց . աղպէր ջան , էս . օր թնդ ուրախանան ամէն սիրեկաններ , որ իրանց մուրաղին հասնիլ պառն : Վերջը իրանց զլիսին ինչքան ծաղկներ կար , հրամայեց , որ լեզու ընկն ու ասեն , թէ ընչի համար են . մինն անց , թէ հս զլիսացափ զեղ եմ . մէկէլը , թէ որտեղ ինչ ցաւոս մարդ

ըլնի, ևս նրան կըւսազ սցնեմ, մէկը, թէ ով որ խմ ջուրը ծծի՞ էլ միունիլ չի . մէկելը , թէ ով որ խմ տերելիցն ունենայ կշոմն , ինչ մուրազ անի՞ կըւստարուի ու ամինը մի տեսակ բանի ուէաք զան աւելին . Ասուր հենց որ էս վերջնի խօսքը լսեց , վրայ թռաւ , որ մի տերե էլ ա սրոկի նրանից . համա էն սհաթը Մասիսն ու Ալաղեաղը Իրարից ջոկնուեցին , Ասուր մնաց էլ յետ Արարանու դաշտումը : Արանից յետոյ տեսաւ , որ մի սուփրայ բաց էլաւ էդ չայիր չիմանի վրոյ . աշխարհում ինչքան կիրակուրներ ու անուշուրներ կային , էդ սուփրի վրէն շարուեցին . մին էլ էն անմիա , էկան Վէլին ու Մաջլունը կուռ կուռի բռնած՝ ուրախ ուրախ , ծիծաղով , նուացին սուփրի վրայ , հաց կերան , ուրախութիւն արին , Վէլին պինին ածում էր տալի Մաջլունին , նա է՛ Վէլուն . յետոյ մի թառ զինի լցուեց Վէլին ու սուտց Մաջլունին , սակազի . սիրելինդ իմ , մինք ըսէնց ուրախութիւնի միջի հնք , ըսկի էլ չնք ասում , թէ էս օր մի մարդ կայ , որ քանի խմ ու քու քէթը անսում ա , սրտի եաբէթը նորանում էն ու միր առաջին գուլ դառած կաննել ա . ուզում ա , որ խմանայ իր զիսի դալացուկը . ինչ ես ասում , նրան Բնչ ջուզաք անսք , ընք էս ուրախութիւնիցը նրան էլ դամաթ անսնք , թագ զնոյ իր մուրազին համիւ — Սիրելի Վէլի , սակաց տրամելով Մաջլունը , դինու թառը ձևան բռնած . էրնելի մարդի սիրտ խմանայիր , նոր ասէիր . օրհնութս դու , բանի տակը չխացած խօսում ես . ըսկի կըխմեմ ու ես էս զինին էլ չիմ խմիլ , սակաց ու թառը սուտց զեանովը , ձեռը քցեց Վէլու ճըտովը ու աներեւոյթ էրաւ . Ասուր էս թառի չըխմոցիցը վեր թռաւ , տեսաւ , որ նստած տեղը քոնը տարած ա էկել , էս ամինը երազ են էկել . համա աշկարայ խմացաւ իր միջումը , որ սրտինը չի ընում , սիրտը կոստած երեսի վրայ ընկաւ բարձի վրայ ու էլ իրան խմացաւ ոչ . մին էլ աչքերը բաց սրուց , տեսաւ , լին էրթկովը տոշն աընկել :

Աստուծոյ վար բացուեց , կարմիր սրելը սոկու պէս պապզին տարսի՝ Մասիսի վրիցը սազ աշխարհը բռնեց , տառը տարեկանից ցած աղջկէթը մի մին տէփուր զիմներին՝ ծաղկի վնջերով լիքը , զանէ դուը ման են գաղի , ամին տան մի փունջ տալի ու ասում , « ծաղկամօր վայը տուէք » . նրանք էլ կաթն ու ձու են տալի կամ ըրինձ , որ տանին իրանց համար կաթնով վլաւ էվեն . ընչունովի էս օր ամին աղքատ տան էլ սրտի կաթնով կիրակուր էփի . ուները չոներին կըլդիլի . ծաղկամէրն էլ , ծաղկիը բաժմնելոց յետոյ տանում են

Կարմիւսոր եկեղեցու դուսը համբրում ու ընտեղ վեր դնում:

Վարդիթերի մէրն ել Համբուրձում հինգշաբթի քչերհանայ վեր կացաւ տեղիցը , կաթնումն էփեց ու զրկեց իրիուան վիճակ քցողներին կանչիլ առուց , որ դան վիճակը հանեն : Վարդիթերի սիրաց տրփում էր , թէ Երբ սպոի վիճակը հանեն , որ իր բաղդը փորձի :

Խալխը հաւաքուեցին ու Խամնումը , որ աղաջբաշին (զլխաւոր զերանն) էր , բերուց մի սրտի հինգ տարեկան անմեղ աղջկայ , որ խէր ու շառը զնու չէր ճանանչում , նառացրուց նրան մէջանզը , զլխին քցեց մի կարմիթ քօղը ու վիճակի բոլողը առուց ձեռը , որ հանի . ինչըն էլ վեր կալաւ ու ասեց .

Ալիրել եմ սերն երեսին ,

Ուհան թէրն երեսին ,

Ով իմ սիրածն ինձ չի տայ ,

Ասու կրակն երեսին :

Արմիխն ձեռը տարաւ ու հանեց մի աղջկայ մատանիք , ամինը մի տեղից ձին տուին . աչքով լիս , լաւ կրնի բանդ , վիճակի լաւ դուս Եկաւ . Յետոյ Խամնումը մի տուն էլ բան ասեց , մինն էլ դուս Եկաւ , համն չի սազեց . խեղճ վիճակի տէրը սկսեց նոթերը կիսով ու հոգեց քաշելով յետ քաշուիկ դրաց . հասնա քէ յվանի կնանիքը ասին , որ մէկէլ քցեն բողի մէջը բալքի սխարդեց :

Յետոյ սամին կիսով մի մին դից մի բան ասեցին . որի վիճակը լաւ դուս Եկաւ , որինը վաստակած էր կատարել ասեց .

Երթիկ երթիկ բռնել ես ,

Երթկատակին կռնել ես .

Իմ նանը քեզ աղջիկ չի տալ ,

Անուշ քռնել կտրել ես :

Արք քօռ թաղահը անս , վայ նրան , ինչ Աստուած չի յաջողի . էս վայը մէր Վարդիթերի զլխին Եկաւ . Էղումը դրա մատանիքը դուս էկաւ . սամինն էլ մտկդ տուին խեղճ աղջկայ երեսին , որ հինց ահասի մատանիքը թէ չէ , աչքերիցը դրզալով վեր ածեց ու հինց ուղում էր առնիկ զնալ յետ , մէրը մին էլ քցի տուոց , թէ ինչ ու բալքի Աստուածու աչքը վրեն քաղցրանոց . աղջկայ որտով ընի վիճակի :

Մի քանիսիցը յետը մին էլ ասեցին .

Շաղիկ տնիսմ ալոյ ու ,

Ալայ չի արվալայ ու .

Եար բոնիլը լառ կրլի ,

Բաց թողալը բալայ ա :

Եմի երեխմէն ձեռը տարաւ , բողիցը հանեց . Եղ խեղճ Ապրդիթերի բաղդիցը էի իրանը զուս Եկաւ . ջրլիս սիրու կուրած , աչքերը զի-ախնը քցած՝ տաց . մին էլ քցեցէք , հանքն իրեքումնա , բալքի ով զիտայ իմ վիճակը բախց ա : Անրջը մին էլ տանցին .

Էս օր ուրբաթ ա , պաս ա :

Սոցինդ էրծաթէ թաս ա :

Հողիոր զատի վարդապէտ ,

Խիստ իր ասում չհաս ա :

Մարդի բան , որ մի հետ թարսուի , օխոք տարի էլ չարչարումս , չևս կարալ դրատիլ . Էս էլ մեր խեղճ աղջկանը զուս Եկաւ . ամէնքը ջուր դառան ու սառած՝ միացին իրար երեսի մտիկ տալուլ . տեսան , որ աղ-ջիլը սանգը ջրլիս քցաց , մկնեցին ամէնքը մի դից սիրու տալ . մինն տաց . վիճակն ինչ ա , որ աւատում ես . մէկէլը՝ թէ սարքովի բան ա կնանոնց խելքից զուս Եկած ու դհա ուրիշ բախց խօսքերով՝ ուղեցան Վարդիթերին ուրախացնեն : Այնակը , որ պրծան , բղդի ջրիցը ա-ծեցին մի թափ մէջ ու երկու կնիկ իրանց բթերուլը (բոթ մասն) բանեցին բոչ . մէկէլը սրտումը մի մուրազ արեց ու ձևոք ջրի երեսին քսելով՝ ասեց . թէ աջ պատվի , խեր զայ . թասը էն ուաթը առանց ժաժ տարու պատվեց աջ . Էս դիցը էն դիցը աչքալիս խօսացին , որ նրա սրտի մուրազը կատարուեց : Յետոյ ամէն կնիկ էլ սրտումը մի մուրազ անելով՝ ձեռները քսեցին . որինը աջ էր սրտումը , աչքալիս կին խօսում . որինը ձախ՝ ասում էին սուս բաներ են , սրտի ումուտ-ներ են , ուրիշ ոչինչ (*) . Մեր Վարդիթերին էլ մոքումը էս դրուց , Ասովն թէ կարողանամ էս աշունք ուրախացնել , աջ զատվի . համա ինչ օդուտ , նրանը ձախուելուցն էր վեր կացել էս օր : Անմիքը տե-սան , որ նրա բանը չի աջաղողեց , ասին . Էս օր քու վրայ չէկաւ . օրիցն ա , թէ չէ մի հետ էլ ա լաւ կընէր վիճա-կըդ . համա նա իր զբուխը հինց առաջի վիճակումը լաց էկաւ , ըստոնք աւելորդ էին :

(*) Այս վիճակի սովորութիւնը Հայաստանումը ամէն տեղ կայ և յուրը բաժակով պահու ածովը իրանք են , որ իրեւ խորհուրդ կըսահանեն իրանց մէջը , որիներին հաւասարութով , թէ ինքն իրան է պատվամ :

Ամէն բանը երբ որ վերջացաւ , սուվորէն բերին քցեցին . պառակէն ները չոկ նստեցին , հաղան ու աղջկէրը չոկ . կաթնովի ամանները յառաջ քաջցին , կերան ու վրէն ել խորովածը , նրա վրէն ել ուկու ռանդ զինին մի մին խմեցին ու օրհնեցին էս օրուան վիճակը , որ ումը լաւ դռւ ելաւ . լաւ . ունն ել վաս դռւ եկու . Աստուած տայ , որ լաւանայ ու երբ որ հացցից սլրծան , չնորհակալութիւններ անելով . ամէնքը իրաշցերելուքը վիւր կաղան ու դնացին . հիւսնդառելուն ել վիճակի ջրէցը մի մին թափի մէջ լցրած տարան , որ նրանով լիզացննն , բալքի սողանան . աղասի աղջկագտէրին ել տարան աղջկերանց զլուխը լուանան , որ մազերը երկարի . Մեր Սուն ել մի կնկայ մի դանակ եր տուել ուրիշ տան . որ իր համար վիճակ քցի . ևս խեղճի վիճակն ել հինց էն եր դռւ էկել

Երթիկ երթիկ բանել ես .

Երթկակոճին կոնել ես .

Խմ նանը քեզ աղջկէ չի տալ .

Անուշ քունդ կորել ես .

Սօսը հինց որ իր անխէր վիճակի համար բանց , զլխին կրակ վառչ վնց . աշխար ելա՞ ընկար մւքանիքը ու ինքն իրան կորցրածի պէտ թառակէ թառակ (թաղէ իթաղ) ման եր դալի . ընչոնք ընտեղանք քարէքար դիպան , որ իրինապահ մօտացաւ . յետոյ տեսաւ , որ բան չի դառնում , յետ դառաւ դեղը դնաց Գարեղնենց տունը . ընչոնքի մի օդ ել Անուշին եր տուել , որ Ծաղկելանք իրա համար վիճակ բանայ , տեսաւ , որ Անուշն էկել առ հինց իրան տեսաւ , տիսուր , արտում ասնց , ողորմի Աստուած : — Ողորմի ծնողացդ , ոիլակդ տայ , ասեց Սօսը . կերած խմաններդ ձնդ անուշ , տեսածներդ պատմի . հաւ մի առաջ ասաւ տեսնիմ . ալչու ավէքդ , թէ թօխան . (այսինքն յաջողողուեց , թէ չէ) : — Եհ , ալչու , թոխանով , որ մարդի ողիսի դարացուկը խմացուել եր , ունքերը վրայ տալով ասեց Անուշը , հիմի ել ինչ մնացած կըլնէր աշխարհքումը թաքտն . սաքի ինչ տամ . սար ու քօլ ել քեզ հնետ ինադ են էդ բանումը , Աստուած ա մնացել . վիճակդ լաւ չի դռւ էկաւ . ուխտաշնորիցը նոր էկած , կարսդ չմամ քեզ խտովիդ : Սօսը երբոր լսեց , եքսան (կրկին) դարդերը աւելցան . վիր կացաւ անզցը , որ դռւ ընի . համաս Գարեղնոր քարեկացաւ նրա թիզ սրափ վրա , թէ դռւ ինվի ես , ինչ ես , որ էդ թահնը ալին , ոյին , պառաւական բաններն առատում ես : — Զէ ասեց Սօսը , քչերա ինձ ամէնն ել յայտնուեց . Մաջունի խօսքերը սրտիս ումուտը կորեցին , տունս քանդեցին . ինձ ըստոց յետոյ մնացել ա զլուխս առնիկ կորչիկ աշխարհքէ աշխարհք :

— Տօ , նստի մյ խելքապակաս , ասեց Գարեգինը . տես ինչ լու նվասութիւն ա անում Անուշը . ինչ բաներ ա անց կացել Ծաղիկյանք . աղջիկ , արի մին էլ պատճի տեսածներդ .

Անուշը էկաւ տափ վրա կանաց ու ասեց . Ե՞ս , ինչ կար . ամէն տարուայ ոլէս մի տարի էլ էս եր . Ե՞ս Ծաղիկյանքայ ձորը բերնիցը հետ լիքն էին ըմասաւրներով . Ապարանու կոսնիքը նղների վրա նըստած՝ կարմիր ջուրէքը հաքներին , մի մին զաթրի (Հորի) զոռեքանցից (զանողակ) մենք էրծաթէ շարք (մանսակ) շնորհներին զնողնդացնելով . աղջկէրանց պահերը ծակած՝ մի քիչ էրծաթէ անցկացրած , բըրթէ թելի մարդերի ուսերքավ , երևմներին անդ անդ կապիս խալ արած . մարդիքը զաւթնի անվարիքը (Նրկար քամին մինչեւ ոտները) հաքներին , մուջասիմի առջուսով վիաթաթած քոլոդները դլուներին . Երեանցիք լաւ , լաւ , մեր զամսուրի (ձևով) շորերը հաքներին , ջահել տղիքանց մահուա չուխմանց թեները ուսերքին քցած՝ կարմիր զանաւուզ ասասաւով , խաղ կանչելով , թուանք քցելով , իրար քամակից ձի քշելով , իրար դասկ զլիփից փախցնելով . կոսնիքը ձխանոնց վրա չարսաւառուած՝ նստած , մի մին բաղրամի աղլուխ չարսաւի վրէցը բերանները կաստած , խաս խաս շորերը հաքներին , սաղրի մաշկները ուսներին : Դաշտըցիք (Աքարասման դաշտի զիւզորէից բնակիչքը) որը ուսնաբաց , որը կարմիր ջուրով , որը մինթանով զալիս լցուում էլն էն խոր ձորի մէջը . մի մարդ , որ խօսում էր , քարափներն ու ծառերը նրանից բարձր էին ձեն համում : ուր մնաց , որ էօքան զամսուալիցը մարդ մարդի խօսած չէր հատկանում . հարիր անդ չատրներ էին վերթողած . մասաղացու զառների ու ոչխարների ձէնիցը վլրի (վլրի) ոչ-խարներն ու մարաններն էլ էին հաւէսի ընկնում , որ զանիրանք էլ մասաւ ընկնին . մաւզն ու ծուխը սաղ ձորը բանել էր . զափ ու զուռնէն մարդի ճռներն էր ընկնում . խաղ կանչող տղիքանց քալցը ձէնը լսողի խելքն էին տանում , քարափներն էին ձեն քաշում նրանց . ձորի միջիցը ընչանք սուրբ վասլառիա կուսի յերի (այր) (*) դաւը , մարդ ու կնկայ

(*) Այս այրի մէջն կայ մի գերեզման , որի համար տառմ Էն , թէ Վասկափի ա կուսինն է . Երբ նա քրիստոնեութեան համար հարածուել է հօրիցը , փափել է , էկել այս այրի միջն թափ կացել : Հայրը հարցնելով էկել է մինչն այս լեռան զրուխը և այն առզի հավիններից խացել է , որ իր աղջիկը ներքել այս այրի մէջն է . էկել այդ անդ համառակիել է . բայց նա իր մահից տառչ ինդրել է Աստածանից , որ որքան Մաղիկ ցաւով հիւանդ լինին , իրան մէ-

ձեռից ոտ փոխելու աեղ չի կար , մըջմի քարվանի պէս տասը վիրե
էր զնում , քսանը ներքե դալի . յէրի մէջը շունչ քաշիլ չէր ըլում համբ-
րողների ձևուցը . Են ասքառած քարավիցը ջուրը կաթ կաթ թափում
էր . շատ չըեր կնանիք զնում էլմ կաթիցի տակին կաննում , որ ընկ-
նի զլիներին , երեխայ բերեն . որի մուրալը կատարուում էր , նրա
զիլին մի կաթ ընմինում էր . որինը չէ , կաթիլքը տեղիցը փախչում ,
որիշ տեղ էր վեր ընկնում . յէրի միջի հաւուղը վախա ջրով լցուում
էր , վախտ ցամաքում . դիլակ անողները դալիս էին ձևուները կոխում
մէջը , տակիցը մի բուռը աւաղ հանում . ում դիլակը տալիս էր , ա-
ւաղի միջին եա քորոց , եա ուլունք , եա սաեղ , եա թէ չէ որիշ բան
էր զուս գալի . թէ չէ ումը որ չէր կատարում , աւաղ էր զուս գալի :
Ես էլ ձեռս ասքայ , մի վէդ (կոճի , ճան) դուս էկա . խացայ , որ
հարսս տղայ պատի բերիլ . տէրտէրները ֆարաջէքը գոտիները իրած
մի էջմիածնայ թուանքչի (պահապան) էլ հետները քցած՝ երկու էլ
որիշ մարդ , էրի ու մորթի էմ կիտում . համա ինքը առաջնորդը վե-
զարը վեր կալած՝ գերեզմանի վիրել նստած՝ խէջամբուր քցողներին
օրհնում էր . յէրի շոքութիւնիցը ճակատի քրախնքը առուի պէս էր վեր
դալի , մարդ չէր կարում կէս սհաթ միայ յէրի մէջը , նա սաղ օրը
ընանդից վեր չի կացաւ . խսնի նրա համբերութիւնին . հալբաթ ի-
րան որբութիւննա , որ ընէնց զիմանումա , թէ չէ մինք խի չենք կա-
րենում . Խրիկունն էլ մեր չատրի տակին վիճակ բանակ կար , խայ-
տառակ էլանք , Շագկէվանքայ սարի ծաղիկը թօլ , էնքան քաղել
էմնք , որ երկու խորձը . բերինք լաւ , սիրուն ջան զիւլումով գո-
վիցինք , վինչեցինք . վիճակն էլ՝ լաւ տեղը տեղին քցեցինք ու վեր
կացանք մեր չատրի առաջը դուղ էր , ընտեղ մի լաւ եալի բռնեցինք .
Ախնակ էր , ինչ ցերեկ : Ալլին աղասի տղէքը , հացը նրանց հալալ .
համ վիճակը գողցան , համ էլ Արամենց Նունդարի զլիիցը բաղ-
դատի աղլուխը փախցրին . եալին քանողուց , չփոթ դառս . մեր
չատրի տղէքանցիցը մի քանիւը ընկան յառներիցը , սաքի բռնեն ,
համա պոչը իրանց տակին էր , սատանութիւնը իրանցում էր . իրանք
էլ հընկեր էին , թէ չէ ճար ու մոհքիւն չի կար . հէնց աեղ էինք
պահել բղույլը , որ սատանէն չէր դանիլ . զողը , որ տանու ընի , եզն երթ-

նունովը բժշկուին և իրը թէ անիծել է հալիւներին իրենց ոչխարներովը քար
են դառել և կան մինչե ցայսօր վեռան զիխին . բայց դժուարութեան համար
չէ կարելի բարձրանալ , կամ թէ շատ քիչը կըրաբրանան :

կովը դուս կըքաշից . մենք վերջը խմացանք փախցնողը , վարադրա-
տենց բարեկնն ա ելել ու Արակենց Անուշաւանը : Նոյնմղարի աղլուին
էլ , որ փախցրին , բնչ պատի անեխնք , կաները հօ կտրելու չենք .
առաւոտենց տասը միջնորդ ենք քցել , օխոր ձիու մուննաթ արել , որ
կարացել ենք էղ զօչաղ տղեքանցը մի քանի գաթայ , երկու խաշած
հաւ , մի երկու բաժին մատաղ էլ տալ , որ ձեռներիցը տոել ենք ,
վիճակը խոց արել : Ես զիտեմ լաւ դուս կըքար քու վիճակը (Սօսին
է ասում) համա հարամուց վիճակը , տղեքանց ձեռ ընկաւ , ընտուր
համար խելքը զմակն ոչովինը չեր . . . — Լաւ լաւ , խօսքը կըտ-
րելով ասեց Գարեգինը . ամակդ նրուսաղէմ . դնա մի քիչ մատաղ
ու խաչալուայ ընք , մենքը էլ թաթախուենք : Գարեղնի մէրը վաղոց
հացը շմնել էր , վեր զրել . երբ որ լսեց , էն ո՞հաթը դաստախունը փը
ռեց , մի քիչ գաթայ , մատաղ ու Ծաղկէվանքից յետ բերած կիրակր-
ներիցը դրոց առաջները , գաւն էլ պաշարի դիմուցը լցրուց կշններին
վեր զրուց : Սօսը զինին ձեռն առաւ ու ասեց . իմ բաժինս չնորհաւոր
բարիկենգան . ևս էքուցվանից սուրբ կարապետու պասն եմ ընչանք
վարդիսորը . իմ փայ միսը ձեզ հալալ , էս օր յետ ու առջի միս ու
տիլս ա , բարով համնենք էն օրը , մին էլ ով սաղ , ով մեռած
լաւ աչքը պատի , որ տեսնի . լաւ Աստծու դիրեկան տղայ պատի ընի ,
որ իր մուրազն առնի . Տէր Աստուած քեզ փառք . ասեց ու խմեց
իրա վերջի զինին ու հաց կերաւ Գարեղնի հետ , ուտիտի ծէրին կապ
տուոց , բերանք լուաց ու ընչանք վարդիւոր կիրակին պաս մնաց .
համա շտբաթե կիրակի նաւակլստիկ էր պահում , ոնց որ Հայ — քը-
րիստոնի օրէնքն ա :

Ժ. Գ .

Համբարձմանից յետոյ մին օր սուստունց խել ու շառը նոր
էր կոստրել , վարդիմերի հէրը տեղիցը վեր կացաւ , երևը լուաց , ե-
րեսին մի քանի խաչ հանեց ու տղեքանց վրայ թոնթորալով , թէ ան-
բան են , փան , ճաշքուն են տալի , մէր յիքանիքը հմմի եաղին
(դողը) տարաւ , տարուայ էս վախան ա հասել դեռ մէր յիքանոնց պա-
տերը չափարած չի , մէր մարդ ու մուրզը չորացել ա , մի քիչ պոլո-
նիկ (լորի) ունինք ցանած , ոչ բար ա զրած (ամիացնել արմասները
հողով) ոչ չախած (նեցուկ տուած) , էս խսնի խարարի տղեքը ոչ մի
քանի համար հոգս չեն քաշում , դաստած հացի վրայ են նասել , էս

խալիսի տղէքը քշորն էլ չեն դնջանում, մեղ Աստուած տղայ չի տունել, ալատիժ ա տունել, մի քանի անկի (վոռքը ծառ) ենք կնաել (բունիցը վեր ճղքերը կոսորել), շինեցը հաստացան, պատրիս (պատուաստ) չեն դնում, թէ էքուց իրանց համար պատու տայ, ևս էս օր կամ՝ էքուց ոչ, իմ ընչին ա տղտքը, ըսէնց մի քանի խօսքեր ասելով՝ զնաց աաշխիցը մի կտոր հաց վեր կտաւ, դրուց դումկած ալը, էտոյն էլ խրեց մէջքը, բանն էլ դրուց ուսին, հալիւոր հալիւոր ճամփու ընկաւ դալա յիքին զնաց, կնկանն էլ թամբան արուց, որ տղէքանցը վեր կացնի, մի մին հաց տայ իրանց ու զրիի յիքանիքը. զնաց յիքին, տնաւաւ, որ ջրի հերիցը իրանց հարեանինն ա. բանով կտաւախ (ջրի մուտքը) տակիցը հէնց բաց արուց, որ ոչ ով չխմացաւ, թէ ջուր ա կապէլ, արեց մարգերի վրայ, հէնց շինեց, որ թէ տեսնին, կասեր, ևս խաբար չեմ, ջուրն ա ծակիել. յետոյ էտոցը հանաց մի քանի բազամարդի, աղջանաբառթ, դայտի, գեառդեաւ (ծիրանների տեսակներն են) ու ուրիշ բաւ ծիրանի շիներ կտրեց, տարաւ կնտուած վիս ծիրանիք, դամբուլիք, շլորիք ուներ նրանց նոր դուս քցած շիների վրայ մասորիս զրուց. զնաց մարգերի ջուրը կտրեց պօլօնըի վրայ արուց, ին էլ ջրեց ու բաց թողուց ափան վրայ ու բնքը քաշուեց, զնաց յիքու որքը (ներքե), ծառերի որ ճուղին աւելորդ էր կտրատեց չափար շինելու համար ումի կանանչ տեղ նստեց, քրտինքը որբեով ինքն իրան ասեց. Է՞ն ընչիս ա պէտքը, ինձ մինն ասող ընի, թէ ժամիցն ընկել ես, եկել ըստոնդ խալիսի ջուրը կապում. ինչ անեմ ախալէր, անում եմ՝ զնամիշ են անում, չեմ անում՝ իմ տղէքանցիցը ճրադ վիկապում. ևս իմ ողորմածիլ հօրիցը էս եմ տեսել, համա հիմիկուայ արդեքանցիցը Աստուած ազատի. խալիսն էլ ասում են, թէ չեթումը բաղդաւոր ա, վեց տղայ ունի, Աստուած պահի, իր հարարին հասել են, համա չեն իմանում վաղի առակը, թէ « իշին ասին աչքդ լիս, քեզ քոռակի ա էլել, ասեց բնչանեմ, որ իմ բնաը իմ միջքիցը ողակ-սով չի արտի ». հեմի իմն ա. տղէքն Աստուած պահի իրանց համար, ինձ մի փարի օրուու չեն բերիլ. աման, Աստուած ջման, քեզ դժար չի գայ, զու իմ տղէքը պահնես . . . Ըսէնց խօսում էր չեթումը, որ ջրասերը բահը ձեսին վերնը կաւառը կտրելով՝ ձին տուուց . այ ջուր կատող, ձեղ ամօթ չի, չեթումը, որ լաց, թէք ընկաւ, համա ջրասերը վալուց անսել էր, մին էլ ձին տուուց . չլթում ափէր, ախար էս բնչ էր անում, Սա տեսաւ, որ չի կարաց տափի կենալ, վեր կտցաւ ու դուաց . որդի, քու արելը, ևս խաբար չիմ. կընի, որ

Հուրն ինքն ա ծակել . ես հէնց նոր նիրքն Ելայ , դաւ չի կար . ՏԵ-
շերս ել ջուրը շատ վարար էք տարել , առուի թմրմբովը քցել ա , ՊԵ-
նացկ մարգիրը , որունքնիլը ջրմլ . հէնց թաց եր , մէկել օրն եի ջրմլ
քուրա տղի ջրովը , սաքի Ելայ , թէ բար զնեմ , տնայ որ ջրուել ա .
կտրի տար , աղողեր ջան , քու ջուրն իմ ընչին ա որէուը . եքուց , ել
օր եւ մեր յրի հերթն ա , քիզ սազն ասեմ , ուզում ևմ ըալի՛ ջուր չի
կապեմ : Սաքի ջրատերն ել դիմեր , որ սուստ ասում , համա թնչ , տ-
րուխցն ամանչեց , ջուրը կտրեց , զնայ , աղանչաք անելուլ չեթում
ամիեր , քեզ արքայութեան ընի կտրես ոչ . ինչ ունինք , չոնինք ,
չորացկա , չեթումը ընչանք կացաւ , որ ջրատերը սոր միքուցը դուս
դրուց . ել յետ զնայ ջուրը քանուց ու Ելաւ ներքն , բահը դրուց ՊԵ-
խատակին ու թէր ընկաւ , որ աչքը մի քիչ կոցնիւ Սի աչքը քուն եր
մինը զարթուն , որ պատի տղին , փափակլը , վերեիցը ձէն տուոյ . վիր
թռաւ տեղիցը չեթումը ու Ելաւ տղի կուչոր : Խնչ ա ամեց , որդի , ա-
նուշ քունս կտրեցիր : — Ավաղարշակենց Արշակը մնուելա , հեթհեթալում
տակ տղին . նամն ասում էր , արի , զնա վրէն , բարեկամ ա : — Խնչ
ես ասում առ , Երբ մնուաւ , ողորմի իրան , ափսան մարդ , դեղի սը
ների մինն ել վեր ընկաւ . հիմքեց զինը վայ գեղի օրին . մնացինք մի
երկու իրեր ծեր մարդիկ , մննք ել ես ա մի ուներս զերեղմանումն
ա . առ ժամը տարան , թէ չէ , յետ դառնալով հարցրուց տղին : Չէ ա-
սեց , նոր ին նաշը (զագաղ) տանում , կէս ոհամթ կընի , որ մնուելա :

Հայւորը ճամիսու ընկաւ դաւ գեղը ու ինքն իրան ասեց . ողորմի
քեզ Արշակ , ինչ տարար . աշխատեցիր աշխատեցիր տղէքանցդ հա-
մար , հիմի տես ինչ պատի անմն քեղնից յետոյ . էհ , վուչ , անցաւոր
աշխարհ . որ մինս պատի սաղ մնանք , ես ել փիթած զերան ևմ դասիր,
էքուց ել ես պատի վեր ընկնիմ , իմ տղէքն ել նրա տղէքանցիցը պահաս
քէղորմաթ (անառակ) չեն : Ըսկնց խօսալով Ելաւ գեղը , զնայ ննջե-
ցելատիրանջ տունը , տեսաւ , որ լաց ու շիւմնը քցել են . կնիկը զինին
տայխա ա , երնը պոկում ու զուում , տղէքը վայ տիսու ջան են ձէն
տայլի . աղջկէքը մօր ճառովն ընկած՝ նանի ջան են կանչում , մնը տու-
նը քանդուեց . վիսէքն ել մի քիչ Ափու ձէն տալուց յետոյ տանն են
մարիկ տաղի . խալիսը տունը լցուել են , բարեկամ կնանիքը օղլուշաղի
կշտին նատած աչքերը արտասունքով լիքը ձէն են քաշում կնկայ լու-
ցին . ննջեցեալքը տարել են մէկել օթախուր , իւղացրել ողբել են ու
պատանում են . նաշը դրանը վեր դրամ ա . տէրտէրները Եկել են
մաշտոցները ձեռներին կաննել , մնում են , որ պատանին . ինքն ել

զնաց մի քնչում նստեց անխօս , մարդկանց միջին : Պատահացին ննջեցելքին , դրին նաշի մէջը ու դժագարդը քցեցին երեսին ու տէրտէլքները տան կարդը կատարեցին . բարեկամները բռնած կնկայ ու աղջկերանց ձեռները բերին , որ վերջի բարովը տան . կնիքն ու աղջկերը ընկան նաշի վրայ լաց էլան . լացը որ մի քիչ թեթևացաւ , վեր կալան չորս մարդով նաշն ու տէրտէլքների եսեցը տարան զպաժամ , տղէքը , փէտէքն ու ուրիշ մօտիկ բարեկամներն էլ գտակները զլիներին Ավու ջան կանչելով , շնչները ծռած զնացին ժամ :

Ննջեցեալքը վեր դրին ժամումն ու յետ զառան : Տղէքը ուղեցին , որ հենց էս օր թաղեն , համա Գարեղինը , որ համ տիրացու էր համ բարեկամ , չի թողուց , թէ անաշները , թողէք էս օր կենայ էքուց պատարադ կանենք , կարդին կըթաղենք , դուք էլ ձեր պատրաստութիւնը սեսէք . հաւի ճուտ հօ չէք կորցրել , հնոց տարեկան քօրիս հօ չի . ինքն էլ մի անուան տէր մարդ էր զեղումն . դուք էլ ժամուգ էք փառք Աստուծոյ , ողորմի իրան , էնքան յետ ա քցել , որ կացէք ու կերէք , էլ ինչի պահ էս օր թաղէք : Մեռելը մնաց ժամումը , իրանք պատրաստութիւն տեսան իրիկուան համար :

Իրիկուայ ժամը որ դուս էկաս , տէրտէլքները , տիրացուերը , իրից փոխը , ժամնարը ու մի քանի էլ ուրիշ մօտիկ բարեկամներ էկան նընջեցելատիրոնջ տունը , պաշտումահաց (սուրբ սեղան) կերան , մի քիչ միխիթարեցին օղուշազներին ու ցրուցին . ժամնարն էլ մի ջուխտ մում տարաւ , որ քշերս պատարադիչ տէրտէլը սարդոս պափքարէր , ննջեցելատիրոնջ միմյը պափ վառէր , որ սաղմոսը նրա հոգու փրկութիւնի համար ընի , թէ չէ ով մումը կըտայ , նշխարքի ամիսն ու բաժակացուն կըտայ , էն պատարադը նրա ննջեցելոց հոգուն կէրթայ :

Առաւունեան ժամից յետոյ ժամնարը զնաց նշխարքի համար ալիսրն ու բաժակացուն բերուց ու հենց նշխարքը թխուեց , պատարադի ժամը տուխն , նրը որ պատարադը հասաւ տէր ողորմիայի վախտը , ժամնարը զնաց ննջեցելատիրոնջ տունը , իմաց տուուց , որ դան վերջին բարովը տան իրանց մեռլին , Մին էլ ինչ սեսնիս . մեռալատիրոնջ բարեկամ մարդիկը տղէքանցը յառաջ քցած՝ լաց ընկելով՝ լցուեցին ժամ գտակները զլիսներին . էկան նաշի կշոփն հաւաքուեցին , ընկան նաշի վրայ ու մի քիչ լաց ըլնելուց յետոյ իրանք յետ քաշուեցին , տղէքանցը թողացին իրանց սրտի փափաքն առնելու . տղէքը զլիները ժամ տաղով , ափու ջան , ձէն տուխն , մեղ ընչի ձեռներս ծոցներու-

մըս թողիր . էլ ով պափ մեզ խրատի , էլ ում ափու պափ ձէն տամնք , Դրանք գեռ լաց էին ընում , որ կնանիքը չարսաւները էրկու տակ զիմներն քցած , ննջեցէրի կնմոյ ու աղջկերանց կուռն ընկած՝ լըշուեցին ժամ . էնքան երեսները չահպոթորելին , որ արին լուէք էր էլած , էլ սաղ տեղ չի կար . Էլան , թափուեցին նաշի վրայ . կնիւանն ու աղջկերանցն էլ նստացրին զլխալիրել . դու արի ու հիմի մտիկ տուր . ապառած քար ընէր , լաց կընէր , թէ որ էս տղալի բանը տեսնէր . ձեռները որ տանում չեն , բերում ու զլմներին տալի՛ մարդի սկրտ կարառուում ա . կնիկը որ Արշակ ջան , չի ձէն տալի , ինձ ընչի տղէքանց տւմուտի ևս թողում , մարդի մազեր բիղ բիղ ա ընում . աղջկեքը որ նաշը խառում չեն ու ափու ջան , զռոռում բարակ ձէնով , մեզ ընչի եթիմ (որք) թողացիր , մարդի զլմի կրակ ա վառուում . որանք լաց են ընում , թուրքավար բայաթի տառմ մլկտալով , մեկել կնանիքն էլ վերջումը մխատեղ ո՞ն , ո՞ն անձլով ձէն են քաշում ու մզկտում . էնքան լաց էլան , որ ձէնսերը կտրուեց . պատարադի ձէնը էլ բուռմ չեր . մարդիկը մօտեն զնում ու կոնկրիցը լունում յնտ քաշում . նրանք աւելի են զուգուում . Պատարագը որ վերջացաւ , ժամարարը վեր էլաւ , հառաքուեցին մեռլի զլխալիրին ու ամրիծ քը ասեցին . տէրտերը վարչամակը խաչածն կարեց , մի նշխարք մի քիչ խունկ էլ հեաը տուուց կնանոնցը , որ խոնկն ու նշխարքը դնեն նընջեցեալքի երեխին ու կարեն . Գանձը որ ասեցին արծան , մարդիկը էլան նաշը վեր կալան ու տէրտերների քամակիցը առան դնացին զերեզմանատունը . ժամարարն էլ զդիստը հանեց , էլաւ ժամի դրանը կընանոնց համար հոգւոց ասեց , միմիթարք խօսաց ու դնաց ննջեցելքին հասաւ . Հինց որ ննջեցելքը թաղեցին , նասնեցին էն չոլ տեղը հացի . Քարերի վրայ վուած էր լոշ հացը . էրկու մարդին մինը . վրէն դրած էր էրկու կտոր խաշամայ , մի քիչ աղ , մի քիչ էլ տաղի (կանանչի) . Ամէն մարդ մի երկու թիքայ հաց կերտու ու երեք թաս դին՛ խմեց , սղորմի տուուց նոր ննջեցելքին աէրտէրներիցը բռնած՝ ընչանք յետին աղքատը . յետոյ վեր կացան հայն օրնեցին , միսիթարք խօսացին բարեկամներին ու զնացին դպան ննջեցելատիրոնջ տունը . Հն տեղի աւելացած հացիցը մի երկու հատ մամր կոտորեցին զուրդ ու զիյ վաղի համար , որ նրանց կերածն էլ խէրա ա , մնացողը ժամհարը հաւաքեց տարատ իրա տունը . խալխոր զերեղմաններիցը վեր էլան , դնացին ննջեցելատիրոնջ տունը հոգւոց ասին ու ամէն մարդ ցրուեցին իրանց տըները . համա տէրտերներն ու մի քանի բարեկամներ մտան նեքան հոց

ուստիլու ։

Երկիրուայ ժամը որ տուն , տէրտէրն ու բարեկամ մարդիկը զնացին Արշակի տղէքանցն ու վիսիքանցը բերին ժամ , վերջումը մի հոգուց ասին ու մակիթարանք խօսացին . ննջեցելատիրոնչ տանիցն էլ աթարի վրայ կրակ դրին ժամից յետոյ ու տարան գերեզմանի վրայ դրին , որ ջանաւար չի դիպի ։

Ժ.Դ. ·

Էս էկող շաբաթ օրը մեր Սուրբ Գրիգոր պատի խոր վիրապիցը դուս գալու օրն էր . նրա էքսի օրը Փարոպի պիտի էրթային ուխտ . Սօս սը վաղ է վաղ զնաց Վարդիթերենց հարևանի հարսի կռչառը , որ իրա քեռակինն էր , ինացաւ նրանից , որ Վարդիթերենք էլ պըտի զնան Փարոպի , Յեա դառաւ . ախալ թափալ Գարենիցն ասեց , թէ ձիանը հազիր եմ արել , որ էքուց ծէքը քցելուս ուներս դնենք օրդանգուին ու դուս Փարոպի : — Ոէ , անեց Գարեգինը , Փարոպի զնալը մեր ինչ բանն ա , թուզ կնանիքը էրթան . մնեք մի խօսիւթ՝ օր կերթանք քէփ կանմնք ընտեղ , — Էս անապատճառ . որպէս էրթամ , խօսքը կարեց Սօս սը . մէկէլ օրը Տանատի երիխին կատաղած շունը կծել էր , փաթաթիթիցին զլուխը կմը (ոլորած խոռ) Փարոպի տարան . շունը բեղափիլ դպայ ինձ վաղեց փրփուրը շաղ տալու . դամէս հանեցի , հենց տուի որ մէջ տեղիցը էրկու կտոր էւաւ . կարեցի , կէսը դէսը քցեցի , կէսը զէնը ու միջովն անց կացոյ . հմի մի քիչ նիդարան (երկմիտ) եմ , անկարելի ա որ չերթամ . ես հենց մին օր պիտի էրթայի , մեռնիմ նրա սուրբ զօրութիւնին , էքուց հօ նրա ուխտն ա . Հոյ—քրիստոնէն ուխտից կփախչի : — Լաւ , անեց Գարեգինը , որ ըալնց ա , դնան մեր Պահաւունոյն , մին էլ Վարդանին (ընկեր տղայք են) խմաց արմ , որ էքուց նրանք էլ ձիանը թամքեն , միզ հետ գան . ընչունքի էրթում ենք մի լու . ուրախութիւն էլ ա անենք : Ոէ բաս մնաս բարին , անեց Սօս սը , ես էրթամ ամէն բանք պատրաստեմ , դու առաւօտենց թէզ վեր կաց :

Կիրակի առաւօտենց լիսը որ բացուեց , էլ յետ կնանիքը դարդարուեցին , չարսաները քցեցին զլմներին , երիխէքն առաջ արին , հարս ու աղջկերանցն էլ քամակներին քցեցին , պաշարի դաստախունը , որտնք ջանել տղէք ունեին , կապեցին նրանց շալակը , որտնք չէ , քցեցին ձիու վրայ ու մի երեխայ միջտեղը նստացրին , եա թէ չէ . աղջկերանց կըռ նաստակը դրին ու դպայ Փարոպու ճամփին , գեղի ամէն մի քոչիցը եր-

կու երեք թօրուն ա դուս գալի . երեխսամէրերն ել խոտած իրանց քօրիէքամնցը առաջ են ընկել . հէնցն ել կայ , որ համ ծծին երեխայ ունի , համ ինքն ել երկու հոգին ա , համաւ նրա հէջ վէճը չի . հէնց ա զնում ծիծն երեխի բերանը դրած՝ որ կանես ձեռին բան չընի . կաքաւը քեզ օրինակ . մի քանին ել բորիկ ևն զնում , որ մորակները կատարի Սուրբ Գրիգորը . առնեք հիմի առաւոտեան հովին ա ելի ինքան դժմր չի , համաւ մի կէս սահաթից յիսոյ արմի թէժոթիւնիցը դեմնի առաղը հէնց կըստաքանայ , որ միջն ձռ թաղին կէվի . համաւ մեր սթիսով ըխտաւորները դարդ չեն անում , թէ ուները արել կէրի . նըրանք իրանց կուսաւորիչ Պապի խաթեր հէնց խմանում են , թէ չաշիր չխմանումն են ման գալի ու սէր անում . թէ որ իրանց ել ասես , թէ ունելիդ մնդք չես գալի , առաղի միջն խորովում ես , նա կասի . մեռնիմ մեր Սուրբ Կուսաւորիչ սրապի լիս գերեզմանին . նա մնդ համար 15 տարի խոր վիրապումը օձերի ու ճիճուցների միջն , են նամ անդը ծում ա պահել , 12 չարչարանք ա քաշել , մեզ դժոխքիցը դրախան ա հանել , մնդ լիս հաւատ ա տուել , Հայ—քրիստոնեայ ա շնուր . հիմի շատ բան ա , որ ես մի օր նրա անումի խաթեր համար բորիկ ուսով էրթամ նրա դուռը ուխտ :

Համիտու ընկան մեր ըխտասէր Կուսաւորչու դառները դպա Փարուի իրար հետ զրից առաջով , Սուրբ Գրիգորի հրաշքները սպասմելով , կատաղածների վրայ խօսալով , թէ բնչպէս անխօսալ դպալս են նրա դուռը ու փրկուում (*) . Ազապ տոլէքն ել իրանց թայ ու թուշերի հետ խաղ կանչելով , վառ վառ ծիծադրալով , ըստուր ընստոր աղջկայ վրա խօսալով , մընին գովելով , մէկնելին մասխարայ քցելով , ես թէ չէ իրանց յիքանոնց մասիլի վրայ մտղահաթ անելով , զնումն են առաջ առաջ . Սեր Սոսն ու Գարեգինը իրանց երկու ընկերների հետ դեռ չեն երևում . նրանք ուրիշ բանի են մնում . նրանց համար զնալը մի դժմր բան չի , ծիանոնցը երկու հետ կրնկնեն , հերիք ա . նրանց ծիանը թամքած՝ գետմը զլիներին կանոնած են . Հէնց որ մեր բլրուկ Սուի վարդը բացուեց , Քարհանքի դպիցը առաւոտեան քամու հետ իր անուշ հոտը

(*) Փարոպիտումը մի եկեղեցի կայ , ի հնուց շինեալ Սուրբ Գրիգոր Կուսաւորի անուսամբ , այժմ առաստաղը քակուած է և փայտով հասարակ ձևով ծածկած . այս եկեղեցիս որքան կատարած շամից վնասուած մարդ դլուխը կեր փաթաթած անխօսի դայ , Եկեղեցու զինովը և օմն անգում պատիս դայ , կըդիրկուի անսրածառ : Հայաստանումը կատարած շամից վ իրաւուածի դեղի այս է . հինգ վեց առուր համապարհից կըդան :

զիապրուտց մեր Աօսի քնթին, մեր տղեքը մի մին փունջ վարդ ձեռներին բռնած, ձիանոնց քամակն ընկան, գեղիցը մի քիչ հեռացան, զտակները քյել կալնելով, մուսամիքագ ամելով գտարնանքի դղումը նրանց առաջին ամէնքը մի քանի զլուխ ձի քշեցին . Աօը հօ ձին աստղերի հետ խաղացնում ա, թօղ ու դումանը բռնացրել ա . սաղ ըխտաւորի ուշ ու միաքը իրա վրայ ա դարձրել : — Եթի սրանցից արծանք ոչ, զըշուխը պատելով, ասեց Վարդիթերի մէրը իրա հետի կնանոցը՝ ճամփէն յառաջ գնալով . որանք մեր քամակիցն են մանգալի, քա խիզան, էս Ասու լրաւոնք ա, ինչ անում ենք, չենք անում, մնդնից ձեռը չի վերցնում . ախ ծակծակած ակոսուած, սե սրտի աղջիկ, (Վարդիթերին է ասում) ինչ անում, խստարէր էն օրը, որ զու լիս ընկար, էն քշերը հերդ ջաղացն էր դնացել ինչ կը լինէր . մնդ աշխարհքի միջին զու թուք ու բէղնամ արիր : — Քա ընչի ես էս բարի լիի ստացին, սուրբ ըխտի ճամփէն բնիրանդ վիա բաց անում . համ ջահել աղերք են, ինչ ես ուզում՝ թող քէֆ անհն . զու նրանց ինչ ես անկրոջ անում, դնամիշ անկով, սախն մէկէէլ կնանփըր : — Ա՛խ, սրտիս տախտակն են դաղիլ, ասեց պատաւը, չէք խմանում . էս մեր փչացածի արածն ա քօմնա, նրանցում ինչ զիւնահ կայ . խաչն խմն ա, քեարամաթը (զօրութիւնը) ես զիտեմ : Խեզ Վարդիթերը լուսմ ա մօր կծու կծու խօսքերը . մին ուզում ա, որ լուց ընի, մին էլ աչքի առչովը որ մարկ չի տալի էն սիազտակ ձիաւորին, հնոց խմանում ա, թէ մօր ասածը քամին տարաւ : Մեր աղեքը էս զդումը ձի խսալուց յետոյ էս ուրախութիւնովը էկան դրանցից յառաջ ընկան : — Աօս ջան, ասեց Գարեղինը բարձր ձինով, ինձ սիրում ես : — Ա՛խ, ասեց էդ ինչ խօսք ա, աշխարհքուն մին զու ինձ համար, մին էլ ով որ ես ու զուն զիտենք . մնացողին էլ Աստուած տաղ պահի իրանց համար . Աստուած տաղ պահի ամէն մարդի էլ, նրանց ուստաղիցը (ի պատիւ նոցա) քեղ, նրան ու ինձ . ամէն աղեք ջան, ձեզ դուրրան ընկամ, ասեցէք ամէն, Ամէն . ձէն ոտոին չորսովի էլ, Սուրբ Կրիպորն ու Թարզմանիը (1) տան ամէն մարդի մուրաղ էլ, մեր հնզին էլ, որ չորս ձիով ենք, մինս ոտով : Ամէն, քեղ մատաղ Սօս ջան, ձէն տուուց Գարեղինը . էրնէլ կը լինի էն օրը, որ պլազուը կտիսմի վարդին բաց էլած ու նրա վրայ վիր կը դայ, հոտ կը քաշի նրանցից . էրնէլ էն օրը կը լինի, որ աչքներս յետնոց չի

(1) Փարզիումը կայ մի աւերակ վուքր մասուռ, որ թարդմանիշ են ստում . կարծիքաւոր է, թէ արդեօք այս թարդմանիշը Ղազար Փարպեցին, թէ ով արտինի . ցանկալի էր մեզ սորա ուղղեկութիւնը խմանուը :

ըլնիլ , բաց ասեմ , ոչ ամաչեմ . էրնէկ է՞ օրը կըլիի , որ ամէնքս
էլ մէր սրտի մուրալն առած կըլնինք , աչքներս խալիսի դրանը չի
ըլնիլ : Ամէն , զոռացին տղէքը միաբերան : Սօս ջան , քեզ մատաղ .
մի էն մուխամբազն ասա , ասեց Գարեգինը . վաղուց ա , որ չեմ լը-
սել . մի վախենալ , թէ խօսքդ շաքարով կոտրող չի ըլնիլ . և էլ պա-
տասխանէն նրա տեղակ քեզ կտամ . պլազուլը , որ իրա համար քա-
րափների զլիսին , ծառերի վրայ վարդի սիրովը կըծլվացնի , աշխարհ-
քում ինչքան խօսող դշեր կան , կըդան նրան զլուխ կտան ու նրա
ձէնը հեռուիցը կըպահնեն , կամ թէ չէ նրա եղանակները կըսարսին . հի-
մի էն օրն ա , որ մեր պլազուլը վարդի կոկոմը տեսել ա , չորս դի՞ք
փարզվազ փարզվազ ա անում , պատի որ բնչ հունար ունենայ , պահի ոչ .
էլ , ալամ զիտի , որ մեր պլազուլն էլ դու ևս . թէ վարդը լիուռ չունի ,
որ քեզ բաց անի իր սրտի սրոք , համա վարդի քաղաքն էլ ա նրա
բերնիցը մի քանի խօսք կունենայ , որ ասի . Սօսը բողադն խալեց
ու մեր կալաւ դաշտ ու չօլեր զողդողացնելով էս մուխամբազը , որ ի-
րա ու վարդիթերի բերնիցը շինել էր . վարդիթերի տեղակ էլ Գարե-
զինն էր պատասխան տպլի :

Բան ևմ ասում , անկաջ դի՞ր , անկաջիդ մատաղ Վարդիթեր .

Ինձ մի քցի չօլերը , կրակիլ սաղ սաղ Վարդիթեր .

Հանգիստ ու դադար չունիմ , դառել ևմ սարսաղ Վարդիթեր .

Աստուած սիրես խնայիր , թող մնամ խաղաղ Վարդիթեր .

Գարեղինը վեր կալաւ Վարդիթերի բերնիցը :

Հրամայիր , որ լսեմ , զու ինձ համար վարդ Սօսի ջան .

Պատրաստ եմ ես կստարել ամէն հրամանը Սօսի ջան .

Թէկուղ սաղ աշխարհն ինձ ասի վաստաբաղդ Սօսի ջան ,

Զեմ թողակ քու սրտումդ մի կորիկ չափ դաղ Սօսի ջան .

Ս Օ Ս Ը

Աղջի , երբ որ քեզ տեսայ , թռաւ երեսիս դոյնը ,

թէ արենդ կոփրես , մի կորիկ իմ անուշ քունը .

Տուած խօսքդ պինդ պահիր , որ հաստատուի սրտիս սիւնը ,

Սէրիկ կապը նորույի , իմ ուսկի վարաղ Վարդիթեր .

Գ Ա Բ Ե Գ Ի Ն Ը

Ինձ պէս հասարակ աղջիկը , որ հող ևմ քու սափ տակին ,

Խճապէս կարամ քունդ կտրիկ , որ զերի ևմ քու պատկերքին .

Իր խօսքիցը յեա , դառնողն արժանի ա թէժ կրակին ,

Սէրիկ կրակը նոր ա ու նոր , էրուած ոլ տիւ շաղ Սօսի ջան ,

Ս Օ Ս Ը.

Ուզում եմ քեզ մէկ զովիկ , վախում եմ էդ լոմ բանը չի ,
թէ արեգակ կասեմ , կասմն նրա նմանը չի .
Արեգակը աչք ծակող է , էդ սրա նշանը չի ,
Բաս լուսնիակ ես կէս ամսուան , իմ լիս ու շաւաղ վարդիթեր :

ԳԱՐԵԳԻՆՅԱԼ.

Գովաստանքը դարդակ բան է , սէրն ամէնիցն է զովելի .
Արեգակ , լուսնիակ ատելով ոչինչ օպուտ չէ դուռ գալի .
Թէ զովելու ջանն ես ուզում , քեզ պէս էլ որ մինը կըլի .
Համ քաղցրաձայն , համ պարզամիտ , համ կարիչ դօչաղ Սօսի ջան :

Ս Օ Ս Ը.

Լուսնիակն էլ կըխաւարի , դու միշտ պայծառ ես հողի ջան ,
Եազուգ , արմասան էլ կըփչուին , քեար ի՞ անդի քեզ ոչինչ բան .
Վարդն էլ կթոռումի , ամէն ծաղիկ կըսալարին ,
Բայց իմ սրտին անթառամ ես , իմ բարձայ ու բար վարդիթեր :

ԳԱՐԵԳԻՆՅԱԼ.

Աշխարհիս ամէն բանը մին օր մի վախճան կունենայ ,
Մին լաւութիւն , մին հալալ սէրն է , օր յախտեան կըմնայ .
Ես էլ շուտով կըվերջանամ , թէ մորազս կիսատ մնայ ,
Մուրազս կիսատ թողողը շուտ մանի դագաղ Սօսի ջան :

Ս Օ Ս Ը.

Սօսն եմ , սիրովդ տոշորուած , սաղ քշեր անքուն եմ մնում ,
Վայրենու պէս տուն չեմ տեմում , յէր ու քարափ ինձ բուն շնուռմ .
Ով երկուսի վայիս դառնայ , Հախ Աստիք եմ խողում ,
Մուրազով սրտով մնուի , ամէն ասան ախ վարդիթեր :

ԳԱՐԵԳԻՆՅԱԼ.

Աիրոյդ տեղակ սէր եմ տուել , էլ ինձանում հայ չի մնաց ,
Դու վայրենին ես ճիրքի տէր , մեզ ուրախանալ չի մնաց .
Ջան ջանի տալուց սաւահի ոչինչ բան յուսալ չի մնաց ,
Վարդիթերի յոյսն է Աստուած , մէկից չունի վախ Սօսի ջան .

Ես մուխամբազը հէնց կրակ քցեց վարդիթերի սիրաը , որ թէ էն-
քան խալիս չին էիլ , էլ մօրը չի պափ անկաչ անէր , պափ վաղեր ու
ընկնէր նրանց գիրկը . համա նրա մօրը հէնց դաղ դառաւ էս խալը ,

որ քիչ մնաց լաց ընի , — ջեսէք , ասեց հետի կնանոնցը . Բնչքան անսահօթ են , որ խմ աղջկայ քերնիցն էլ են խաղ շնել . բաս դրանք ինձ վայ տան , թէ ես դրանց աղջիկ տամ . ջուրը կըքցեմ , մեր ալրի ջուպին թայ կշինեմ ու դրան չեմ տալ . Ես հօ միտքս փոխել եմ խեղճ դալ դրան , համա ըստուց յիտոյ , թէ տանի , ուարծենայ : Խեղճ Վարդիթերը զլուխը քաշ ա քցել , հէրը նոր մեռած մարդի նման , Ալսում ա էդ կծու կծու խօսքերը ու մօր քստմկիցը գնալով , աչքերիցը զլուր զլուր վէր ածում : Վարդոյինը , որ բանը շուտ . հհամկանայ , մի քիչ հեռու հեռու ման էկաւ կնանոնցիցը ու աչքի պոչովը մտիկ տուուց , տհասաւ , որ Վարդիթերի մօր աչքերը դառել ա կաստագած զիլի աչքեր . մեր տղէք , ամեց , քէք . մի քիչ հեռանանք , թէ չէ բանն ուրիշ թաւուր ա . էն խեղճ երեխէն մեռաւ լալով . երմում ա , որ մէրը ժանզը վէր ա ածում :

— Տօ , յառաջ քչելով ասում ա Վարդանը Սօսին . թէ Աստուած ոչ անի , ընդմիցս դուս զայ քամին տանի , էսու որ տուին ոչ , Բնչ պտի անես . ընչի համար ես քեզ կրակ քցում , անզալ զլուխոյ զարմաղալի տակ դնում . էքուց օրը կդայ . Աստծու բարին էլ հետը , ում համար որ ճակատիդ զրուած ա , էն քեզ զամոթ կըլնի . — Քեզ բան չկայ , էն դհցը տանց Գարեդինը , ամէն մարդ իր տեղը իր համար ծանր կենայ . Էս թաւուր բաներիցը ձեր խելքը դուս չի զալ . ես դիսեմ :

Աստուած տայ , Աստուած տայ , չուզողի աչքը տրաքի , ձէն տուին մէկէները , ինչ որ Գարեգնի որտումը կայ , Աստուած ինքը կատարի :

Մէր տղէքը ջահել աղջկեքանց վրայ զրից անելով , ձի խաղալով , համան քարպի , Առոր Գրիգորի բակումը վէր էկան , ձիսը քաշեցն կշախ բաղէն ու իրանք մտան ժամը . Ըխտառը արտասունքն աչքերին վանքի չորս կողմովը պախոտ են դայիս ոտարորիկ . կատաղած շահ կծած մարդիկն էլ զլիները կեմ փոթաթած՝ օխտը հետ պտտուում են վանքի զլսումը անխօս . Վանքի զրտնը կեմը վէր քըցում ու մտնում ժամ գերեզմանի առաջին երեսները զիտինը քսում , արտասունք թափում ու մեր Առոր Գրիգոր պապի ձեռն առ . Աստուած բռնելովք՝ էն սհաթը փրկուում իրանց վիտ ցախցը , Ընչունքի , դորի ա , տարուան ամէն վախտն էլ պատահում ա չների կատաղութիւնը , համա ամենից աւելի էս շարթին ա ընում , որ ամէնի աչքի առաջին Առոր Գրիգորի զօրութիւնը երևայ . Հնոց մարդ բլնում ա , որ երկու շաբաթուան համփուց , զլուխը կեմ փոթաթած՝ զալիս ա լուռ ու

մունջ (*) մաստազնէլ հմտը բերում ու փրկութիւն դանում : Շատ մարդ զիկ էլ գոմէշ , եղը , ձի , կով յառաջ արած զլուխը կեմ փաթաթած բերում են , վաճքի զլխովը պախտ տալի ու յևտ տանում սաղացած : Հիմի էտօր հարիւր կեմ աւելի կընի ածած Սուրբ Գրիգորի դրան առաջին :

Մեր տղէքը ուխաները որ արին պրծան , զնացին բաղչի միջին նըստեցին . ձուկը կալուղ էին դրկել յառաջուց ձորը , նա էլ բերուց էն սըհամթը կարմրախէտները կանանչ խոտի վրայ կիտեց . կրակը վառեցին , ձիները վրէն շարեցին ու զինու զաւը կողքներին դրած՝ ընչանք իւրիկուայ հովն ընկնիւը կերան , խմեցին , ճէնց քէֆի միջի էմն , որ խանը չէր ունենալ . որ յիքումն ասես Փարագի , որ էսօր ուրախութիւն չի ընուի . որ թմբերի ու ծառերի տակին ասես , որ Հայի աղջիկ չընի :

Իրիկնապահ որ թեքուեց , վեր կացան էս քէֆիցը գնացին թարգմանչի գերեղմանը , որ դարդուսի քարափի զլխին էր . ուխտ արին , ծառերի տակին նստեցին ու աղջկերանց մակլ տաղով՝ նրանց վրայ խօսքեր քցեցին . Վարդիթերը իր մօր հրամանովը հարսների հետ էկատ համբրելու . Սառը որ տեսաւ , մին էլ նրանից յառաջ ընկած՝ զընաց կնանոնց արանքը ճղեց ու թարգմանիչը համբուրեց . յետ դառնալուս կամաց Վարդիթերի փէշերքը տրորեց . Էսքան կնիկ ու աղջիկ էին հաւաքուած , ոչով չխացաւ , թէ մէջ տնօր բնչ անց կացաւ . մէնակ երկու սիրտ ջանով իրարից ջոկ , սրտով միասին բնակուած , հասկացան իրարու ու ուխտները հաստատեցին անխօս , որ իրար հետ մեռնին :

Իրիկուան բարակ քամին մի հովութիւն քցեց աշխարհքի մէջը , ըխտաւորները որը ուրէշ հեռու զեղլոց էին , վաղուց էին զնացել . մնացողներն էլ հաւաքեցին իրանց պաշարների դարսակ դաստախունները ու ճամփու ընկան կոտր ընկած դոնչունի պէս , որը դպա Աշտարակ , որը դպա Կարրի ու Մողնի :

(*) Լուս զայռ պատճառը ոչ ոք հաւաստի չէ իմանում , այլ հաւանական է , թէ լուս են բերում , որ մարդու հետ չխօսի և նրան էլ չմերձենայ ու նա ևս շնչառածի . իսկ կեմն նորա համար , որ ամէնքն էլ իմանան թէ կաստղած է :

ԺԵ ·

Երսի օրը երկուշաբթի առաւօտենյ խոտհնձի սրան ա . աշխատա-
ւոր չեթում հալլորը աեղիցը վեր ա կացել , երևը առուումը լուս-
ցել կաննել ու կնդայ վրա թանժօրում : Ես ուր են մեր մանդպաղները ,
խարսը , մենք էլ տուն ենք էլի . ձեր տունն Աստուած շնի , շատ
մարդ , որ քոմակ էլ չունի , մէնսակ մէկ հոգի ա , հենց տուն ա պա-
հում , որ պօստօքի միջի պէս . իրեք չորս յիշի էլ որ ունենայ , հենց
կըրեջարի , (մշակել) որ մարդի քէփ կըդայ նրա յիքանոնյ մասներն
մարիկ ասպով : Ասում են մեր հարեան Սամրքն ազահ մարդ ա , հինդ
յիշի ունի , ինքն ա իր չոր զլուխը , մի նոքար էլ չի բռնում , դեղի
առաջին համբեն ա . ես իմ Աստուածը հալալ ընի նրան իրա ճակա-
տի քրտինքը . երկ օր ա , որ խոտ հնձուոր ունի , նրանք հնձում են ,
ինքն էլ ապլուխը զլուխը կապած էն արեի աակին նրանց քամակիցը
բարդ բարդ ա քցում , որ չորանայ ու խորուուի . մասուքը էշը նիկնիզը
չի , իշիցը վէր գալն առ . խօսքը վեց տղայ տէր ընիկը չի , խօսքը Սամբե-
րէի պէս մուկք բէջարին ա . ասում են , թէ Սուրբակը կրծան մարդ
ա , միս չի առնում , թէ որ միս եմ ուտում տառում ա , առամներիս
տակին ա մնում , հիւանդամնում եմ . ես իմ Աստուածը շատ լաւ նա
ա մնում . Աստուած դրուստ նրա պրատեն էլ իրան տուել ա . վառք
Աստուծոյ , աղէքն ունի , հիմի նրա յիքանոնյ խոտերը հնձուած պըր-
ծած կընին , մի ծեղ չի մնացած ընիկ , գարունք իրացորի նրան ու
իրա տղէքանցը էլ զնջում դադար չի ընիկ . մրջմի քարվանի պէս հա
կում են միալար ընչանք իրիկուն . հիմի նրա տարեկան ցախը բերած
կընի , իհարկ է իրանց յիքանոնցիցը մի չոփ չի ընիկ , որ մարդ աչ-
քը կովի . համա որտեղից որ ա , մարդի գուռ ու տունը լիքն ա .
կերածն էլ , որ հարցնես , մի քիչ չոր ցամաք հաց ա զարի խառնած .
թէ Աստուած ոչ անի թանգութին տարի ընի հօ , էլ ցորնի անում
նրա տանը չես լիկ . պտի ասած , որ մարդ իրա երեխանցը պտի ըտենց
պահի , որ խելքները զլիները զամն . նրա երեխէքը , որ թունդիրն
ածես երես , շորահոտ չի գալ վըներիցը , մենք դժշ նման աշխատում
ենք չորերիս ու փորերիս անում . նրա տղէքանց զիկին , քանի խելք-
ներին հասել են , մի գտակ ա էլել . համա իմ տղէքը տարին մինը փո-
խում են , էլ չեն չնորհակալ . որ ոնց որ ուտիլ հայնի են ուղում ,
ընէնց էլ աշխատեն , ով զարդ կանի . համա բանն էս ա , որ

ուսելու դոչազ ևն , անելու քոռ . օրն էկել ա ճաշ դառել , գեռ քը-
նած ևն , օխտը հետ անկաջներումը զուռնայ ևս ածում , նոր ևն զարթ-
նում , Հալալ ա հացը Սահակի տղեքանցը . երեք աղպեր ևն , բա-
ռուում ևն , լաւ խմում ևն , աշխարհքիա վայելչութիւնները անում ևն ,
իրանց բանն էլ չեն թողնում , որ գետնին մնայ . նոր , որ գուս էրայ և-
րեսս լուսնալու , Ասո՞ր որ ամէն օր մեր աղջկայ համար նոր նոր փոր-
ձանքների ա հանդիպում , մի սուր մանդաղ մէջքը խրած , որ լէսու-
թիւնը մի թիզ կըներ , մի հնձի շաղվար կոնստանին դնում էր յիքին .
ևս էն թաւուր տղի ջանին զուրբան , ամէն բան էլ զիստ . խաղ կան-
չի , քէֆ անիլ , մարդամէջ մանիլ , հընկերի սիրտը շահիլ , խնդաշնիլ ,
դօչազոթիւն անիլ , կոխ պրծնիլ , իր թայերին գետնովլը տալ , կըս-
ուիլ , էլ յետ բարիշիլ . ինչ ասես , որ չանի , իրա բանու գործին ա-
րի կենալ . ևս խմ աղջկել նրան պատ տամ , որ հարիր տարի կենաս ,
որ ճգնիս . էրէկ ձի ա խաղացել , խաղ կանչել , աղջկանդ անումը ար-
ևլ , գանդաս ևս անում . հողը զիստ կատարիդ , քէֆի օր էր , ընէնց
կանէր , մի տես էսօր ինչ ա անում է . նոր անց կացաւ , գնա մի նը-
րանց յիքին տես , հմիմի շորերը հանած շապկանց , խոտէ գտակը զըլ-
խին ութ թումբը հնձել կընի . ևս հօ տեսել չեմ , ասում ևն , թէ ը-
նէնց խատակ ա հնձում , որ եղը վեր ածես , վեր կընանուի , կորէկ շադ
տաս , կըկիսուի մի մին . ինձ վեց տղայ ունիմ , թէ հնձում էլ ևն .
կէսը շադ ևն տալի ու վրէն թողում , ևս խմ տղեքանցովն ինչ որա-
խանամ . տղամարդը էս վախտ քնած կընի , ևս հմի Մամբրէին էր-
նէկ չի տամ , Աստըծուն էլ դժար չի թուի . որ մէնակ ընէկ , հմի
ևս բանից պրծել էի . ստով , դորթով , դաքով , տօլապով հօրայ կըսա-
նէի . Այ կնիմ , ուր ա մեր մանդաղները , խարսը , խոտննձի շալմա-
րը , բեր ևս հաքնիմ էրթամ էս հալլսոր տեղովս հնձեմ , թող զրանք
երկար ու բարակ մէկնովն .

— Քա քամնի քշերհանայ բարիլսի դէմ բերանդ բաց արած՝ ժանդդ
վեր ածես այ տնաշնի մարդ . ինչ էլաւ քեզ , դեռ լիսը նոր ա բաց-
ումլ , դեռ խոտննձի պասը էսօր ևնք մաել . հա ընչանք դրուտ հուն-
ձը մի շաբաթ էլ ունինք , ինչ էլաւ , հօ չորացաւ ոչ : — Ասու կաց ,
բարկանալով ասեց Հեթումը , դու էլ ըանց ևս ասում , որ ևս բերա-
նըս բանամ ոչ . հողը հօրդ զլսին , յիքանիքն էլ առաջուանն ևն , ծի-
րանիքը առաջ հմիկուանից շատ էին , դու մէնակ համ թափ էիր տա-
լի , համ թօփ անում , համ ուսում , տանում չնդներումը փառմ , համ
էլ չիրը հաւաքում , տուն բերում . հմի իրեք հարան ունիս մի աղջկե

Էլ հետը , էս տարի մեր ծիրանները ծառերի տակին հոտեցին , խաշի դառան , կեսուէ կէս էլաւ , եաղին տարաւ , կիտող չէլաւ . դու մի կը-նվիկ էիր , համ տանն էիր մտիկ անում , համ յիքանոնցը . տես քու հարանիրին , թէ մինին յիքի ևս զրկում , մինն ա խռովում , թէ ևս տա-նը մնացի . թէ մէկւլին տանն ես թռում , մինն ա նօթերը կիտում , թէ ևս յիքին զնացի . ուր ա մեր հալալ քրախնք թափերով , աշխա-տանքով ուտելու օրը . հիմի հրա մի քիչ վրեդ հալ կայ , էլի պատիւ-ոնիս , քիչ ու միչ խօսքիդ անկաջ են անում , հարար խօսքիցդ մինը սկարանի են դնում . դու կաց պառատիս , տես ոնց են զիսիդ տալի աչքը հանում , բերնիկ էլ մտիկ չի անում , տեսնում ես , որ ես երկու խօսում եմ , ասում են հայիսորեկ ես խելքդ յետ ա տուել . էլի քու կրներունդ զօրութիւն կայ՝ մի քիչ ժմտում ես . տղեքդ հօ մարդասեղ չեն քցում քեզ , դու էլի նրանց թափան ես քաշում : Խմ մէրը հա-րիր տարեկան պառաւ էր , ես նրա առաջին չէի կարող բերանս ժաժ տալ . հարմների սասոր հօ , գեռ նրա անկաջը չէր ընկել . վառք Աս-տուծոյ , մինն էլ դու էիր , տեսար . հիմի տեսնում ես , մի բան ա-սելուս հարսդ քեղնից բարձր ա զոռում , որ դու տակիդ չորանում ես , թէ հիմի կըտայ աչքս կըհանի . դու թռն զլուխոդ նիշնեն . մարդ էլ որ խօսայ , բերնին արի : — Ի՞նչ անենք այ մարդ , զլուխոը սերացնե-լով ասեց պառաւը , ուուշգեարն (ժամանակ) ա քռացել , մեր քռո-րազիցն ա . մեր վախտը աղջիկը քսան տարեկան կըհնէր , աղջն քը-ռանուհինդ , դեռ աշխարհքից խարար չէին ընում . իմ միտս ա , որ ես հասած կա-տարած աղջիկ էի , մեր յիքու հարեանի հետ , որ քու վահան տղիցը մենծ էր , մի տեղ նստում էինք , խաղ անում , յիքին պահում , շատ անդամ էլ յիքու ափումը իրար հետ թեք էինք ընկնում ճիտ արած քնում , ոնց որ երկու տարեկան երեխէք քիր ու ազաօր պէս . տես-նում ես համի ըսէնց բան . գեռ քու աղջիկը ի՞նչ տեղն ա հասել , որ տղայ ա սիրել , նրա սիրու գարզիցը միսը հալուել , ուկոտն ա միա-ցել վրէն . հինգ տարեկան աղջկայ որ հարցնում ես , թէ մենծանաս , ի՞նչ պափ անես , ասում ա , մարդ պափ առնեմ , երեխայ բերեմ . մեր վախտին հարսանիք էլ էինք ընում , բան չէինք հասկանում , սաքի ի՞նչ մնաղաղրեմ նրանց . մենք հաւ ողորմութիւն ենք , որ էս վախտին ենք ուստա էկել . վայ մեզնից յետի եկողներին , ջուրն էկել ա նրանց տարել , նրանք աւելի բեթար պափ ընին . վաղի մաստին չըլլի , “Ճու-

կը զմիսիցն առատել, . մենձից ընչամնք պատիկ ըստնոց ենք էին, թէ հագուստական, թէ աշխարհական . մինը միկելիցը օրինակ ավեր ունում էին :

Մարդ ու կոփել ըստնոց իրար սրտից ջուր խմելով խօսացին ու մարդը վեր կացաւ, որ դնայ միքին, կնկանն էլ ասեց, որ աղէքանցը վեր կացնի թէզ զրկի : Հետո որ մարդը դնաց, կնկելը աղէքանցը վեր կացրուց ու ասեց, որ հերներդ դնաց յիքին, մանղաղները տարաւ, ձեզ էլ կանչում էր : — Դէ մի մին թիքայ հաց տուր բերաններս դընենք, ասին աղէքը, սովոր հօ բերաններս հովին չպտի բանենք միքումը : Մէրը մի մին լոշ բերուց, տուռոց աղէքանցը, թէ ձեռներիկ դուրսմամ անալով դնացէք, ևս էլ կերտակուր կեփեմու կըդրկեմ : Տըզէքանցը ճամփու քցեց, ինքն էլ վեր կացաւ, տեղերը հարսներին կիտիկ տուռոց, կարիցը վէր էկաւ (ընչունքի կտերն էմն քնում, ինչպէս նրանք, էնալէս էլ բոլոր գեղացիք), կովերը կթուած ու հարսների մինին ասեց, օճաղ անի, աղինձը ջուր լցնի, ոսալը դնի վրէն, մինին էլ ասեց, որ աթարը թխի, մէկէլին էլ մի որիշ բանի դրուց, ինքն էլ ջահրին դրուց առաջը, մանիչն առաւ նրվստացնելով մասեց, լոռի օրորոցն էլ դրուց կուչուր, ոտով ժաժ տարով օրորում էր ու էս նամնիկն էր կանչում ծանր ու բարակ :

Նամնիկ, նամնիկ իմ Դրիգոր, զու նամնիկ, նամնիկ, նամնիկ .

Քեզ համար դրուի սար ու ձոր, զու նամնիկ, նամնիկ, նամնիկ .

Պառաւ դրուխս դրուբան կըտամ, զու նամնիկ, նամնիկ, նամնիկ .

Անոշ բաղին ևս քու մօր, զու նամնիկ, նամնիկ, նամնիկ : (*)

Նամնիկ տրիմ մինձանաս,

Հայիսորիս ծերանաս .

Երբ որ խելքիով տէր ըլնիս,

Պառաւ տատիդ չմոռանաս :

Տատը դլմովդ պատիս դայ,

Ինչ խաթայ ունիս տատին դայ .

Երեսիս մի բուռը հող քցես,

Իմ տէր ու աիրական բարմայ :

Ենորհքով, զոռով աղայ դմու,

Սաղ աշխարհքը ձեռդ մու :

Էս մեր դուչման աղդերին,

Խեղճացրաւ հովին մու :

(*) Ամէն տողի վերջին կըմիկն նամնիկ :

ԶԵՆԴ լուղը սասանի ,
Ցակը մանի , տաղ անի .
Ազի հրէս Գրիգորը
Կըսայ ինձ ու կապանի ,
Գիրի ա մեր Հայ աղղը ,
Ղօչաղների թաց աղղը .
Եմ անփառ Թուրքի ձեռին ,
Փշացաւ մեր կէս փայ աղղը
Իմ Գրիգորը մենծանայ ,
Դուշմանի աչքը հանայ .
Հայի աղղին օդնելով ,
Փառք ու պատոի տիրանայ .

Վարդիթերի մերը դարդերն իրար էկած՝ նանիլ կանչելով , քնացրոց երեխին ու ջանրի մանկչը պտտեց . հենց որ կիրակուրը հանաւ , վեր կացաւ լցրոց փարխաջը , մի դաստայ բոխ , մի երկու էլ սոխ , մի քիշ էլ սիրեղի աղը դրած դոխ դրկեց մերքին մարդին ու տղեքանցը . ինքն էլ մի երկու թիքայ ծղծամ տալով հաց կիրաւ , հարսներին էլ կիրակինց էլ , յետ նստեց ջանրի տակը :

Ժ Զ .

Մի կիրակի առառօտենց Գարեղինը ժամիցը դուս Ակաւ , դնաց Սօմենց տունը , որ իրար հնտ դնան ման դալու . տղորմի Առառած , քեռակին , առաց Սօմի մօրը . Էս ուր ա Սօոր քշերհանայ , դու . Էղ ինչ բանի ես . — Տօ , ասեց պառաւը , Սօոր էս քշեր ձեր տանը չի էլել , ինչ ես ասում , բա քշերս տուն չի էլել , մենք հենց դիտեինք , թէ քու կշանին ա , էս ինչ բան ա : — Լաւ , բաւ , ասեց Գարեղինը , էս քշեր ես էլ տանը չեմ էլել . Հիմի էս կերթամ կիմանասմ , դու միամիւ կայ , կըլնի որ մեր տանն ըլի . ասեց ու ջանը կրակ ընկած դուս էլ լաւ . դրան առաջին շնմածի պէս կաննել ա ու միտք անում . Տէր Աստուած , առում ա , ես որ քարտիովը վէր ընկնիմ , էլի էղ տղի միտքը բան ա ընկել . Հիմի ուր դնամ , որտեղ զանեմ նրան . ես հենց ասում էի , որ սա մին օր իր զըմիւը մի փորձանք կըրերի . հենց հրէս կատարուեց . սաղ քշերը տուն չի էլել . զլուխը վրէն ըլնէր , նա ոչ մի անդ կենալ չէր . Էս ինչ փորձանք էր Աստուած : Զեռը ծոցը դրած դնաց Գարեղինը քոչէն դուա ներքեւ . յենաղին հարցնում էլ , հա-

մաւ ոչովից խարար չխմացաւ . զնաց Արշաւիրի կուշը , հարցրոց նրանց , թէ Սօսին հօ տեսել չեմ : — Ես էրէկ տեսայ Սօսին , ասեց Արշաւիրը , իրանց յիքումը նստած մի պուճուր զիրք ձևոին պօպօքու տակին կարդում էր . հէնց որ ինձ տեսաւ , էլ կաննեց ոչ , վախաւ դըպա ձորաբաշը , էլ չեմ խմանում ինչ էլաւ . Գարեղինը որ էս լսեց , էլ խօսացրուց ոչ , յետ դառւաւ ու դպա ձորաբաշը , իրան քցեց էն քարափի կուշուը , որ տաշտի պէս տապակ ա ու միջին նստելու տեղ կայ : Շատ անգամ խօսք բացուելուս Սօսը Գարեղին ասել էր , թէ էս քարափին իմ տունն ա , ինձ որ ման դաք զտնէք ոչ , էկէք ըստեղ . հիմի հէնց որ միան ընկաւ , իրան քցեց էս քարի կուշուը . համա բանն էս ա , որ ամէն մարդի ձնուից դալ չի էդ քարը նիդնիզ . Գարեղինը , զորթ ա , շատ բան դիտի , օխտը տէրտէրի , վարդապետի խելք ունի , համա թող մաշկակարը մաշկիցն աւել չի դատի . զնկների ծէրով քարափը չանգաելով վիրե զնալը Սօսին էր տուած : Խեղճ Գարեղինը շատ աշխատեց , որ նինի , տեսաւ իրա խելքի բանը չի . էս ճըղը վըզը չի , որ երկու խզմզի ու փող առնի , խալիսն խափի . չարէն կըտրեց ձէն տուուց : Սօսը , որ Գարեղին ձէնն առաւ , տեղիցը վեր թըստաւ ու ներքն մտիկ տալով ասեց . ինչ ա , էլ էլար , քեզ զորդան , ընչանք թրը պտի թխափ պէս աղօւն , աղօւն անես զիխիս , մնոնիկ հօչիք , հիմի կըդագի : — Վէր արի , վէր արի , ասեց , սեմերես շընիս դու , ինչ խեղճ ես , ինձանում էլ հալ թողացիր . ես ոնց որ տեսնում եմ , դու օրէց որ դրի բանատեղ ես դառնում , քշերն ընչանք լիս սարերումը , ձորերումը արջերի հետ ընկերութիւն անելով , աւարայ էլած ման ես գալի . տնաշչն , մէրդ մնուել ա քշերս ընչանք լիսացրել ա . հիմի էլ ընչանք նրան կըհամնիա , հոգին դուս կըդայ . ինչ ես ինձ էլ , էն խեղճին էլ էրում , փոթոթում : Սօսը հէնց որ էս լսեց , աչքերի արտաստնքը սրբեց ու ուղենալով վէր դալ , ասեց , միս ինչ կըլիէր մի կէս սհաթի յետի վրայ համնէիր , մնուայ կիսաջան ըլնելով . հիմի հէնց զիրքը առաջս դրած կարդում էի զգելով , մին էլ ինչպէս թէ , մի մարդ մի կարմիր խնծոր բերոց անկաջբռնուկ քըցեց . մի քանի տղայ էինք մի տեղ հաւաքուած , մեղնից մինը վաղեց , որ վեր ո՞նի , հէնց ձգեցի անկաջը , որ քոքահան էլաւ , քիչ էր մընուամ , դմակն էլ հետը պտկ դայ . նա որ վեր քցեց , ես վեր կարայ ու վաղեցի դպա էն մարդը . մի երկու տղայ մօս էին դալի , որ խզն , էլ յետ վախլութիւնիցը մկան նման յետ էին փախչում , ընդուր որ ձեռիս գօրութիւնը տեսել էին . հէնց էն ա , քիչ էր միացել համնէն

մարդին, որ խնձորն ինձ մնայ, ձենք առայ ու վեր թռայ . միս Աստ-
ուած ջան, ընչանք Երբ մուրազս պափկ կիսաստ մնայ : — լմէ ,
լմա, վեր մի գալ, ասեց Գարեղինը, կոնիցս բոնի, քաշի վերեւ,
տեսնեմ, թէ ըստեղ ինչ կայ, որ Էսքան գալիս ես : Խեղճ Սօսր լաւ
չեր ուզում, որ իր սուտաշ աղաքին խմանայ էն, ինչ որ ամենիցն էլ թա-
գուն էր Աստուածանից սաւահի, համա վախեցաւ, որ չընի թէ Գա-
րեղինն ասի, թէ էդ ընչիցն ա, որ “զլսիս տալու վերին ես, աչքու
դուս գալու վերիլը չես” . ամէն բանի միջին խառն ըլնիմ ու ինձանից
թաքուն բան ունենաս . ընդուր համար էն եքայ տղին քաշեց վերեւ,
ոնց որ մի ծափ ճուռ անդիցը վեր ունիս, կամ մի բարուլ, որ փառս
թռչի երկինքը : Գարեղինը հէնց նի էլաւ քարի զլուխը, աչքերը իսր-
իեց ու էլ չի կարաց դիմանալ, փաթթուց Սօսի ճոտիքը, ոնց որ զող-
լապատը . (քաղեղը) ծառին, միս սաեց, փառք Աստուծոյ, որ իմ
աչքում լիս կայ, որ մարդին ճանանչեն եմ, նոր եմ հոգուս պէս սի-
րել . էս ինչ արտասունք ա, որ թափել ես էս փուխս քարի վրայ . էս
ինչ մասների տեղեր ա, որ փոս ա ընկել, դու մի թէ ամէն օր բան-
թող էլած վախագ գալիս ես ըստեղ, ըմբռիդ կէսը փչացնում, հոգուդ
խողարմբի մմերը վառում, հոգիդ լուսաւորում, քու հոգուն մհունիմ .
տուր, տուր էց զիրքը տեսնեմ ինչ ա . յետոյ բաց արուց տեսաւ . Ափ-
րիմ խորի . մտիկ տուռոց քարի չորս կողմը, մի դինը խոր էր էրի պէս .
յառաջ զնաց, տեսաւ չոր խոտը փռած, տեղ շինած, մի քար էլ զըլ-
խատակը դրած . էս ա էլել, ասեց, էս քշեր քու . Եօրդան դոչափդ ,
որա միջին ես անց կացրել . յետոյ մափկ տուռոց Սօսին, տեսաւ, որ
ծնկները հոգուտ են . հիմի խմացայ, ասեց, որ քու ձեռներն էլ, ծընկ-
ներն էլ ծունդ դնելով ես կոշտացնում ու պոկում : Մափկ տուռոց խո-
տի տակը, տեսաւ մի Նարեկ, մի ձեռազիդ խզմբած Աւետարան, մին
էլ իրա տուած Սաղմոսը . դու հրտեղից ես ճարեկ էս անդին զանձնեն
սաեց, ես քեզ մէնակ էս սաղմուն եմ տուել, որ կարդաս, Էսքանը
ով ա քեզ հասցրեկ, այ քու սանդողին դուրբան . փառք քեզ ամե-
նադէա Աստուած, որ քու ողբրմութիւնիդ դոները ամէն մարդի հա-
մար էլ ա բաց . քու խորհուրդդ անքների ա, ընչանք հիմի մեր աշ-
խարհական մարդիկը հէնց խմանում էին, թէ զրքի վրայ աղօդք ա-
նելը տէրտելներին ու վարդապետներին ա տուած, համա իրանցը հէնց
էն ա, որ առաւօտը տեղիցը վեր կենալուս քու անոնքը տան, իրմ-
ներին խաչ հանեն, թէ բան չունենան հօ, ժամ էլ էրթան, թէ ունենան
իրանց բանին էրթան . հիմի խմանում եմ, որ աշխարհական ուստիվների

մէջն էլ ա մասել զրքով ազօթք անդղը : Յետոյ յևս դառաւ Սօսին ու ասեց . արի զնանք , մէրդ խեղճ ա . ազօթքը անես , մօրդ սիրար ցաւայնիս , եղ էլ Աստղծուն Ընդունելի չի . քու ծնողիդ պափ հէնց մայիկ տաս , որ մի թողի չափ սրտին դարդ չի թողաս . միր կալ զըրքերդ զնանք : — Զէ , ասեց Սօսը , զրքերը թոնկ մնան , ոչով չի տանիլ , սրանք Աստուծոյ պահած դառներն են , բնչ զէլ կարայ մօտ դալ , ամէն օր ըստեղ դրած են ընտամ : Սօսը բանեց Գարեգնի կոնիցը ու վեր բժրուց ներքեւ , ինքն էլ հետք վեր եկաւ , գնաց զետի դրազը , երեսը լուսաց . ջիբիցը սանդրը հանեց , ոսկէքաքուլ մազերը սանդրից , հանեց կարմիր դանաւուզի դոշլուզը երկու մատ դառ զիւլաբաթունով կարած՝ կապեց շմնքը , հանեց եղամանիցը եղը , որ քամարին կախ տուած էր , քսեց լավիններին , թափ տուուց շորերը , շինուեց , սարքուց , հէնց զարդարուեց մի աչքը թերդելումը , որ Գարեգնի բներանը բաց մնաց . յետոյ կուռը քցեց Գարեգնի շնքովն ու վեր կալաւ Ղարաբաղին (երդի եղանակ է) . ծառ ու քոլ անկանցները բաց արին , որ լսեն էս հրեշտակի ձէնը . բլբուները ձորը լիքը ծառերի վրայ առաւօտեան հովի զէմ երդում էին հազար ու մէկ եղանակներով . հէնց որ էս ձէնը լսեցին , ամանչկուցը իրանց ձէնը պահեցին , ուռու կացան ու անկաջ էին զնում , որ նրա եղանակները սարվեն ու իրանց առաջին եղանակը շինուն . գետի խշոցն ու ձորի զժժոցը հէնց իմանաս , մինը ձէն ըլեր պահում ; դամ քաջում , մէկէին էլ թոթակի պէս ածում , իրար քցում , որ Սօսը աւելի էշխով ասի . առաւօտեան բարակ քաղցր քամին էլ , որ էլմով շուացնում չէր , հէնց իմանաս թէ նրա ձէնն ընի ուզում սարովիլ , որ ինքն էլ նրա նման կըլլացնի . Ծնչանք հիմի սոս էր , ոչ ով չէր երեսում յիքանոնցումը , հիմի թաղ ու թառակ ձորի բաշին կիսուեցին . որոնք որ լսել էին , ասում էին Սօսն ա . որոնք չէ , ասում էին , ախ մի սրա պառը տղին տեսնենք . էլ սրտներում դարս չի մնալ . մի հարս մի աղջիկ էլ , եղ քաղցր ձէնը վեց օխտը յիքի դէնը մի յիքում լսելին . վեր կացան ու վազում են տեսնելու սրա կանչողին . հէնց են զալյա , ոնց որ ոչխարը արօտիցը բերում են մէր անելու , հէնց որ զվուկին (գառների տեղը) են համեռում , էլ իրար մակի չեն տալիս , իրար առաջ են ընկնում . բանն էս ա , որ աղջիկը դիսի , թէ էս ուլ ա էս թառակը թնդացնողը , ընէնց ա զայի , համա հարաբ միամիտ ա չի խմանում , ոնց որ ոչխարի միջին մի թուանք քցես ու վախչես , միամիտ ոչխարները զէպի քեզ կըլվազին . ախ , ասում ա հարաբ , իս խմ օրումը էս թառոր քաղցր ձէն չեմ լլ-

սած, սա մեր գեղացի չի պտի քինի, շուտ արև համնինք. համա աղջիկը նրանից աւելի թայթի ընկնելով, որ անմի, մի դիցը վազդում ա, մի դիցը սառում. հա աշխատի համնենք, հմի բանը կըպարզուի, եկան դրանք դպա ձէնը ու բնչ տեսնեն. կնիկ, աղջիկ, հարմներ ձորի զլիմն կիսուի են, տղէքն էլ լողը վազդում ա ներքե դպա ձորը. մին էլ բնչ տեսնեն. նոր զնացող տղէքը առել են մէջտեղ Սօսին ու Գարեգին ու դուս են զալի խրամովը, Ամէնն էլ ծափ տըւին, ծիծաղացին ու ասին. մկամ սա ըսէնց չնորհք ունի. առէնքն էլ ուրախացան, համա մընի սաները գետնիցը կտրուեց, երբ որ տեսաւ, թէ իրա սիրեկանը սաղ թառակի ուշ ու միտքը վրէն ա դարձրել. մի կամաց էս բառերը վախցրուց բերնիցը, չի կարենալով իրան պահել. մին փառքիդ մեռնիմ Աստուած, թէ որ մեռնիմ, զիտեմ, որ ըստոց յետոյ դերեցմանփա օխտը թիղ մանիշակ դուս կըզայ. Արի որ նրա անրազդութիւնիցը ուրիշի անկաջը սուր էր, ամէնքն էլ լացին. ինքն էլ երբ որ համկացաւ, թէ ինքն էլ նրանց պէս մի աղջիկ ա, զորթ ա. ինքն ա էս ամէն բանի պատճառը, իրա խաթեր են էսքան խայխը հաւաքուել. ինքն ա Սօսի խաղ ու տաղը, մէկ խօսքով ինքն ա վարդը, որ էս բիւլրիւլին էշխալամիչ ա արել, ինքն ա Վարդիթերը, համա ամէն բան իր տեսն ունի, ծալսոնը կտրեց, սառեց ու մնաց, էլ նոր որտեղ, բերան բերան ընկաւ, թէ էսքան էլ բաց աղջիկ կըլին. խաղը, թամաշէն թողացին, աչքները քցեցին աղջկանը. մինը մատն ա կծում, մինն ասում ա, վայ թուք ու բնողնամ ընիմ ես, էսքան էլ երեսի մեռնիը վեր արած, արտուը մի զի՞ դրած աղջիկ կըլի, սա էսօր, որ ըսէնց համարձակութիւն ա անում էսքան խալխի միջին, իրա սրափ ուրախութիւնը կէս սհամթ կարաց ոչ ծածկի, էքուց որ մենծանայ, էլ դրա օգտիցը ովկ կարայ զալ, խեղճ աղջկը վազուց էր համկացել, թէ սէրը իրան շատ ճամփից հանեց, աղջկայ կարգից դուս բերուց. օրէնք չէր իրա սրափ սրափ դաւթարը ուրիշների մօտ բաց անել, կարմինց, աչքերիցը արտասումքը զլղլարով վէր ածեց ու մտաւ հարսի քամակը. համա դուշ էր թու, էլ չնս կարող բռնել, էլողին սառափ կըլի, Սօսն էլ, որ տեսաւ, թէ իրա սրափ ուրախութիւնը տեսցաւ, իրա կոկոմ վարդը բաց էլաւ, առակոսի տակ ընկաւ, ձէնը կտրեց ու աչքով արտուց հարսին, որ առնի հեռանայ. Էս ամէնը Սօսի ձէնին էին բանդ, չնոց որ տաղ արտուց, իրանք էլ քաշուեցին իրանց յիքանիքը, մնացին Սօսն ու Գարեգինը, — Ա՛յս, ինչ անեմ, ասեց Սօսը. դլուխս ինչ քարովը տուի. էն

իսեղճ աղջկանը հիմի միա ու ասկու կանեն , ճիալուի ասկի կըչորացը նեն , սալջարդ կանեն . թնչ անենք , էրթանք մօր ոտներն ընկնենք , բարքի պլուացնի հօր բարկութիւնիցը , էրթանք հարսին ասենք , տանը խարար չի տայ , համա թնչ , ընչանք նրանց տռւն գնալը Աշտարակցիք հիմի կտրների ծէրին չաւ արին : — Զէ , ասեց Գարեգինը , արի գնանք Արշաւրիին գունենք , նա սրա չարէն կըտեանի . կընի որ իրանց էս մօտիկ լիքումն ըլի , էսօր կիրակի ա : Սօսն ու Գարեգինը վազէ վազ զնացին Վարդիթերնց յիքին , տեսան որ Արշաւրը ընտեղ չի . հարսի իշարաբժ անկուցը իմացան , որ տանն ա : — Զընի թէ , ասեց Գարեգինը , տանը բան առէք հարսի ջան , երեխայ էր . ինքն իրան կորցրուց , չխացաւ , թէ որտեղ ա . Էս հիմի կերթամ ձնց կանեմ , որ երեխի խաթրին ոչով չի դիմչի . հարսը մի քանի հետ զիսով արեց , սաքի թէ լաւ կընի ու յետոյ Վարդիթերի բիրնովը ասեց , արխէմն կացէք . թէ խալխը չտուն , ինձանից բան չի դուս դալ : Գարեգինը բանեց Սօսի կռնիցն ու հրեղնի նման էն սհաթին հասան գեղը . տեսան , որ Արշաւրը ուռուցումը մի քանի տղէքանց հաս նըստած զրից ա տալիս . Գարեգինը կանչեց զրան զրագ ու առեց , ևս Էսօր քեզ մի բան պար ասեմ , համա պար եօլս տանես : Ես ու Սօսը զընացել էինք ձորը . Վանանց յիքովը դուս դարսւ , ասեցի , որ մի Ղարաբաղի ասմ . աս էլ հօ զիսես , քարավիցը վէր քցեմ վէր կընկնի , որ վեր չի կայւս , աշխարհքը ժաժ էլու , ձորի ձնը փորն ընկաւ . Մին էլ թնչ տեսնենք , թաղ ու թառակ զգոնի պէս զլիներիս հաւաքուցին , հարսներ , աղջկէք , տղէք էն սհաթը ձորաբաշը լրցուեցին . չեմ զիտում որտեղից որտեղ քու հարսն էլ առած ձեր երեխին Արաւան . Վանտեղ , Վարդիթերը որ տեսա , թէ Սօսն ա էս հազ կանչողը , մի կամաց վառք տուոց Աստրծուն , թէ թնչպէս էլու , էլ խարար չեմ : Ես Եսն ուղար չինող խալխը տմէնքը մի կողմից զնամիչ արին , խեղճ երեխին ամանչացրին . Հիմի զիսեմ , հօրն ու մօրդ անկաջը կընկնի էս բանը , մընի վրէն հարիր էլ աւելցրած՝ դու ոնց որ կարաս պար անց կացնես . դու զիսես կիսանոնց բնութիւնը , որ բանց մի բանի են ման գոլիի , որ աշխարհքը ապականեն իրանց ստախօսութիւներովը : — Արխէմն կացէք , ասեց Արշաւրը , հէնց կանեմ , որ հէրս թէ կուզ աչքով էլ տեսած ընի , իմ խօսքին աւասայ , իրա աչքին ոչ : — Դէ մեսա բարին չնորհակալ ենք ասեցին տղէքն ու յես զառան զըսը Սօսի մօր կուշտը , նրա սիրուը միամտացնելու համար :

Ժ. Ե

Վարդիսոր չարաբ՛ օրն ա . Գարեգինն ու Սուր ճաշուայ տժման շոքին երեսների քրտինքը որբեկով , առազադեօլի միջին լեզացած՝ տնքալով , քրտնքումը ջղբջղբնոտած դուս ևն զալի ձորի դուսովը : — Եռւս զնանք չաքարեկնի խնձոր չատ քաղենք , էքուց մեզ շտու պէտքը կըզայ , ասեց Գարեգինը : — Ես հիմի կէրթառմ կըքաղիմ խնձորը , խորչինի մէջը կիցնեմ , մատազն էլ վեր կունեմ ու կըզնամ սուրբ Կարապետ , դու էլ առաւաօտենց շուտով հաւաքի մեր հընկերներին ու արի . . . ընք , թուանքը տրաքեց . Երեանայ ըխտաւորները Ական . կընի , որ սրանց միջին բարեկամ տղէք էլ ընին , կաննենք ըստեղ տան տաննենք , վէր բերենք մի քիչ դինջանան . իրար հետ զնանք . ո՞հ ; մին էլ քցեցին թուանքը երկու , երեք , չորս , հինգ և այլն . շատուր են այ . անս թնջապէս ձի խազայով են զալի , էն քարքարու ճամփումը էլ ճիռն մտիկ չեն անում , դրանց ջանին մեռնիմ , հէնց քէֆ են անում , որ քէֆի աչքն են հանում , լաւ ուստում , խուսմ , թամուղ հաքնում : — Է՞հ , բաս ըտէնց պտի ընի , մեզ պէս հօ չպտի , որ շահի կոռուրի պէս ընչանք իրիկուն տանջուումնեք , ուղարի պոչի պէս ոչ երկարում , ոչ կարճանում . ես քու կարդալուդ մնոնիմ , քիզ ամխաստի պէս մութ տեղն էլ ա պարբայնում դու էն շարցոնցիցն էլ լաւ ես , ջւրն էկել ա մնզ տարել ընչանք իրիկուն արեի տակին , անձրեի միջին ձների վրեն , քչերը քուն չունինք . ցերեկը զարար չունինք : Ընչանք Սոսի խօսքը վիրջացնիլը Նրեանցիք դրանց քամակիցը հասան ճիռով , ո՞հ մեր Հրաշեան ա էլել . — ողորմի Աստուած ասեց Հրաշեան . — այ ողորմի ճնողացդ , թնջապէս էք լու էք քէֆներդ , հաղներդ : — փառք Աստուծոյ ամէնքս էլ լաւ ենք , սուրբ Կարապետ չէք զալի , էկէք զնանք իրար հետ : — Չատ լաւ կըլի ասեց Գարեգինը , համեցէք վեր էկէք , դինջացէք , յետոյ հովն ընկնի դուք կըրթաք մնաք էլ իրիկունս ա կը զանք , դուք Երեանայ ընչանք ըստեղ նրա լիս դերեզմանի համար էկէլ էք , մնաք քնիթներիս տակինս ա , թնչ պտի ասենք , որ չզնանք . համեցէք , քչէք ձիանը զալա զեզը : — Ենորհակալ ենք վեր զալուց ասեց Հրաշեան , գուք համեցէք ձիու թարքը նիկէք զնանք , թէ աղէն կը պիտէք :

Գարեգինը չթողաց դրանց ոչ մինին անցկենալ , քաշեց Հրաչէի ձիու զեամը , առաւ դնաց դպա իրանց տունը : Դրան առաջին վեր էկան , ձիանը բակը քաշեցին ունստեցին քիչի վրա չարգախի հովումը : — Մի սասը ջոր չունիք ասեց Հրաշեան : Էն սաթը վերողամիլիցը (սար-

դափ) սառը ջուրը հանեցին, ոնց որ ջրօրհնէքին լցրած, Հինց որ խըմեց ձբաշեան, օխնյ, սահց ակդ օրհնութի. քու պատճառ դասնողի հողին դրախտական ըլնի. տղէք, ես էսքան ման եմ էկել, լաւ ջրեր չատ եմ տեսել, համա էս օրհնուած Աշտարակայ ջրի պէս մարսական ու քաղցր ջուր ոչ մի տեղ չըկայ, չառէք, թէ կեղծաւորութիւն եմ անում, խմեցէք տեսէք, Ամէնն էլ խմեցին ու բերանները բաց մընաց, Վարդիւոր շարաթ օրը ըսէնց ջուր, Նրեանու երկիրը քանդէիր, չէիր զտնիլ. Արարան շատ աղբրներ կան, Արագեադ շատ քաղցր ջըրեր կան, համա ոչ մինը սրա պէս մարտական չի. Ամբերթը զոված ջուր ա, համա սրա խումը չունի. Սուրբ Ականատեսի զօրութիւնին զորբան, նա մեր գեղի համար. էս լաւութիւնն ա արել. Կարբուներքեցը գետիցը գաւաղանն առել ա, աղօթք անելով ընկել առաջ ու քաշ տալով գնացել դպա ներքն որտեղ զաւարանը խաղ ա արել, լէն առու ա դառել, ջուրը հետն էկել, ոնց որ շողքը մարդու քամակիցը, որտեղ ապառաժ քարափ ա էկել, զաւաղանով առել ա երկու կտոր արել, կամ միջիցը ծակել, ջուրը անց կացրել, ընչանք բերել ա գեղասահզը հանել. նոր կամաց կամաց մարդիկ են էկել, տեսմել ջուր կայ, գեղ են շինել, որ հիմի էն աննման Աշտարակին ա (*). ինքն էլ յետ ա դառել, զնացել Սաղմոսավանքը ընտեղ ճգնութիւն արել. նրա լիս գերեզմանին զորբան, մենք նրան շատ ենք պարտական. նրա սուրբ գերեզմանը հիմի էլ Սաղմոսավանքի ժամի միջին ու մեզ համար աղօթք ա անում :

Գարեղինը նստացրուց աղէքանցը ու մտաւ կախանատոնը, վէր բերուց ձողու վրիցը լաւ հալաղի հաւող, լուաց սառը ջրով ու դրուց դրանց առաջը. համեցէք ասեց, թողութիւն կանքք, տանը մարդ չըկայ, ամէնքն էլ յիքունն են, Աշտարակցունն էլ էղ մի յիքին ա, զարունք ծաղում ա, աչքները տնկում են նրա վրէն. ընչանք մասմլը վեր են ունում, իրանցն իրանց ա հասնում. աղպէր, դուք քաղքցիք էք, որըդ առուտուրի էք, որըդ վեշակի, միջներիդ պարապ մարդ չի կայ. ռանչչարն (երկրագործ) էլ իրա ցանքս ու վարքին ա շխատում, տարեկան հացը տուն ա լցնում. տաւար, ովնար, գոմէշ, ձի, գութան, չութ ալահում. հացը, եղը, պանիրը, բուրդը ամէն բանն էլ իրան իրան գալիս ա. մենք երկուսիցն էլ դուրկ ենք.

(*) Այսպէս են առում աւանդութեամբ, թէ մի Սուրբ Ականատես անուսմբ այս ձեռք բերել է Աշտարակու ջուրը :

էս մի յիքու երեսին ենք մամկ տալի . Աստուած մի արացէ , կամ կարկուտը տայ , կամ թրթուռ փչացնի , կամ տարին չբեր ընի , սոված կոտորուիլ պանք . մեր մասին էլ որ կայ , ամէն բան նրան եադի ա . եփած կերակուր ա , մարդ , շուն , կատու , դորդ ու զուշ , ինչքան աշխարհքում ժմմունք կան՝ քոմմա էլ ուստում են . կէսը անփող հնոց ճամփորթներին ենք տալի կամ աղքատներին . էս լաւ ահլա խէր էլ ա ընում . քաղքումն ամէն բանն էլ փողով ա , զեղցուն էլ ունի ոչ . մերն ա , որ մէջ տեղը փչանում ա . Մարդս մի երկու կով ենք պահում , թէ երեխեքանց մածուն էլ ա ընի , ին էլ չնոք կարում եօլա տանել , ամէն բան փողով ենք առնում . Մեր մի բանն ա լաւ . տարուայ որ վախտին դռնադ զայ , զիններին վրա պատի կունենայ . մի քիչ , զորթ ա , ձին պահելու համար նեղութիւն կունենանք , որ տեղ չունինք , համա մարդի մեղ պէս ոչով չի պատի տալ . զիննին կայ , արազը կայ , հաւողը կայ , հազար ռանդ չարագ ու թթու դրած բաներ կը հանենք . այ , ինչպէս հիմի ձեր պէս թանկաղին դռնադների սիրուղ կարող եմ մէ՛ կախան հաւողով չահիլ . Ընչանք Գարեգնի խօսքը վերջացնելը Առն էլ զէրուզամբիցը դռս բերոց երկարապոչ զեօդը մէջ ցրած ուկու ռանդ զեղին զիննին . — Տըղէք ջան , ինչ զինի ունինք , ասեց Գարեգինը . զլուխը քարոզնա տանել սրա կշտին կախեթու զիննին . Պետրազօլքիցն էկած շանբանը սրա կշտին ինչ բան ա . ածեց մի թաս ու մէկնեց Հրաշէմն . համեցէք Հրաշէմնայ ջան , տես ինչ ա է : — Լաւ ձեռի ա , ասեց Հրաշէմնա : — Դէ լաւ , առ մի առաջ տռաջ դռ համը տես ու յեզ տուր : Հնոց որ Հրաշէն ձեռը միամիտ տեղուիլ մէկնեց թամն առնելու , Գարեղինը յետ քաշեց ու ասեց . կենդանութիւն տղէք ջան , բարի հազար բարի , իմ աչքի վրայ , իմ զլուխ վրայ , գալուստներդ բարի , Առլը կարսագետը ինչ մուրազ ունիք , ինքը կատարի : Ամէնն էլ ծիծաղոցին Հրաշէի վրայ , որ խափուեց . Հրաշէմայ ջան ալլահ վերդին , ասեց ու խըմեց . Յետոյ ամենին էլ մի մին թաս խմացրուց , ամէնի բերաննե էլ բաց մնաց , արմացել էին , թէ Աշտարակ ըսկնեց զինի ա ընոնմ , մենք հնոց զիստէինք , թէ մեր Երեանայ Դաւթի զիննին ամէնն մեր Երկիր զինանոնցիցը լուս ա , համա սա տուուց նրան անց կացաւ . Հաւողը որ կերան պլծան , զինջացան , Հրաշէման ձէն տուուց , դէ տղէք ջան , վեր կացէք , մթնեց . Հնորհակալութիւն , Գարեղին ջոն , Աստուած օճազդ հաստատ պահի ասին ամէնը , զուք էլ չէք զալի : — Աւնք էլ իրիկունս կը գանք , մի վախեք , հնոց քէք շանց տանք ձեղ , որ

ասէք մաշալլան։ Տղէքը ձիանը նոտեցին ու քշեցին դպա Հանավանք։ Գարեգինն ու Սօսը երբ որ աղէքանցը ճամփու քցեցին, իրանք գնացին Սօսենց ածերը, ընտեղից խնձոր քարեցին ու միքանոնցովը զալով հասան Վարդիթերենց յիքին, ահան հեռուիցը, որ Հեթումը դրոխը զիսէ ա աղջկայ զոգն ու քութութիլ տաղի, կանեցին մի տալդայ տեղ ու դպա էն աստղը մալի տուին, որ օրով ցերեկով նրանց համար արեիցը լաւ էր լիս ուալի, նաև էլ հենց խմանաս, թէ կողքին բրթող ընէր, յետ մորկ տուոց ու աչքերը գցեց իր տիրոնչ երեխին, ձեռներով էլ մհանայ հօր մազերն էր յետ քաշում, սաքի թէ քութում ըլի, ու շումիտքն ընկաւ դրայ։ Սօսն էնքան արոց, որ աչքով ունքով կարաց խմանալ, թէ էն օրը ծեծել չկնն երեխին, ուրախացաւ դրա վրայ։ յետոյ ու ու ձեռով հասկացնելով խնացաւ, որ էքոց նրանք էլ պարի Հանավանք զնան, աշխարհքն իրանն էլաւ, Աղջիկը զնչով, զլսով իշարաթ անելով ասեց, որ հեռացէք հէրս վեր ու կենաւմ։ լաւ չէր ուղում Սօսը հեռանալը, համա ճար չի կար, հենց որ հայիւրը զլուիը բարձրացնիլ ուզեց, դրանք ծկուեցին։ — Ասուծ ծով խէր ա, ասեց Սօսը Գարեգինն։ «բաններս աջ ա, ով հաչում ա հաջայ, երեխին ծեծել չեն, էքոց էլ պարի Սուրբ Կարապետ դան, տևանենք ոնց հնք անում, Սրանք ըստեղանց զնացին Գտրիդնենց յիքին, մատաղն ու խնձորը տուին մի մոնթի, (որ յառաջուց էկել էր ընաեղ) որ առնի զնայ, մինին էլ ասեցին, որ իրմկունս իրանց բերնիցը իրանց սոմին հընկերներին համեցէք անի, որ էքոց շատ քշերհանայ դան Հանավանք ու մոնթերն էլ քոմմա վեր կենան դան։ յետոյ իրանք ճամփու ընկան հենց ընտեղից ուսով, զրից տալով դպա Հանավանք, — Ես կամամ, տասն ու մին աւարեկանին օրէնքով պատկ կը համարի, հարցրոց Սօսը, ըտէնց չի։ — թէ օրէնքին մորկ տանք, ասեց Գարեգինը, կարզը խոկ տասն ու չորս տարեկան աղջկանն ա, տասն ու հինգ տարեկան տղի հետ։ — թէ որ ըտէնց ա, ընչի մեր Վարդիմերի աղալորը, վահանին պատկեցին։ ինքը քոան երկու տարեկան էր աղջիկը տասն ու մին։ — հենց ըստուր համար էր, որ մեր գործակալը հինգ վեց հետ տարաւ բերոց է, զու բնչ զիսեն։ մի քչեր իրենք հետ շաքար զնաց նրան, վերչի կալաւ, թէ ըստով ըսիկ տասն ու չորս տարեկան էլ որ ընի չի համնիկ, մին էլ տարան էլ չկամ, վերջը մի փութ մի բարեկար աղայ մարդ վեր ա կարել, ճի նստել, տարել, որ հրամանը բերել ա, հլաւ էն էլ խստացել ա, թէ արազը որ քաշեն, մի լիսոր էլ լսու աշակ կըդկիմ, — իրեք փութ չէ, ա-

սեց Սոռը, թող նաև խօսք տայ , որ բանը ըլցնի , կայացնի , ևս տասը վիթի զին կըտամ նրան , ինչ անում ա , թող անի , թաք անի . դորթշ չի ընթի որ մեր գործակապին միջնորդ քցենք , մի մահուա ֆուրաջայ էլ կամում իրա համար . նրանցից կամանչեն , խաթրիցը անց չեն կենալ . վարդապետ ա էլի , Աստուած օրհնի ասելով բանը կըշնի . զլուխ կըքերի . արի , զնանք էս իրիկուն խօսանք , ևս զիտեմ հիմի վարդոց նա Հանավանք զնացած կըլնի : — Զէ , չէ , առեց Գարեգինը , նրա ինչ հարկաւորն ա էդ թաւուր բաների մէջ մտնի . նրանն էն ա , որ թուղթը տանես , մի քանի շոհի էլ իրան ժամաւց տաս , հոդոցն ասի ու քեզ հրաման տայ . թէ չէ երբ որ չաս ընի , էն էլ ինքը զիտայ . դու նհախ տեղը մարդին նեղութիւն մի տայ . ուստ կաց , դրա համար յետոյ կըխօսնենք , էս ա հասանք . լաւ բալ ըխտաւոր կան էս տարի , պարսպին մտիկ տուր է . ո՞հ , զորթ որ վարդապետը էկել ա . մօտանում են ու ասում . Աստուած օվնական Հայր սուրբ , ու գնում աջը համբուրում , — Աստուած պահապան որդիք , Աստուած օրհնեացէ , ծիծադալով ասեց հայր սուրբը . Բնչպէս էք , ուխտ էք էկել , ընզունելի ըլի . բաս ուր է ձեր մասազը : — Բնել ենք Հայր սուրբ ջան , առեց Գարեգինը , էս իրիկուն չէ , էքուց առաւունց պատարազը որ վերջանայ , խնդրեմ ճաշին մեր մօտ համեցէք , ժամաւրին էլ , ափացուերին էլ հետներդ բերէք , յատուկ կըպարտաւորէք : — Շատ լաւ , որդիք , մենք որ կանք , ձեր հայրն ենք , ձեր համար արդուող ենք , ինչի չենք դալ : Փառաւորի հայր սուրբը յատուկ որ մարդի սիրտ շահող ա . ընչանք էսօր նա մի մարդի խաթր կոտրած չի , տեղիցը վեր կմնողը նրանից չնորհակալ ա , մարդ պարի խափով խօսի :

Վանքի խցերը ամէնքը քանդուած են , մէնակ քարտովէքն (աւերակ) են մնացել . Ըխտաւորը քաշտել են լցուել էդ քարտմիքանց մէջը , որն էլ կընանցի ա , կամ աղայ մարդ ա , մանել են ժամի դաւիթը : Երեւանցի սղէքն էլ վեր էկն էկել ժամի (*) միջին . Սօմն ու Գարեգինը

(*) Յովհաննու վանքը շինած է Քասաղ գետի ժայռերի վ բայ կալմիր և ան պրաստուշ քարերով . հրաշալի է նրա արտաքին կորմիցը նայիլը : Արևմբանեան կողմից ունեք մի մեծ զռուն կամարակառայ . երբ մանումես ներս , իսկոյն զայիթն է շորս մխապազար քարեայ սիների վրայ հասպատած խաչաձև . մէջ տեղը ունի զմբէթ սիւների վրա նոյնպէս , որոյ զլուխը շարժը քանչելի է . զաւթի միջիցը երկու դռուն ունի . մինը մանում է խորանը , ուր է գերեզմանն Սուրբ Յովհաննու Մկրտչի (որ զուցէ մասունքիցն ընի իաղած) և այժմ ժամ

մասան ժամ՝ գերեզմանը համբուցին ու էկան Երևանցւոց մօար :

Երիկաւանը մթնեց , հեռու տեղից Ակած ըխաւորները իրանց մատաղները մորթեցին , պղնձները դրին կրակի վրայ մի կնողալ պահ տրվին . իրանք ինչքան մի դեղացիք կան , հաւաքուցին մի տեղ : Զանել տղեքն ու աղջկէքը եալի բռնեցին ու լէլէ ասելով պար Ական . մի տուն տղեքն էին ասում , մի տուն աղջկէքը իրար դէմ : Ընչանք կէս քշեր իրար հարբայ գալով լէլէ են ասում ու թռչում . յետոյ երբ որ մատաղը եփուում առ , նոր նասում են հայի :

Մեր տղեքն էլ ոնց որ ասինք , էս իրիկուն Երևանցւոց դոնալ էին . սրանք լէլէ չէին զիտում , հայի վրայ նստեցին ու կարգով խաղ կանչեցին , տաղ ասին , ուրախոթիւն արին . որէն էկաւ Ասովն , նա բռդազն իստակեց ու վեր կալսու էս մուխտորազը , որ էն սհաթը միտք արուց :

Ոիրելի ջան հեռացար ,

Զըլինի ինձ մոռացար .

Արտում վառ ա քու սէրը ,

Երում ա ջիզարիս ծէրը :

Դու մի հաս ևս աննման ,

Աշխարհումն գովական .

Փոթոթում ես տեսնողին ,

Կրակում նրա հողին .

Զէնդ ա հրեշտակի ,

Զըկայ երկնքի տակին .

Լուղի խելքը կերթայ ,

Էլ չի կարսու հողին .

Շատերը զիտեմ ես ,

Ոչ մինը չաժեն քեզ .

Գիշեր ցերեկ երազով ,

Քեզ զրկում եմ հաւեսով :

Զաւատաս խօսքին շատերի ,

Ինձ մուշարար միտդ պահի .

Են ասում մէջը . խակ միւս դուիցը մանում է ժամանանը , որ է մեծ եկեղեցւոցին հոյակառ շինուած քով և մեծ սեղանով , բայց առաստանի ներքին կողմիցը կիսով չափ քանդուած է շարժից . այս ժամանան գունի որմի երկու անկինումը կան քարեայ իրարից աղխաղեալ ասնուուզք պատի միջիցը հանեալ աստիճանաց ծայրերը , որ բարձրանում են երկու խորանի մէջ . այս խորանների միջին ես առաստաղը քակուալ դուռվի էստեցից են դնում կոտրը :

Սօսը քեւզնից սալվահի ,

Էլ չի սիրիւ ուրիշի .

Նրա ձենի լաւութիւնը մենք գիտենք , հէնց որ վեր կաղաւ . Էս մուխամբազը , քօմնա էլ հայիլ մայիլ էլան . Երևանցոնց միջին մի աղայ կար , նրա ձենը գոված էր , քանի Սօսի ձենը չէր լսել , որարծենում էր . հէնց որ լսեց , իրանը պարկը զրուց , բերանը կապեց : Սօսը որ մոխամբազն ասում էր , աղջկէրքը զրանը լէլ էմն ասում , ըխտաւորը հաւաքուել էմն նրանց թամաշայ , հէնց որ ժամի միջիցը ձենը լըսեցին , լէլն կիսաս թողին ու թափուցին նեքսն : Ամէնքը մի կողմից ասում էմն , եարար էս տղէն որտևոց ա , մեռնիմ էդ թաւուր աղողի ջանին . աղջկէրն էլ լէլն բաց թողին , էկան թամաշայ . հէնց որ տեսնում էմն Սօսի պօլովիլ կարմիր երեսը ու լսում նրա ձենը , խելքները զնում էր . մինը մընին ասում էր , տեսնիս էս տղէն պասկուած ա , էրնէկ դրա կնկանը , մարդ մեռնի էդ թաւուր տղի ձեսի տակին . ամէնքն էլ մաքներումը դրին , որ էրնէկ էս տղէն իրան առնէր : Բանն էս ա , որ Յուշականցի մի կնիկ մտքումը դրուց , որ իր աղջկը ոնց որ ըլի , տայ դրան . էդքան թամաշաւորների արանքը ճղեց , զնաց Գարեգնի քամակիցը անկաջումը տանց , աղպէր ջան , էս տղէն որտեղից ա , պսակուած ա , թէ չէ : — Աշտարակցի ա , ասեց Գարեգնը ու աղասի : Հէնց որ էս խմացաւ , որախ ուրախ յնտ դառաւ աղջկայ աչքերը դեղ դրուց , առաւ զնաց քռմէրի տուաջին կաննացրուց , որ Սօսը տեսնի , հաւանի . աղջկանն էլ սարսացրուց , որ թէ էս տղէն իրան մտիլ տայ , երեսին ծիծաղայ , բալքի խարուի , որ տեղ ընինք , մեզ դայ դանի : Սօսը մուխամբազի մէկէլ տունը որ վեր կաղաւ , զուխը մի բարձրացրուց ու աչքովն ընկաւ էդ աղջիկը . հէնց որ առաւ նըրքա համարձակ ծիծաղը , աչքերն օլորեց ու երեսը յնտ դարձրուց . վաղի առավի պէս , որ ասում ա “ուրկեցաւ ունքը շնի՞ աչքն էլ հանեց , խեղն աղջիկը” : Սօսի միտքը տես ու էս աղջկանը . նա խաղը ում համար ա ասում , ով ա դայի առաջն ընկնում . նա ուզում ա , որ իր անմանը ըստեղ ըլէր , որ ինքը ձենով , նա սիրունութիւնով խալիք ուշ ու միտքը իրանց վրա դարձնէին , հիմի էս աղջիկը էկել ա , որ Սօսի խելքը գողանայ : Աղջիկը կաննեց կաննեց , տեսաւ , որ չէ , Սօսը էլ իրան չի մտիլ ասուուց , արածի վրա փոշմանեց , յնտ դառաւ մօրը , թէ էս չէլսաւ , արի զնանք , էքուց տես , բալքի հացի կանչես ևս մի բան անհս :

Հէնց որ Սօսը մուխամբազը սրբաւ , խալիսը ամէնքն էլ ծանօթ՝ անձանոթ ձեն տուին , աղբիրդ անսապաւ , Աստուած աւելի չնորհք տայ , Սուրբ Կարապիտը մորազդ տայ ու յնտ դառան : Դրանց թամապէն մի թատ լցրուց ու ասեց , Աստուած կեանք տայ Սօսին ու Գարեգնին , Աստուած ոէր միարան պահի միշտ էդ երկուունն , զրանց կի-

նացը . հենց ուղում էր խմի , Սօսը կուռը բռնեց , թէ կիսատ մնաց , ասաւ , Աստուած սաղ պահի Գարենինին , Սօսին ու ում որ Սօսը սիրում աւ — Ամբէն , ամբէն , ձէն տուին տղէքը , ինչ որ Սօսը ամեց , Աստուած լսող կատարող բնիփ , ու խմեցին . վերջը Գարեգինն ու Սօսը միմին թառ ձևնեկն առած՝ կանոնցին ու չնորհակալու թիւն արին . Գարեգինը , որ սրծաւ , Սօսն ամեց , չնորհակալու թիւն ձևունից իմ կողմիցն էլ , ում որ սիրում եմ նրանից էլ , որ ինքն ըստեղ չը իրա միտքն ըստեղ ա . նա ասում ա , թէ դուք որ իմ կենացը խմեցիք , ինձ չիշնչիք , Աստուած ձեզ կենօք կենդանի պահի , ինչ մուրազի , ինչ խորհրդի որ էկեզ էք , Սուրբ Կայասինար ինքը կատարի . Աստուած Սօսին էլ ինձ հետ անբաժան պահի ամբէն ու խմեց : — Ամբէն , ամբէն , ձէն տուին մնր դարդիմանդներն ու ամբէնքը մի մին կանանցի թաւաղայ արին . ընչունքի Սօսը պատ էր էսօր , էքուց սրոի հաղորդուեր :

Էս քենը մնր տղէքը կենաց խմելով , խաղ կանչելով հացի վրայ վասցրին , գեղքցիքն էլ զրաւը հաց կերան ու լէկին զիեցին ընչանք լիս . Առաւոտինց ժամհարը առաւ կոչւակը , կաննեց վանքի հասարի քանդուած պատի զլին ու թղթզկացնելով , ձէն արտուց զիլ ձէնով . “ օրհնեալ է Աստուած , ժամ հրամայցեք . դատաստան կայ զաշու , պատասխանն կայ տալու , ով բարի քրիստոնեացք , ժամ հրամայցեք . . . Ընսաւառը ժամհարի ձէնը որ առան , թողին իրանց ուրախութիւնն ու լցուեցին ժամ : Սօսն էլ զնաց տէրտէրի կուշ որ , արտաստունք թափելով խոսաւախումաց , զղաց իրա մեղքն ու կաննեց ժամումը ընչանք պատարազի վերջը , որ հաղորդուի : Գարեգինն էլ զնաց Հանաւանքի Ռաստակէսի բաղչումը մատաղը մորթիլ արտուց ու հաղիր էր անսամ :

Արեգակը նոր ծագել էր , զեռ ինքան զօրութիւն չունէր , որ մարդի աչքեր ծակիր , նոր կառելը լծել էր , նստել ու զուս զալի , որ Աշտարակայ ըլսաւառը ճամփու ընկան . աղասի տղէքը թորուն թորուն իրանց հացները կապել էին շալակներն ու առաջ առաջ զալի , պաս պահողներն էլ խնձորը լցրել էին ջիբները , աղքատներին բաժանելով վաղում , որ պատարազին համնին , սրբութիւն առնեն . կնաննեց մի տուաը քիչ էր մնացել համնի Հանաւանք , մինը զեռ Աշտարակայ նոր էր զուս զալի . երեխէքն էլ ջիբները խնձորով լիքը կուռի էին բանել ու կնաննեց առաջն ընկած վաղում : Գարեգինի կանչած տղէքը մի մին աղուխ պաշարով , մի թօռ էլ հետները է կան , Գարեգինը մատաղը մորթիզ էր տուել , մի մենիծ պղինձ զրել օճաղին ու մխաը լցրել մէջը . սովորն , հաւը , կարճակողերը , սիրու , մե թոքը , պղուճիկներն ու ամին լաւ տեղերիցն էլ ջոկիլ էր տուել խորովածացուի համար :

Աշտարակու տղէքը որ էկան , զու ամս հիմի զրանց արածը , թէ

ընչի համար են էսքան խնձոր բերում . նի են ընտամ ժամի կտորը , զնում են գալթի կաթուղիկի մների տրանքովը զիմները հանում , խնձորով ըստուր , ընտուր զիմները տալի . ընտամ զնում են ժամանակ կտորը , կաթուղիկի գլուխը նիշնում , վեր դալի խորանի ձևան միջքի պէս սուր կամարի վրայ ման դալի , ձորին մամկ տալի , ընտեղից քար քցում դպա ձորը , իրար զոչաղութիւն չհանց տալի , և յատ վեր դալի ներքի . մեր Սօմն էլ շատ մոշտարին ա էս թաւուր զոչաղութիւններ անելու , համա որբութիւն պար առնելը .

Պատարացը դուս էկառ . պաս պահողները հաւորդուեցին . Սօմն էլ զնաց զործակալի մօտ , խնդրեց նրան , որ ժամից յեսոյ առնի ժամարացին ու մէկէլ տէրատէր՝ տիրացուերին , ուսի իրանց մեղանի վրայ Ռըստակենի բաղչէն ու ինքը առաջ առաջ զնաց տղեքանց կուշոը ու ոգորմի Աստուած տուուց նրանց , Գարելինը իրա ընկերների համ երրու , տեսաւ , մօտ էկառ ընդունելի բնի ասեց ու վաղեց թափ մէջը զիւին լրուց բերուց տուուց իրան , թէ րերանդ մու մի քիւ .

Հայը քցեցին կանանչ խուվին բաց արտօն սուփրի վրայ , ամէնի թիրած ողաշարն էլ Գարեղինը բաց արտօն լաւ ասմանկան ոլխ , ընչանք ասման ու հինգ մարզի համար սեղան զրուց , ամէն Աստուածոյ տուուած բարութիւններիցն էլ ու մընին էլ զրկեց հայր սուրբի ևսնիցը , Բաղչի մէկէլ կողքին էլ մի բօլուկ օղուշագ կային հաւաք քուած . Սօմնաց , Գարեղնանց , Վարդիթերենց ու շատ ուրիշ ինիւաններ . նրանց էլ վաղեց խմաց տուուց , թէ ընչանք կայէք տէրատէրները հաց ուտնն սկրծնեն յիսոյ ձեղ էլ կըլիերակրեմ . Մին էլ տեսնինք , վարդապետը իրա հողենուրականների հետ էկառ . — համեցէք , հայր սուրբ ջան , համեցէք մասանի վրայ , ձէն տուուց Գարեղինը : — Աստուած ձեր միզանն օրհնի , Արէի , Արբահամի մաստաղն եղիցի , ասեց հայր սուրբը , մազանն օրհնեց ու նատեց մէջ տեղը . տէրտէրներն ու տիրացուեկն էլ , որ ձևները որբաներին էին դրել կաննել , նրանց էլ հրամայեց , իրան աջ ու ձախ կորմը շարուեցին : — Հայը սուրբ ջան , ձէն տուուց Գարեղինը , խնդրեմ մի լաւ ուրախութիւն ամեք , մաստաղի էրի մորթին ու ձեր բաժին մատաղն էլ հիմի կըլլրեմ , ինչ որ ձեր պարտքն ա' էն էլ աչքին վրայ : — Օրհնեալ լինիք որդին , Աստուած ձ' բ հաւասան օրհնի , զուք մնազ սցուպէս պատիւ կանէք , մննք էլ պարտաւոր մննք ձեր համար զիշէրը արթուն մնազ , հակել , սարմու ասել , ձեզ կենանք ու արևշտառութիւն խնդրել , մեր ձեռքիցն էլ այս կըլլայ : — Այն , ճշմարիս է , ասեց էն զընիցը մննծ տէրտէրը . հայր սուրբս միշտ ձեզ համար աղօթք կանէ , — իրան է , իրան , ձէն տուին մէկէլ տէրտէրն ու տիրացուերը : — Հայը սուրբ ջան , խնդրենք մի քիչ մնազ անկաջ կայնէք , ասեց Գարեղինը . էս մաստաղը արել ա մեր Սօմը . խնդրեմ մի մին թառ դինի խմէք ու առէք Աստուած Սօմի սրար մորաղը կամարի , մէկ էլ արգաթքներն էլ

զու պիտես : — Եցրու Սօս ջան թառը , ասեց հայր սուրբը , մի լաւ օրհնեմ . առառ ձևոն ու ասեց , օրհնեցք տեարք , կենդանութիւն , Աօս , զօրանաս , խնդրեմ լոմ անարժան բերանովը Սուրբ Յովհաննէս Մկրտչին , որ քո սրտի բաղանքը կատարի , քեզ երկար կեանք տայ , կարմիրդ կապենք , որին քո միտք կը բարձնանի , այն քեզ բարդ լինի . Գարեղին , Աստուած օրհնեցէ , Աստուած աւելի չորսնք տայ , Աստուած քո աշխատանքը , որ մօր երեխայից հանար անուում ես , ի փառսիւրում ընկացի , բարեւ արժանի լինիս հրեշտակական կարգին , շուտ մեր հօսին խառնուխ . որդիք օրհնեալ լինիք , (միաներին է ասում) Աստուած ձեզ սիրով , եղբայրութեամբ պահեցէ , Աստուած ձեզ էլ ձեր ցանկութեանցը հասուցէ . Տէր Աստուած էլ մեր Հայոց աղղին այցելութիւն արացիք , իր քաղցր խնամոց տակ պահպանեցէ և որքան էլ այսօր ուխտաւորք կային մեծից մինչև փոքրն ամէնի խընդիրն էլ ինքը կատարեցէ Սուրբ Յովհաննէս Մկրտչի բարեկիուութեամբը . Տէր Աստուած քեզ փառք . Հէնց օրհնեց հայր սուրբը ուղում էր վայելի , մենծ տէրտէրը Գարեղին ասեց , թէ հայր սուրբիս թամբ վրայ մի տաղ ասան : — Աչքիս վրայ , ասեց Գարեղինը , էս սնաթիս , երեխութքը իրար հետ հանչեց . Էկէք հայր սուրբի թամբ վրայ մի տաղ ասեցք , ևս էլ շարականը կասմամ . երեխութքը իրար հետ հենց ձէն ձէնի տալով ասեցին « Հայրենասէրք Արամիան , տաղը , որ ամէնի սիրտն էլ փառաւորուց . յետոյ Գարեղինն էլ հայր սուրբի անուանովը մի շարական վրայ թիրուց , որ յետոյ հայր սուրբը չնորհակալութիւն արուց վարժապահիցն ու աշակերտիցն ու անուշ սրբոց :

Հաց տակուց որ պըրծան , սեղանը փաած թաղին ու վեր կացան , հացն օրհնեցին ու հէնց տղում էին զնան , Գարեղինը ջոկ ջոկ դրանց ժամանցն էլ տուուց , նշխարք առաւ :

Հէնց որ Նրանք չնորհակալութիւն անելով վնացին , նստացին ինչքան տղէք կտիյին ու ուրախութիւնը սարքեցին . կնանիքն էլ էն զիհքը սեղան փռեցին ուռի ծառերի տակին ու ունց որ իրանց օրէնքն ա , հարս ու աղջիէքը ջոկ , իրանք ջոկ նստառեցին : Գարեղինն էս երկու մեղանն էլ հէնց կառաւարեց , որ ամէնն էլ չնորհակալ էլան . լցրուց մի թառ զինի , առաջ ինքը չնորհակալութիւն արուց խմեց , յետոյ տարաւ վարդիթերի մօրը , խնամի , ասեց , թէ ինձ կըսիրեմ , թէ էղ քու կողքիդերի նոտած աղջկանը կըսիրեմ , էս թառը խմի , ասան , ով Սուրբ Կարապետ , դու առք ջրին հով ջուր չածես , մոտիկ սրակը իրարից չի ջոկես , բարի խորհուրդը կատարես , ուրիշի աչքն էլ մեր դրանը չի թողաս . Աստանի յեափ առն էր պառաւը , էն սճաթը համկացաւ , համա ինչ , ամանչեց , որ խօսքը կոսրի , առաւ ձևոք թան ու ինչ որ նա առել էր , մի մին ասեց ու հէնց տղում էր խմի , կուը բանեց

Գարեղինը , դիր գետին թասդ առեց , թասիդ վրա մի խաղ առնելը
նոր խմբ . թագուց կնանոնցն ընտեղ , զնաց տղեքանց կուշտը . միա-
ւար ջուհակի պէս հրնած էր առում , զնում էր ընտեղ , դայի ըստեղ .
Սօսին կանոնացրուց ու առեց , ասա էն մատխամբաղը , որ մին օր խոս
հնձելսա շինել ես : Սօսը , դորի ա , որդութիւնն էր տռել , համա Գա-
րեղինի խօսքն ու վարդիթիրի սէրը սուրբ էր համարում , ընդուր հա-
մար մեղք չի կարծեց ասիլը . վեր կացաւ անդիցը կանեց , ոնց որ
մի շիշակ խնձորի ծառ , որ մանր անկոնց միջին դառ Ասծ լինի . և
ընը յետ դարձրուց դուս կնանիկն ու առեց էս մատխամբաղը :

Խնձ էրում ա էն սէրը , որ գիշեր ցերեկ վառ ա ,
Լիրդ ու թոքո խաշում ա , վայ , ես արտարի դառայ .
Աստուած սիրողք , ջուր ածէք , էս սէրն էլու խմ մանը ,
Աիրեկանիս անունը խնձ արեց փարաց փարաց (կառը կառ) ,
Մեռնիմ էն աչք ու ունքին , որ ծխած սն ա ու արեւ ,
Մեռնիմ էն անուշ լեզտին , որ տեսնելիս տայ բարեւ .
Մեռնիմ խուճում մազերին՝ ընչանք ծունկը կախ ընկած ,
Ով որ տեսնի չարմանայ , նրա սիրուր լու քար ա ,
Թշերի ծէրը վարդ ա , պռօչները շարմաղ են ,
Սատափի պէս սատաները մարդի հոգին կը քաղեն ,
Պատիկ կարդին բերանը , կաքաւակառուց չանէն ,
Փափուկ մախմուր բօխախը դոյ բարձի հաւասար ա ,
Շիշակ անկու հասակով , սիրամարդի տեսքովը ,
Բամբակի պէս կոնկրով , նայզանմաշ գեացքովը
Ակաս քաշեց իրան մօս , խելքս առաւ զլօխց ,
Ասեց մին օր կոտանաս նեղութիւնիդ փոխարայ ,
❖ Քանա երկու տարումն եմ , քանը շուտ անց կացաւ ,
Էս երկուաը հէնց զիտեմ , երկու հարրից աւելցաւ .
Սև մազերիս մի խարուէք , սև սրախ մափկ արէք ,
Սօսի դարդն ես դու աղջիկ , խնձ մի դեղ ու ճար արաւ :

Սօսը մոխամբաղն ա սասմ , Գարեղինն էլ դարձ դալը : Բաղչի պա-
տերը էլ յետ լցուեցին , թամաշաւորները իրար զլուխ են պատում :
Սօսը որ սասում չի ու մի մին էլ հետք ժմտում , աչքերը քցելով իրան
կեանք առուղ արեի երեսին , ուրիշի սիրան ա վրէն զնում . քեզ ուրբր
ու արեւ ըլի Գարեղին , առում են , որ մեր սիրուր ուրախացրիր :
Աստուած Սօսին էլ աւելի շնորհք տայ :

Համա մի չենք հարցնում , թէ խալխի սիրուր որ էսքան ա ուրախա-
ցել , հիմի տունը մերը , խօսքը մերը , բաս նա և ա , որ Սօսի ձէ-
նի միաստուղը (մազնիս) զնացել ա կակլ նրա սրտին ու քաշում դո-
ռուով , որ բերի կողցնի իրան . չէ որ էս մեր էրտած ու կրակուած վար
դիմերն ա . համա ինչ անի խեղճը , ուր կապած ա . մէրը վախու

վախտ աչքի տակովը հէնց խեթը մամկ ա տալի , որ աւելն ու տեղը հալուսմ ա , թէ չէ նա ընտեղ իր սրափի վաստաքը կը հաներ . բնչ պափ մնէր , մեր առաթումը կոյ ոչ , որ մի մենծ ինիկ արմատ , ևս մի տղայ մարդ երած տևողը աղջկայ պոչը պոչին դայ . թէ քաղքի (Թիֆ-Ալի) պէս ընէր , որ ասում են , ինանիքը մարդկանց հետ դրից են անում , աղջկեքն էլ խաղաղուս տղէքանց կուռը բռնում են և աղում , ում որ սրաներն ուղում ա , ևս դժում թէ էն վախտը արեր որտեղ մէր կրմանէր . համա նրանց մնուեն իրանց տևողն են թաղում , մերն ըստեղ : Չէ , վազի առակը չընի , Սօսի խաղը Վարդիթերի մօր ճռանիրն էլ ընկառ . Հինց որ ասեց պրծու , պատաւը անդիցը կաննեց ու Սօսին ձեռով արուց . Ձևոը ժամ տախն ու Սօսը առաջին կաննիւը մին էլաւ : — Որդի ջան , ասեց , աղբիւրդ անհասանելի , ոնց որ մեր սիրտը դու ուրախացրիր , Աստուած էլ քու սիրտն ուրախացնի , քու ձամիկին փունչ մանիշակ բռնի , Աստուած քեզ քու մօրը բաշիք , քու մորազը Սուրբ Կարապիմուը ինքը կատարի , տչքդ ինչ բանի որ ընկած ա , էն քեզ դամաթ ընի . բաց առնի , ոչ ամանչնիմ , քու սրտինը խմ աղջիկն ա , որ երկու տարիւ աչքիդ տամին ևս առեկ , քեզ դամաթ ընի . տղջնի վեր կաց կաննի , երիսդ դէմն արա , դրուխորդ բարձր բռնի , ին նստոտած տղէքը , էս խալիսը բոլոր մաթ են մնացել , Գարեգնի սաները տեղիցը կարուել են , Սօսը քիչ ա մնացել խեթը կարցնի , Վարդիթերը հէնց դիսի երազումն ա : — Ճաւանում ևս , ասեց սրան սպառաւը , լսու վաս , էս ա . տես չի փոշիմանիս , էլ չսանես , թէ սարարի որդին միոնիի , տանում ես : — Կաց , կաց , ինամի , ասեց Գարեգնը յատաջ դպով , մննք նոր չննք ճանանչում , նոր չննք հաւանել , զու լսու դիսես , որ քրնի մարդ էլ դրկել ենք , չէք տուել . հիմի որ տուիր , դրա սարարն էլ ևս եմ , միջի մարդն էլ , թող ինձ ուշունց տան էրկուն էլ , ինչ մնեք ըլի խմ շնոքն . ասեց ու մի մին թաս դիմի խմեցէք տղէք ջան , ձէն տուոց , Աստուած Հքնորհաւոր անի , բարեկամաց տչքը լիս ըլի . ինամի , աչքդ լիս , քեռակին (Սօսի մօրն է ասում) աչքդ լիս . Ոս ջան , Աստուած աղօթքդ լսեց : Ռուայ , ձէն տուին ամէնն ու մի մին թաս դիմի խմեցին . մի հէնց դարմադալ ու ուրախութիւն ա վեր կացել , որ կասես Գարսն առան : — Ուզում եմ մի նոր բան ամիլ , ասեց Գարեգնը , տաէք ոչ : Նոր հաւեր են զուս էկել , էրկաթէ ձուեր ևս ածում , . ևս ասում եմ , որ մեր նշանը մի պոչափ ընի . բնչ ևս ասում խընամի ջան : — Կաւ կընի , ասեց պառաւը , հիմիկեց դէնը փափն էլ ու ձիոխդ բաղանիքն էլ , ինչ կողես , արա . արի աղջիկ , արի Գարե-

դիմն ինչ կասի , անկաջ արմ : Աղջիկը ուրախութիւնիցը մնացել ականած , ամանչելոցը Մայսի վարդ աղառել , չի խանում ինչ անի , կանիցը բռնեց Գարեգինը , բերոց մօտ , թէ պոօշտի արէք . Տղբ Աստուած , էլ ումնում ու հալ մնացել . Սուր՝ որ էսքան էրուած էր , մոքովը չէր անցկացել , թէ ըսէնց օր կըտեսնի , ինքն ին դիմն աղուխը քաշ քցել , Վարդիթերն էն . ուզում են , որ մի արած յառաջ համեն իրանց մուրազին , համա ինչքան ընի , բարձրութիւն ակիտուած . վերջը շատ որ էս գհիցն , ին գհիցը ձին տուին , թէ Արտուած շնորհաւոր անի , պոօշտի արէք , ձեռները քցեցին իրար ճառվ ու պոօշտի արին , էլ չէն կարում բաց թողալ . աղին վախում էր , թէ աղջիկը չի թիւանայ , վեր ընկնի , աղջիկը վախում էր , թէ աղի խելքը չի գնայ , գնանումը զիազի : Վերջը իրար բաց թողին ու զիմները քաշ քցած մնացին : Անուշ , ձին տուին ամենքը . յետոյ Գարեգինը բռնեց Վարդիթերի ճակատը պաշեց , թէ ըստոց յետոյ խմ հարմն ես , զնա կէսօրդ ձեռն էլ պաչի , ամէնին էլ զլուխ տուր . Սոս ջան , զու էլ արի մի պոօշտի անենք , զնա զանքաչիդ նիծը պաչի :

— Զանը վերջացաւ , ասեց պատաւը . համա խօսքներս խօսք ըլի . որ ընչանք աշունքը մեր դուռը մէուլ չի դայ . միքանիքը քաղենք , քաղցուահան ըլինք , տչնան Մողնու ուխան անց կէնայ , Ակէք նըշան բերէք . թէ չէ , կարմիր կուլ եմ , մին էլ տեսար կաթս շուռ տուի , կոմիթեր կոտրեցի : — Եատ լաւ , ասեց Գարեգինը , թող քու տասձն ընի , ընչանք քու տասձ վախուր մի ամիս ու կէս անձախ ամում , եղ էլ կը համբերմնք : Սօսը զնաց Վարդիթերի մօր ծիծը պաշեց , նու էլ նրա թուշը պաշեց ու հացը վեր քաղեցին :

Տղբ , պատրաստումցէք , թօռը վեր ունինք զնանք ձորը , մի լաւ վարդիւր անենք , էս ինչ ա , ոչ թաց ենք էկել , ոչ իրար ջոր ենք շաղ տուել , կասիս վարդիւր չընի , հացից յետոյ ասեց Գարեգինը : Նանի , պրծէք , դուք էլ զնացէք , մենք պատի էրթանք ձորը , ձուկը բռնենք , քէֆ անենք , խնամուն լաւ սրատի տալով տար , հին բարեկամութիւններս նորացաւ , ին էր վեր էմն քաղում , որ մի որիշ գեղըցի կնիւլ էկաւ էդ բաղչէն , զնաց Գարեգինն զրադ քաշեց ու հարցրուց Սօսի համար , թէ էս էն աղին չի . որ իրիկունը ժամումը նստած խաղ էր կանչում : — Հրամէնիքը ասեց , ինչ ա որ : — Աս ուզում եմ իմ աղջիկը տալ դրան , իրիկուանից դէսը քանի տեսել եմ , սիրտս կըսպել ա , կարաս դրան մի խօսք համելացրն՝ քեզ մի լաւ խարած կըստամ , իրան էլ լաւ բոմինք . ես Յուշակնեցի Մելիք Ատոմի կնիկն եմ , հէնց բարի ու բարխանայ կըդնեմ , որ ձեր գեղումը զեռ տեսնուած չըլի . Փառք Աստրծու , ինչս ա պակաս , երկու երկու բազ ասես , թէ քաման , քամուուհինդ օրավար հողս ասես , թէ ջուխտ զութանս , ինչ ասես , որ խմ տանուի ոչ : — Նանի ջան , ասեց Գարեգինը ,

էս տղին խմ աղպէրս աւ, ընչամնք հիմի աղասոյ էր, համա էս օր ըստեղ նշան զրինք, Աշտուած մինը զամաթ էր արել, որ էլաւ պրծաւ, խեղճ կնիքը որ բաց ոչ, մաստակը ցեխն ընկաւ, անխօս յետ դառաւ, հաւ էն գնապն ա, ինչ գնացել ա,

Սուրբ Կարապետու Ծխառաւորները քաշուեցին . մնացին մի քանի բազգում ջանել Աշտարակցի տղէք, որ դափ ու դռընոյ ածելով քէփ էին անուած, Արանք էլ իրանց պատրաստութիւններովը վեր կացան, կանաց կամաց գնացին ձորը, շորահան էլան ու կամահանի ընկան զետի մէջը, որն էլ չի ուղարմ շորերը թրչի, ջուր են չազ սապի, թէ վարդի որ ա, իրար հէնց օրը քցեցին, որ տմուկուեցին, ծնած կոյ զառան, ջուրը ծծլարով ամէնքի փեշերիցն էլ շուռում էր, Կեղանապուց որ պըրծան, իրանց թուզին առան ու ընկան ձիների ջանին, քցած թօռը որ զարմում չի, կարմախէտ ա, որ դուս ա զալի, Արանք թօռ քցելով պըրտի գնան ընչամնք Աշտարակ ու նոր ընտեղ դուս զան, զնան միքանուցումը մի բաւ քէփ աննեն,

Գարեգինը հէնց ուղարմէր իրանց իմիջանոնցը ճամփու քցի, որ իրանք էլ զնան ձորը, մին էլ մի տարարագութիւն պատահեց, Անուշը հիւանդացաւ, արեր զլուխը տուել ա, խարիսուխ էլած պինչերին, ծուխն էր մըհանայ ա . ուրախութիւնը փոխուեց ախրութիւն, ձորն էլ մտքներիցն ընկաւ, ամէն բանն էլ, մէրը հօ սե սրտել ա, կա թօռումը քօնման մնացին նատած, փուշները թոյին . Գարեգինը սաքի մի քիչ բարկացաւ, որ բաղրի որկի տուն, համա տեսաւ, որ չէ, աղջկայ ուանգը զառաւ պատի ծէփ, աղպէբախնք, ասեց հընկերներին, զուք ինձ մի մնաք, զընացէք ձորը ձուկը կալէք, իմ դալը փաստ անց կացաւ, Տղէքը գնացին որաները կոտրած, Սուր մէնակ մնաց իր ողջում աղպօր նեղ վախսալ իրան պէտքական, Կնանիքը որը ատլով ա աղօթում, արշտուազով ասում նիաթ ա դիպել, որը մի կար հաց ու աղով, որը քարով, համա ոչ մինի աղօթքն էլ կէս սե փողի չանց կացաւ, Գարեգինը զնաց, որ ժամարարին բերի, զլիխն մի թժշկութեան աւեստարան կարդալ տայ, Նըրբա քօռ բաղդիցն էլ ժամարարը քշերս անքուն աղօթք էր արել, սազմոս քաղել, թէնք էր ընկել, որ մի քիչ հանգստանայ : Զարէն կըտքեց, գնաց մննծ տէքաէրի մօտ . վաստաւորի ինքը, էն սհաթը մաշտացը դրաց կրնատակն ու հասաւ թութունը քաշելով (*), Աղջկանը թէք էին քցել կամանչ խոտի վրայ՝ զլուխը մօր ծնկանը դրած, որ աէքաէրը վրայ հասաւ, աւմտարանը կարդաց, վարդաւեն ասեց, մի քանի սե փող խէնակութ առաւ ու Աշտուած առողջութիւն տայ ասելով դնաց :

(*) Զգիսեմ, թէ այս ինչ սովորութիւն է, որ ինչպէս մէր եկեղեցու սովորութ քարաջայ են հաղինում քահանայահանու համար, իսկոյն բուռնութու առափն էլ դրսաններն են դնում, իրեւ մի ումէնահար' աւոր բան քահանայութեան համար :

Դորիթ ա, ասենք թէ, տէրտէրը հալիսոր էր կամ թնչ էր, աւետարբունը մի քիչ կղլդացրուց, համա կարգին հաստատ ընի, ձևոր թեթև էր, ցաւը բօշացու էն սհաթթը . վեր կտան երեխին դպա Աշտարակ, Գարեգինն ու Սօսն էլ հետեւը զրից տարով . Լման հասան Մազնի, Սուրբ Գէորգն էլ ուխտ արն ու վեր էկան Աշտարակ, Աշտարակ մի ասիլ, մի շնար (քաղաք) առամ, աչքր ինչ օփրի, կրտտնուի . Էն սհաթթը ինաւնիք էին էլի, քայախ բերին, թթու բերին, զրկեցին Յողակենց պատուն էկաւ, նրա ազօթքը քար կըճաքացնէր, ազօթեց ու ասեց, վախիկ մէք, աչք էր դիսպել, հէնց հիմի կտադանայ, դորիթ որ էն սհաթթը երեխին խտակ լաւացաւ . (ի հարկէ շոքն էր տուել)

Գարեգինն ու Սօսն զուս զնացին զեզամէջ առուի ավոր, թնչ տեսան . գեղի մննծ մննծ իշխանները, աղէքը, տանուտէրը, մի խօսքով ով որ ընտեղ կտին, հէնց օրն էին ընկել, որ էլ չի էլած . իրար ջուր են շաղ տալի, բրժում են քցում առուն . որն էլ վախսել հեռու պատի տակին նուսել ա, թաքուն բորով ջուր են զրկում կտրիցը շուռ տալի զլիսին . էլ ոչ աղայ են հարցնում, ոչ նօքար են ասում, քօննու էլ դառնել են իր քէֆին թուսս նաստոյ թրչուած հաւ, իս էրկոււն էին, որ չոր էին, չանավանքայ էին էկել, որանց համար էլ աղայ Սմբատը աչքով արուց, բորով քամակներիցը ջուրը զիլիներին ածեցին . շատ մարդիկ էլ դաստի իրանք էին գալի, որ թրչուին . Գիտնմ ոչ, բալքի թէ, տէրտէրները ազատ պրծննն էի խաղլցը . խմ խելքովը տէրտէր չի, որ թէկուզ դործակալն էլ որ զար էս տրախութիւնի վախտին, նրան էլ կըթթէին, ոչովի սիրտ չէր առնասիլ . վարդիսորին ա, ով կարայ խօսալ :

Էս ուրախութիւնը արին ընչանք ժամի վախտը, յետոյ ամէն մարդ զնաց իրանց տաւնը . որը ուրիշ շոր ունէր, փոխեց . որն էլ չունէր . հին գուրչ մուրչ հաքաւ ընչանք մէկէների չորանոցը, որ էքուց մնութցք ա, սրտի զնան գերեզմաններն օրնիկ տալու . Մեր Սօսի ու Գարեգնի հընկերներն էլ ձորիցը էկել էին, ձուկն էին բերել, նրանք էլ դընացին իրանց քէֆին :

ԺԷ .

Վարդիթերի մէրը չանավանքայ էկաւ տուն, մի քիչ կացաւ, քէֆը թռուց, խելքը զուխն Ալաւ, տրւծ բաները միան ընկան . մընացել ա մոլորած՝ ունքերը կախ ա քցել, մաքի հետ ընկել, զիսի, որ հիմի մարդը տուն կըզայ, հարսները տղէքանցը կասեն էղ բանը, հիմի իրան կրակը պատի դնեն էրեն . հէնց բան ա արել, որ Աշտարակ դեռ լսուած չի, սուսոնի (թովումն) տակն ա ընկել . մարդի քաջքերը տնսել ա, ոնց որ չալ օձը տեսնողը չալ չաթոսից կըլախին . . դոզում ա . համա թնչ, բանը բանիցն անց ա կացել . մոքումը զրուց, որ մարդին մի սամթով տոի, « արջն իր ահէն կըզոսայ է . . բալքի թէ մարդի սիրտը զոզա-

նայ . համա չեր զիտում , թէ ևս Աշտարակն ա , քու չորս պատի միջին որ կնազանդ հետ մի խորհուրդ անես , քորը վեր ունիս տակը դը-նես , դուս դաս , էս սհամբը դեղի էն ծերումը կը լաւա , ուր մնաց համի , որ աշխարհնքը էս օր Համավանք ա էլել , էն էլ կնամփեք : Պասն տեղ մարդին աշխալա խօսացին , թէ կնվեդ աղջկանդ նշան դրաց քաղքի թա-ւոր սկսօշտի անելով : Ոնց որ մի մարդ սպանի ճռուր սպանած ընի , սպանն էլ խմայած ընի էդ մարդի տեղը , բնչ որտով զրայ կը պրծնի նրանից ինադ հանելու , էն սրան Հեթումը աշքերն արթնը կոված , ա-տամները (հօ չունէր էլ) զրճասցնելով , դադանակը ձևախն դուռը ներք-ուն մտաւ ու դաւ կնիկը : Արշափին խօսցել էր էս բանն ու հնչ էն սհամբին տուն մտաւ , որ հերն ուզում ա ուռը դնի տան շնմքը . հօր աշ-քերիցն խօսցաւ , թէ ինչ կայ ու հարցրաց , թէ ուր ես տանում եղ վե-աը : — Թող , զոռաց Հեթումը , ևս հիմն նրան շհանց կասամ աղջկի նը-շան դնիցը , ասեց ու տուն ընկաւ , տղին էլ քամակիցը : Կնիկը վախու-թիւնիցը հնչ բակումն էր ձին առել , էկել դրան քամակին կամնել . մարդը որ տուն մտաւ , ինքը զուս թուաւ : — Աղջի , մերդ ուր ա , զո-ռաց հայսորը : — Զեր զիտում , զուխը քաշ քցած լացակիցնած պրն-չի տակին վնմթվնիթաց խնդր անմենդ կառը : — Գնան կանչի էս սհամբը , Աղջիկը զուս էլաւ : Հարմաներն էլ չարդախտումը պատին են կուի կամ-նել : — Ես դրան շհանց կը տամ , զուխը ժամ տալով բարկանալով ա-սեց հակեւորը տղին . թող մի տուն զայ , տեսնի , թէ աղջկի նշան դնիցը ինչ կը նախացնեմ իրան . զիտեն , որդի , ինչ ու արել . զնովացել ա , էն սպասնի խօսքիցը խափուել , մեզ խալիւի միջին թուք արել . նա էլ հօ աշխարհքում սպասնայ չընի , հերիք ա , մեղ հնչ օվին ա էկել , որ զբա մուխը մեր պնչցը զուս չի գալ : — Ի՞նչ ա արել , սաքի չի-մանալով , հարցրուց Արշափիը : — Բունել ու էս փշին նշան զրկ , սկսօ-տի անիլ տուել իր ձևույթը , էս Աստղծու լիաւունք ա . հնչ ասինք , ինչ զուխը քարունը էր տալի , տար . ով ա լուկ մեր պատերիցը , որ աղ-ջկի տղայ նշան դնելուս պրօշտի անեն : — Ծանց չի , այ հեր , ասեց Արշափիը , ևս լան խմայայ , զու ծունն ևս համաշել . ասել ա , թէ կա-ցեք ընչանք աշունք , թէ Աստուած զամաթ կանի , ձեզ կը լողել . չես խմանում , որ Աշտարակ լան ուղունն չինում . տուում ա ։ Խօսքի սուտը չի ընիլ , սիսալը կը լինի . . . մի վախիկ , ըսինց բան չի էկել : Ես տակուս մնի հարաք չարգաղիցը լանց , վաղեց կեսօրն ասեց , թէ որ հարցնի , զու էլ ըսինց ասա , Արշափիը բանը փոխեց : Պառաւը հնչ խօսցաւ , սաքի թէ բահից խարար չի , աղջկայ կանչելով ա դալի , տուն մտաւ . — ո-դորմի Աստուած , ինչ ա այ մարդ , ընից ևս ըսինց վրադ վրադ կանչել , ես էլ էն ա զալիս էի . անաշնի մմրդ , էսօր տևել չես , սիրող պատ-ռում ա . հալրաբ ըսինց սրբի , ևս ու զուն ենք իրար հարկաւոր , ինչ

ևս ասում : — Կրակլ ու բոց ևմ ասում քիզ, բարկանալով ասեց հայեա-
ռոք. էսքան վախտ որտեղ էիր կօրել : — Այց զարմանալով ասեց էր-
նիկը. լաւ, էլ խի ևս բարկանամ : Հացից յևսի վիր կացանք, Առջու-
խտչի տակին էլ մի քիչ զնջացանք, հովին ընկաւ էկանք : — Էս ինչ
բաներ ևմ ասում, մի քիչ ձենք ցածացրոց հայեարք . քիզ ովլ էր ա-
սում, իմ աղջկանը Դշման զնես, խօսք բաց անես առանց ինձ : — Ը-
ստոք համար ևս նօիթերդ կիսել, մասիսարածիծ աղ տալով ասեց կնիկը,
քու տանն Աստուած Ձինի, ևս ևմ ասում, ինչ ասում. հայ, տայինք ոչ,
առանք ոչ, աղոյ էր, մեզ մասազի վրայ զօնազ էր արել, խնձոք ըն-
կու, ասեցի, թէ Աստուած զամաթ կանի, աշտմաքը քեղ կրամնք, հիմի
որս համար ինչ ևս բարկւանում, քու խերդ շատ ըլի, ըմի հավույս
(համբարութիւն) չունիս . կաց, զու որ ասել չեիր, ևս զալ չի պաէի
քիզ պատմիլ, քանի հետ զու ասել կըլիս էս խօսքը, մին օր էլ ևս ա-
սում, էլ ինչ կայ, Զէ, չէ, ասեց մայրը. լսել ևմ, որ նշան ևս զրել,
պրօշտի ևս անիլ տուել, կատարդ տաքացրել ևս, չևս խմացի ինչ ևս
ասում : — Այց մարդ, ունքերը վրայ տալով, զարմանալով ասեց պա-
ռառք. չեմ զիստամ, քիզ ևն ծուռը համկացրել, թէ ինձ ևս ուղում ան-
խելքացնիլ . խելքու հացի հետ էլ կերել, որ ևս էղ բանն անեմ, ես չեմ
խմանում, թէ որ մի ասար բարեկսմ ունինք, մի քամն էլ թշնամի կու-
նենանք . ևս թէ չէ, ով ա թել Աչտարակ աղջն աղջկայ հետ որոշուի
անել տան, ևս նոր օրենք էլ չի չնենամ . ևս որ ասի, թէ կինանք ա-
շունքը, Գարեգինը մեր կալաւ, Սոս ջան, որ բանց ա, արի մի պրօշ-
տի անհետք իբար հետ, որ Աստուած մեր բանն յաջողի . մինակ ևս հօ
չի, հաղար հոգի կար ընաել վասք Աստուծոյ . Նախ, Նախ, Աս-
տուած բալքի քեր մի խելք տայ, որ սմէն բանը սուս սուս լսես ոչ,
զոս մեղ դինդինի խաղացնես . էղ էլ դուռառ ոչ էն, որ ասում էիր,
առքի թէ ևս մեր թէլլուարի աղջկե վախտը Վահանի ձևուով մի աղ-
լուխ զրկած ընմամ, (թէպէտ ճշմարբոտ է այդ), բաս ինչի չի դրել . ա-
րի, արի մաստադ թիրեմ կերեք, մի մին թան էլ խաչալուաց իմացեք,
Մարզի տամարը կակցեց . կնիկը հնց բաներ ասեց, որ թէ կուզ իր
աչքովն էլ տեսած ընելը, բաժին տեղի կատարար . նոսացրոց մար-
դին, մատազ բերուց, զինի բերուց, դրոց մարդի ու աղի առաջն ու ինչն
էլ կշանելքն նատեց, պիզ բիզի անելով հնց արխէն ջջեց, դրուեր կը-
լեկց մարդի, որ իր բերնովն ասեց, թէ հիմի տղիս էլ որ ասի, աւտար
չնմ, խացայ, որ Աշտարակցանց բերնումը ճշմարտութիւն վայ : Համա
չէ, սուսը կը ունաւարի, համա չի զնալ, մին օր կը պատուի :

Հացի վրա նատած էին, դեռ Հեթումի սրախ փուքը նոր էր նատել,
որ մենած տղին տուն մասաւ — Բարբի թիկուն, նանի, ոխոսդ ընդանիի ը-
մի, ասեց, էս ինչ ևն ասում, բլրուանդիր (շտնկարծ) դուս կաննեցիր,
աղջկանդ նշան ևս դրել պրօշտի անելով, էղ խելի քերնից չի . վեսն

Արբ պատի տուն բերենք : — Ես չեմ ասում, որ սուտ չի ընկլ, ասեց Հեռ թումը, ևս ասում եմ, պահնք ինձ քարով քարկոծում են, քեզ ով ասեց որդի : — Ո՞վ պատի ատի, ասեց աղջն, զուս էլքը դուռը, ամէն անդ էդ են խոսում, զեղը դամբրդմբաւմ, Աշաբարսկ թաքուն բան կը մայ, — Բ՞հ, հոդս դրանց ասուասոյ զլիսին, ասեց պառաւը, թող էնքան հաշան, հոգիները զուս գայ . քայ խիզան, էս ինչ կրակ ա, ամօթ չունին ըստոնք, ինչ բերսններիցը դուռ ա գալի, քցում են . փառք Աստրծու, ոչ ով չի մնուել, երևս երևնի կը լինք, ինչ վախտն ինչ կաննն : — Ես չեմ դիտում, ասեց աղջն, տասը մարդ աշքայիս խօսաց ինձ, ես էլ ամանչեղոցս առուալ էի, աչքներդ լիսի կենայ :

— Պառաւը էնքան արուց, որ աղեքանց սիրան էլ զողացաւ, մտքները ծուց, լսածները սուտ հանեց, վիրջը, որ թեք ընկան քննելու ինքն ու մարդը մի տեղում, կամաց, կամաց խօսք բաց արուց : — Այ մարդ, ասեց, սաքի հինչ խմանանք, թէ մի կէս ս'աթ էլ տուինք . Սուր ինչ պակաս սղայ ա . փառք Աստրծու, երեկ մէկէլ օրը զու էիր մնացել արմացած նրա արած բանի վրա, սադ դեղն են խմացել նրա խելօքութիւնը, աշխատաւոր ասես, Սուր . սէր, սօնաթ անօդ ասես, Սուր . քալցր սղայ ասես, Սուր . քիչ չատ էլ մուլք ունին, էլ ինչն ա պակաս . սաքի որ ինչ էիր իրիկունս էնքան բարկացել իմ վրա . քու խելքդ, չմը խմանում, գայիս դնում ա, թէ ինչ ա . ևս չի ուզում, որ էդ բանն ուի, հիմի որ ասենք էրսւ, զու լույն ես նազ անում . ես թէ սրած էլ ըլլամ, քու խօսքովն ա, որ ամէն վախտ նրան զովում էիր . ես ուզում էի տալ բաղրաստի աղին, զու ասեցիր աղին վուչ ա . ուզիցի տալ նըռուանի աղաօր աղին, ասիր հօր աղաօր կնկայ արով ա մնացած . ուզում էի տալ Վաստակի աղին, զու ասիր դժատուաւ ա . զու ուզում ես տալ Գարեղնին, համա էդ բանը մուքիցդ հանի, նա քէր ցերեկ աշխատում ա Սոսի համար, ինքը մի անդամ քիր ա ամէլ միր աղջկանը, Սոսին էլ աղաէր . Գարեղնի սիրաը ընտով կարաս շահի, որ աղջիկդ տաս Սոսին, հիմի ինչ ես ասում, ին մարդը երկու տարի ա, որ մեր աղջկանը սիրել ա . որի նրա մեղքի տակն ընկնիս, զմուացընթս, թէ տալ սրտես : — Ո՞յ կնիկ, դիմ ես զու, ինչ ես, ասեց Հեթումը . մի վախտ կար, Սոսի անումը տալուս թուր ու թուանք էիր բանացընթս, հիմի զու ես տամարա մանկ, որ տամ . էս երեսում ա, որ ինչ ասում են զրուստ ա : — Դէ տեսնում ես, ասեց կնիկը, ես կակրիկ իմ, զու էլ բեր տանք . քիզ դրուասն ատամ, էն աղին հինչ որ Սուրը կարապիս տեսայ, վրէս մի տարստի էկաւ, կամսօ, թէ մինն ինձ ասող ըներ, թէ էս տղի մեղքը յաւուր դաստաստամին քեղնից պատ ուղեն . ես, սաքի Աստուածանից թաքուն չի, քեղնից ինչ պահնմ, խօսք եմ տումլ, որ ընշանք աշունք մարդ չի դրկեն, յիտոյ տանք . բալքի բարին էս էր, խնդա երեխի ճամփին քոր քցին էլ մեր հոգուն մերք ա,

— Համ ինձ ասաւ տեսնեմ, աղաստաման տուուց մարդը, պոռչտին դժորաստ ա, թէ ոչ : — Համ, ինչ ա, իմ աղջիկը խալիսի աղջկերանց պէտ հօ զեղըցաւար չի պատի նշան զնէի . պոռչտի էլ արին, Գարեգինն էլ ճակատը պաշնց, ևս էլ աղի թուշը պաշնցի, ամէն բանն էլ դրուտ ա : Վեց տղայ ունիս, իրեքը քու խօսքովն են պատկւել, ևս իրեքն էլ քեզ, էդ մի աղջիկն էլ ևս պատի մարդի տամ : աղին հօրն ա, աղջիկը մօրը : ևս իմ յօժար կամքովը տուի Սովոն, իմ մնողքիցը դուս Ալայ . համա էս էլ եմ հայի արել անկաջներումը, որ թէ ընչանք աշունք բանը ժամ են տուել, կըքանդիմ : — Փառք քեզ Աստուած, հոդից քաշելով ասեց Ճիթումը, ընդուր են ասել, թէ Աստուած աղասի կնկայ շատիցը . կնկայ էլմը Քէրմը (խորամանկութիւնը) մարդ չի խմանալ, ինչ ասեա, որ կընանիքը չանձն . ընչանք հիմի որտիս բարիացած վախտն էր, հանգարտացրուց . մաքում դրել էի, որ մի լաւ սապչարդ անեմ, ևս էլ փոշչիմանեցի, թէ ևս ինչ միտք էր . հիմի էլ ընչնը ա խօսում . ջանմ, զու զիսես քու աղջիկը, ևս բան չունիմ . ըստուց յիսոյ մնողքն էլ քու շլնքը, վարձքն էլ . խէր ու շառը քեզ . հիմի էքուց աչքալիս պատի դան, թէ չէ : — Չէ, ասեց ինիկը, նշանն աշունքը պատի ընի, հիմի մէնակ խօսք ենք տուել : — Դէ լաւ, լաւ, ինչ արել ևս, արել, Աստուած Հնորհաւոր անի, Աստուած էլուծն օրհնի, սուս կաց քնենք, ասեց մարդուն ու տադ արին քնիցին, որ էքուց վազ վնը իհնան, մնոլոցք ա, զնան զերեզմաններն օրհնի տալու :

ԺԹ.

Աստուածածնի աթոռ. (*) կիրակի օրն էր, հաւողները լաւ հասել էին . իծապտուկը, քիշմիշին, ամիարին, չաւուշարին, մոխալին, կոթուունչը, եղնաչքը, ճիլովը, եղանգարին, միկ խօսքով ինչքան ալուանն հաւորներ կան, թլթլում էին, մինակ խարչու հասողն ու հալաղին (խաղողների անուններն են) . դում մի քիչ թթուութիւն ունին իրանց միջին : Գարեգինը դիմէր, որ ևս օր ջրի հերթը Սոսնցն ա, վեր կացաւ զնաց զպա նրանց յիքին մի քիչ հաւող տուելու : Ճինց ուռուցովն անց էր իհնում, տեսաւ, որ իրաւ Փափակ աշերար, որ Վարդիթերի պատիկ աղպէրն էր, վաղէվաղ էկաւ քանակիցն ու թեր բոնց : — Ի՞նչ ևս ասում, յես մոտիկ տալով հարցրուց Գարեղինը : — Գիտես ինչ կայ, ասեց Փափակը, բանը փոխուց, ճար ունիւ անս . Արշակիր միտքը ընչանք հիմի թէ ծուռն ա էրել, թէ զուզ ա էրել ճեր հետ, չիմ խմանում, համա հիմի խմացուց . էրէկուանից դէսը հարիր հետ կոյւ ա քցել, թէ կամ թուրը վեր կունիմ ինձ կսպանեմ, կամ թէ չէ Սովոն աղջիկ չիմ տալ .

(*) Այսու տում են այն պատին, որ կամաւոր պահում են կանայքը Արդարավատի, Աստուածածնի և Սուրբ Խորի պահուց ապաջին շարաթը :

ևս պար տառմ Զարմայրի Աշմիածնեցի քաւորին . չեմ զիտում ինչ աղաս միտքը, որ Զարմայրի հետ բարեկամութիւն ա անում, ձեղ հօ լնա յայտնի ա . խողճ հերս, մէրս, աղպէրավինքո կամնել են մի դին, նաև հենց ասում ա, չի ընկի, կէրթամ Սոտին կապանեմ, ևս էլ հնար կը- կորչիմ ու նրան չեմ տող . հերս ինչքան ասեց, թէ այ փշանուս ոչ դու, խողճ ես . մի վախտ կար, զլիսներս ասանում եիր, թէ ասեք Սո- սին, հիմի ինչ դառաւ, որ մեղ ուզում ևս խայխի միջին զետինը կովիլ . էքուց աչքդ կըհանի, ամէն անզ կասի, թէ պուօշի եմ արել, տունն էլ զնացել, էկել եմ . դու չես գիտում, որ Աշտարակումը վաս բանը թէզ ա աշխարայ ընում : — Չէ ասում ա, ևս ինձ կապանեմ, թէ որ խմ խօսքը չի ընի : Հերս էլ բարկացաւ, թէ դու խմ աղջիկը ջահել ա, նրա հերն էլ օրհնուած՝ մէկել մէկոէլինն էլ, պար ըստոց յիշոյ իրեք տարի էլ պահեմ, թնդ ով ուզում ա, իննայ ընչանք կատարելութիւնին համիլը : Կա էլ ասեց, լաւ, կամ պար չի տաս էս տարի, կամ թէ չէ պար տաս խմ ասած աղին :

Գարեգինը, որ էս լեց, մասը կծեց . լաւ, ասեց Գավակինն, որ քը- ւորդ ասաւ արխէջին կինոց, էղ թաւոր բաները ուընչի անզ չի քցի, ևս խմ շառվումը կինուղ չեմ, ու ինքը հեռացաւ : Մի քիչ անզ առաջ դնաց ու յետ դառաւ դպաւ Վորդիթերենց դուռը, ծիծեց՝ Վահանը դուս Ակաւ : — Մի Արշաւիրին գուս կանչի, ասեց, բան ունիմ խօսալու : Վա- հանը զնաց, Արշաւիրն Ակաւ : — Զն բարով Գարեգին ջան, սիլի րիփ ա- նելով հարցուց . աջայ բաջայ, խըր ըլի : — Փառք Աստուծոյ խեր ա, ասեց Գարեգինը, քուչովն անց էի կինում, միաքս ընկար, դուս կանչի տոփի, մի քիչ զրից տանք : — Էս չեմ զիտում, ընչի ևս տիրած, հար- ցուց Արշաւիրը, ըսկի քեզանց չի : — Ոչինչ բան չկայ, ասեց, մեր արս- տիկ երեխին հիւանդ ա, քէփս փփս ա . համար քչիրս մի երազ եմ տի- սկը, Աստուծ խերը վրաց ըլիրի : — Երադադիթքը կարդացողի կշաբն կըլի բաց, անս էիր, ասեց Արշաւիրը . համար էիր թնդ ըլի, աւա ևես- նենք ինչ ես տեսել : — Այ ինչ, ասեց Գարեգինը . հիմի ես ու դան մի իլքու կանանչ ափում էինք, մի խաք խոնձորի չիւ կար մեր կշուն : Են շիք էն սհաթը ծաղինց, բար բանց ու դառաւ մի կարմիր խըն- ձոր . հենց անուշ հաս անէր, որ մեր քունք դայիս էր . Էս խնձորի հոտին հաւաքուեցին ինչքան մէր գիղումը մարդ կար, վայլցին անին մարդ որ քաղեն, մին էն էն դիքը մի հալիսոր սիստակ ըփալէս մարդ, զլուխը երկնքումը, տաները վեսնքումը ծանր ծանր գուս էկաւ, տեսնողը վշաքաղուց ու յետ քաշուց : Գալիս էր էղ մարդն ու ձին տոփի, ինչ որ ձերը չի, մօս մի էրթաք : Ակաւ կամնեց, երկար կուռը մեկ- նեց ու քաղից խնձորը, աչքերը դէս ու դէն քցեց, դու երեսայիր իրան, առ, ասեց, էս խնձորը ես քեզ եմ տալի, որ դու ում ուղինաս, նրան տաս : Մօս զնացիր, ձեռը ողաչեցիր ու առար . համա տաղուա ասեց :

թէ ինչ կամնս արա, վերջը վաշխաննես ոչ, Հնաց որ խնձորն ընկաւ քու ձևոր, ամէն մարդ էլ Եկան քեզ աղամշաք արին, որ իրանց տաս ։ Հեռու զնացէք, ասիր զու, ևս խնձորը առաջ ես ու Գարեգինն Ենք տեսել, սրանն ա։ յնայց ինձ կանչեցիր, թէ արի առ, ևս էլ հնաց շընորհակալութիւն արի ձևորից առաջ, մի սփառակ չիթ մինթանաւոր (զերիայ) հարսը, աչքերը զեղ դրած, ձականը բաց, բասուր լնաւր զէն քցելով, Եկան քեզ առաց, թէ առ ինձ տուր, զրկիլ պանմէ Ելութեածին իմ քաւորին զատկաւիայ։ Դու առաջ ասիր, թէ ես մի հետ սրան ևս տուել, թաղ դ ու Ելր թէզ Եկան, համաց չնայ խմանում մէջ տեղըն ինչ անց կացաւ, հնաց խմանում եմ, թէ հարսը քեզ աչքով տեսնքով կաշառք խոստացաւ, Եկան, որ ձևորցս խլես, տաս նրան . մէջներս մի կուի ընկաւ, ձևորցս խնձորը թռուս, հավլսորը բռնաց ու մինք իրար բռնած՝ դարձնեցի, էլ չնմ խմանում, ինչ Ելաւ։ — Արատած բարին կատարի, ասեց Արշաւիրը . բաց ես քնել։ — Ինչ ուզում ա թող ընի, ասեց Գարեգինը, համաց քեզ ասեմ, Արշաւիր, որ մեր մէջը կուի պըտի ընկնի . ևս Եֆէմիլուսուն մամիկ տուի, ասեց . կրազը քառասուն օրըն կատարի, տեսնենք ինչ պոի ընկն. զէ մնաս բարին, ես Եկել էի, որ քեղ էս երազը պատմնում ու զնամ . ասեց ու հնուացաւ։ Վնում առ ասմին միտոք անուամ. թէ Սոսին ասեմ, վայցէն միրար կոտրի, ասմէ լայ զէր բերի . թէ չասեմ, վայ թէ ըստոց յնայց միրամկանի պէս վարուի նրանց հետ, ինչ անեմ։ Ըսէնց միտոք անկով զնաց զպա Սոսինց յիշին ու դեռ չէր հատել, տեսաւ որ Սոսը բահն ուովին, կտառաները կտրելով զալիս ա։ հնաց որ իրան տեսաւ, մի քաղցր ժմտալով մտիլ տուուց ու Եկան զպա իրան . — Բարի լիո քեղ, ասեց Գարեգինը, քը շերս ինչքան ես ջրել . — Ներքի ածերը պրծել ենք, ասեց Սոսը, էս յիքին էլ հմի կողմէնեմ, Արտղիթիրենց ածերիցն Ելմի տախտակ ջրել եմ իրանը տանը քնած։ — Այս, ասեց Գարեգինը, ընչի չևս զու քու երեխութիւնը թողում . քեզ ով էր ասում, որ նրանց միքին ջուր արա, թող ինչ ուզում ա, ընի . ես քեզ ասում եմ, որ էլ ըստոց յնայց ըտէց երեխայ երեխայ բաներ չըսնեմ . — Քեզ մի բան ես ասում, Գարեգին ջան, ասեց Սոսը, ամէն վախտ վարդիւորիցն առաջ Արշաւիրը ինձ որ տեսնում էր, հետո ինդում, ծիծազում էր . հմի էս քանի հետ ա տեսել ա, երեխա մամիկ չի տուել, բասում մի բան պոի ընի, ինչ ես ասում զու . — Կհարկ է, ըտէնց պոի ընի, ասեց Գարեգինը, առաջ քեզ հետ ապաէր ապի պէս էր վեր ու նիստ անուամ, հմի մարդը միլլպամ (աններձագ) ա, պատիւը ծանրացել ա, զու սրտի ըստոց յնայց նրա հետ համարձակ չըսնեմ . հերը հօ որտեղ կաննած ընի, զու բաց սրտի թողաս, ընակալոնց քաշունս . նրանց տան յնտին երեխին էլ սրտի պատմու տաս . համատ թէ ինձ կըսիս, ընչանք աշունքը նշան զընկը նրանց ոչ մընի հետ չևս խօսակ, տեսնելում աչքերդ զեախինը կըքը-

ցես, կըքաշունս, սաքի թէ չես խմացել . մէրը ինձ տհսաւ, խնդրեց, որ
քեզ ասեմ ըստէնց անես, խալխի բերանը խօսալու բան չտաս :

Գարեղինը, դպրթ ա, Ասոի զիխաստակը բարձ դրուց, քնացրուց, հա-
մա ինքը մտքի հետն ընկած՝ մի քիչ հաւող քաղից, աղլամի մէջը լրց-
րուց ու յետ դառաւ տուն . էլ ընդուց յետոյ թողած իրա բան ու գոր-
ծը, ուշ ու միտքը քցի եր Ասոի զարդը հոգս անելու . ընչունքի մի
հետ շինքն էր առել, սփակ զլուխ տանէր . « Ուզար նինողը կուղէ կուղ
ման չի դալ . . . էլ ըստուց յետոյ ամօթ մամօթ վեր պատի դի : Հէնց
էկաւ տուն, հաւողը վեր դրուց, մին էլ Արշակը դրուը ծեծից ու
ասեց, որ դուս զայ, բան ա ասում, Գարեղինը դուս էկաւ ու իրար հետ
դրից անելով զպա ներքի զնացին : Երթանք մեր տունը, ասեց Արշա-
կը, մի քիչ բան ունիմ խօսալու, էլվախս պատի առէի, համա տիրած
էիր, խօսք չի բաց արի : Հէնց որ զնացին Արշակինց օթախը, ասեց
Արշակը, աղպէր, մննք ևս չորս պատի միջին մի բան պատի խօսանք,
ևս, զու մին էլ Ասուուած, ինչ որ բերաններիցու դուս զայ, ըստեղ պատի
քարը վեր կալած, քարի տակին դրած, որ էս ատնիցը դուս չերթայ .
— Թող քու ատածն ընի, ուսերը ժամ ատպավ ասեց Գարեղինը : — Ես
քնդ կանչեցի, ասեց Արշակը ընդուր . համար, որ խմ մէրս իրա բարի
յօժար կամքովը իր մենձացրած աղջկայ վրա էրք ա ունեցել, տուել ա ձեր
Ասուն . հիմի էն օրուանից դէսր մեր տունը արէն թրաշէն սանսում ա .
էն իրկունը քիչ մնաց, որ հէրս մօրս սովանում էր . ինչ զիջի բարով,
թալով, թուլով պրծացրել եմ . մնած աղպէրո կաննել ա, թէ ես մի օր
նրա համար մի զպա չիթ չիթ առել, որ ինձ էլ մի բան հարցնէիք . հէրս
հօ իրա առջիկն ա, ուղինայ թուրքի կըտայ . ևս մնացել եմ մէջ տեղը
կրակի միջին երուելով . թէ հօրս դինը պահեմ, մօրս վազն ա . անմահ
անզրող հէրս կսպանի . ճարս եւրել ա, մօրս դին ևս կաննել, թէ բաւ
ա արել տուել ա, աղջիկը մօրը կըհանի : Հիմի ևս քեզ ըստուր հա-
մար կանչեցի, որ մէրս յատուկ դրից քու մօրը, ասում էր խմ ձեռն ա
քու փէշը, ինձ աղպասի էս գերութիւնիցը . հէնց խմացի, թէ հօրդ մի
ժամ ես անսում . հիմի զու զիխանս, ինչ ջուրար ուղում ևս տօւր : — Գի-
տմա ինչ կայ, Արշակիր, խօսքը էլ կարաւմ եմ, ասեց Գարեղինը . ես ոչ
անսասում եմ, որ փէտի առաջն անես, որտեղ ուղես, ընտեղ արած ացը-
նես . ոչ երեխայ եմ, որ մի լօլով (պտուզ կամ ինչ ելոյ) տաս, խարիս .
զու բերանդ բաց արիր, ևս միտքդ համկացայ . ես խմանում եմ, որ քը-
չերուտնա երազը սուս չէր . առփզ հիմի ինչ ա, ասա պահկ մի : — Ա-
ման, վայ զիխան, սիրթնելով ասեց Արշակը . թէ սրանում սուս ըւ-
նի, իս երկու աչքիցս զարտակ նստիմ . զու հիմի կարծիք կանես,
թէ ես քեզ հետ գոներով ընիմ խօսում . ով որ երեսով ա խօսում,
երեսը շուռ անցնի . զու խմ սիրտը հօ լաւ զիխան .
Հէրիք, հէրիք, հոգուդ մեղք ա, օրթում մի ուսովի, ասան տիմնենք ինչ

